


Legheeeleangs

L. Z. Leeephreeggungkool zeeeeeggs



02 DEC 2011

91(075)

1909 Յանուար
ՀՀ ՅԵՆԴՐԱՆՈՒՐ ԴՐԱԽ

ԱՃԻԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

8/4

ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ


ԱՍԽԱ, ԱՓՐԻԿԱ, ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԱՒՏՏՐԱԼԻԱ

(5-րդ տարուայ ղասընթաց)

ՀԱՅ ԻԻԱՆՈՎԻ ԵՒ ԿՐՈՒԲԵՐԻ

Փոխադրեց

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆ



ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՅՏԱՆԱՐ ՏՊ. Օ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ ՊԸՀԻՑ. 7.

1908

ՓՈԽԱԴՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

ալ տարի մենք լոյս ընծայեցինք Աշխարհագրութեան դաւաջին, բնական, մասը—փոխազրելով գլխաւորապէս իւտուելումներ անելով կրուբերի գասագրքից: Մենք կազմել ու այդ գասագրքին նաև կովկասի համառօտ աշխարհագրուտագրքի այդ մասը պարունակում էր չորրորդ, մասամբ նաև յրուայ ուսման նիւթը: Եւ փորձը ցոյց տուեց, որ չենք սխալուրութեան ընտրութիւնը կատարելիս:

լոյս ենք ընծայում գասագրքի երկրորդ մասը—Ասիայի, Ամերիկայի և Աւստրալիայի աշխարհագրութիւնը, որ կազդ տարուայ (Բ. գասարանի) ուսման նիւթը: Այս մասը հստ ուղեցոյց ենք ընդունել մեզ համար իւանովի գասագիրքը: և յաւելումներ արել ենք Ա. կրուբերի, Ս. Գրիգորեի, Ս. Ս. Զեֆրանովի միացեալ աշխատանքով լոյս տեսած գաղուց լրացումներ էլ արել ենք՝ գերմանական դպրոցներում & Daniel-ի աշխարհագրութեան գասագրքի 82-րդ տպագրու-

փոխագրած գառագիրքը նպատակադրել է.—նախ՝ որ դասընթամանակալից գիտութեան համալատասխան, երկրորդ՝ բացատրութիւնը լինի պարզ և տրամարանական,—աշացնի այն պատճառական կապը, որ կայ աշխարհագրական երեսյթների մէջ—մակերեսոյթի կազմութեան և ոսոգման, բուսականութեան, բուսական և կենդանական աշխարհների, մնութեան և նրա ազգաբնակութեան կենցաղավարութեան և:

գպքի ծրագիրը հետեւան է.—նախ՝ ամեն մի աշխարհամասի ուռում է «ընդհանուր նկարագրութիւն», որ պարունակում է համասի վերաբերեալ ընդհանուր տեղեկութիւններ—նրանձութիւնը, ափերի գծագրութիւնը, կլիման, գետերը և ռականութիւնը, կենդանական աշխարհը, ազգաբնակութիւնը: ր նկարագրութիւնների» մէջ մի-մի զլուխ էլ յատկացրած աշխարհամասի հետազոտման պատմութեան, որ շատ է ուժ աշակերտներին:

Հանուր նկարագրութիւնից» յետոյ գալիս է ամեն մի աշխար-



6485-2011

համասի առանձին-առանձին երկրների նկարագրութիւնը։ Այս
պահպանում է այն որոշ, արամարտանական հետեղականութիւ
ասացինք «ընդհանուր նկարագրութեան» մասին։ Այսուղ զ
ուշաղրութիւնը գարձրուած է արդէն ազգաբնակութեան ։ զբա
և կենցաղավարութեան վրայ—ի հարկէ մանկական հասկացող
մատչելի չափով և եղանակով։ Եթէ ուսուցիչը աշակերտին լաւ
նել տայ այդ ծրագիրը, դասը կդիւրանայ։

Նոմենկատուրան կամ աշխարհագրական վայրերի անուա
գութիւնը դասագրքի այս՝ երկրորդ՝ մասում համեմատաբար աւ
է բնուած, քան առաջին մասում։ այս էլ արդէն անհրաժեշտ
արդինք է։ Սակայն աշխարհագրական անուններն էլ յիշատակ
ոչ թէ իրար յիշեկից, անկապ, իրը մի ցուցակ, այլ արամարտ
կապակցութեան մէջ՝ դասուանդման նիւթի բովանդակութեան խիան շատ մօտ է գտնուամ մնացած աշխարհամասերին։

Ժաւալին գալով՝ փոխադրողը աշխատել է աւելորդ մանրան
թիւնները մի կողմը թողնել, որոնք յաճախ խանգարուած են դար
ման կանոնաւոր ընթացքը։ Դասագրքի համառօտութիւնը մի պա
դասի դիւրութեան համար։ Համեմատաբար երկրորդական հաշված
թիւն ունեցող հատուածները տպագրուած են մանր տառերով գետը և կովկասեան լեռնաշղթան։
Ժամանակը սուզ լինի՝ ուսուցիչը կարող է կրճատել և չանցիքը իշեան միացած է Սուէզի պարանոցով։
հատուածները։

Դասագրքի այս մասում ևս մենք գետեղել ենք բազմութիւնը լիայի ի հետ Ասիան միացած է Մալայեան արշապելա-
դիւրացնուած ևս դասաւանդումը, դիտողականութիւն են տալիս նեղուցով, որի լայնութիւնն է մօտ 100 վերսա։ Զմեռը,
մանր քարածները, որոնք ցոյց են տալիս աշխարհամասերի մայդ նեղուցը ծածկուած է սառոյցով, Ասիան միանում է
առաջին տեղումների բաշխումը, բուսականութեան տարածումը, իկայի հետ կարծէ սառցէ կամուրջով։
Փոխադրողը յոյս ունի, որ դասագրքի այս մասն ևս կը բառայից։ Ասիայի արևմտեան ծայրից մինչև արևելեան
նկատողութիւնը, ինչպիսին առաջին մասը։ Արուելիք արմենական մասում, մօտ 11 հազար վերսա է,
ունակութեան խտութիւնը և մարդկային ցեղերի տարածումը։ Ասիան ամենամեծ աշխարհամասն է։ Նա 4^{1/2} անգամ մեծ
է բոնում է մօտաւորապէս 40 միլիոն քառակուսի վերսա
ածութիւն։

Ա. ԱԲ. հիւսիսից հարաւ՝ 8^{1/2} հազար վերսա։ Ասիայի մակերե-
ը բոնում է մօտաւորապէս 40 միլիոն քառակուսի վերսա
ածութիւն։

Ասիայի ամենահիւսիսային ծայրն է Չելիւակին հրուանգանը 78
ման հիւսիսային լայնութեան տակ, ամենանարաւային ծայրը՝
հրուանգանը 1 աստիճան հիւսիսային լայնութեան տակ, ամե-
նամտեան ծայրն է Բարա հրուանգանը 43 աստիճան արևելեան եր-
ութեան տակ, իսկ ամենանարաւելեան ծայրը՝ Գեմեն հրուանգանը 208
ման արևելեան երկայնութեան տակ։

ԱՍԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ԱՍԻԱՅԻ ԴԻԲՈՒՅԹԻ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, յունիս 1908

2. ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ասիայի ափերը շատ են կարտուած ծովերով և ծ
Արևելեան կողմից Ասիան ողողւում է Մեծ
դադ ովկիանոսով, որ գոյացնում է նրա ափերի մօւ
ծովեր. ինչպէս են՝ Բերինգիան, Ալյոնեան, Եսա
Գեղին, Արևելյան-Զինակեան և Հարաւահին-Զինակեան

Հարաւում Ասիան ողողւում է Հնդկական տու, սա ևս գոյացնում է ծովեր և մեծ ծոցեցից նշանաւոր են՝ Բենգալեան, Մարական, Պատերը և Կամբիր ծովք:

Արևմտեան կողմից Ասիայի ափերը ողոզու լանիան ովկիանոսի մասեր կազմող Սե և Միջ ծռպերը:

Հիւսիսում Ասիան ողողւում է Հյուսիսային ցեալ ովկիանոսով, որ գոյացնում է միայն մի ծով ծով:

Ասիայի ափերի շատ կտրտուելուց է, որ առաջ բազմաթիւ կղզիներ և թերակղզիներ, որոնք սին կազմում են Ասիայի մակերևոյթի ^{1/4} Ամենամեծ թերակղզիները գտնվում են հարաւում,

Արարիա, Հեղլազին, Հեղլատան. այդ թերակղղին աւելի փոքր և ան Փոքր Ասիան, Կորէան և Կամչատկա

Սահայի կղզիների մեծ մասը ցամաքա-
դում ունի այդ կղզիները գտնվում են գլխաւոր
բաւում, մայր ցամաքից ոչ հեռու Նշանաւոր են՝ Մ
արշվագեղի, Սախալին, Եապրեսական և Յելյուն կղզի
Սահայի կղզիները, բուռոր միասին վերցրած,

Ասիայի կղզիները, բոլորը միասին վերցրած, «
առևորապէս այնչափ տարածութիւն, որչափ միայն
թերակղզին»:

~~3. ԱՄԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ~~

Եւրոպային Ասիան աւելի մօտ է գտնվում, քան մի իսպանամաս: Փոքը Ասիան և Միջերկրական ծովի մօտերքը

սսիական եղակրները ամենահին ժամանակներից ծանօթ էին սցիներին։ Հնուց ծանօթ էին սրանց նաև Արարիան և Հնդկաստանոց հետ առևտրական յարաբերութիւն ունէին։ Սակայն մասցած տարածութեան մասին եւրոպացիները ոչ մի գաղաւ չունեին նոյնիսկ 12-րդ դարում Քրիստոսից յատոյ։

Հնդկաշխնի և Հնդկաստանի ափերի մօտով: Բուն ճանապար-
թիւնը, գնալ-գալու ժամանակամիջոցը, տեղ Շ տարի:

նի և հետաքրքիր կերպով, որ շատ եւրոպացիների մէջ ցանկուասած եկաւ աւելի մօտիկից և լաւ ճանաչելու այն հարուստ, փարզգիրսները, որ տնեսել էր Մարկօ Պօլօն։ Սակայն ամենքին էլ վա-

— 5 —
*.) Գանել ծովային ճանապարհ գէպի Հնդկաստան, —
ըստ հարցը, որ սկսեց զբաղեցնել եւրոպացի ծովագնացներին:
5-րդ դարի վերջում Կոլումբոսը (գարձեալ խոտացի), համոզւած

ամարեա Կոլումբոսի հետ միաժամանակ՝ Վասկո-դե-Գամա անու-

որսուղալայի ծովագնացը ճանապարհ ընկաւ դէպի Հոգկաստան
կայի շուրջը պատելով։ Այդ ճանապարհորդութիւնը անցաւ յա-
նձնած է առաջին անգամ և առաջին անգամ է հասկանաւուն։

գտնուեց ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան։
Հուտով խալանացի Մագելլանը գտաւ մի երկրորդ ճանապարհ և
Հնդկաստան։ Աշխարհի շուրջը կատարելիք իր ճանապարհոր-
ան միջոցին Մագելլանը անցաւ Ամերիկայի հարաւով և գտա-
Ասիա տանող ճանապարհը՝ արևելքից։ Այս ճանապարհորդու-
միջոցին գտնուեցին Ֆիլիպափինեան կղզիները։ Սրանից յետո-

և խաղանացիները բազմաթիւ գաղութեներ սկսեցին հիմնել ՀՅՆՊ անում և Հնդկական արշիպիլագի կղզիներում։ 17-րդ դարու գորագան, գերիշխող գարձան անգլիացիները և հոլլանդացիները

*) Առևէզի ջրանցքը այն ժամանակ գեղ չկար, իսկ Աֆրիկայի շուրջը գեղ ու սեղ անցելու:

որոնք իսպանացիների և պորտուգալացիների ձեռքից շատ գաղթավայրեր խեցին: Քանի աւելի էին շատանում եւրոպացիների կալուածները Ասիայում, քանի աւելի էր զարգանում առևտուրը, այնչափ էլ աւելի ու աւելի էին ծանօթանում եւրոպացիները Ասիայի զանազան, գլխաւորապէս ծովափնեայ մասերի հետ:

16-րդ դարում ոռւս կաղակն երը կարելով անցան Ուրալեան լեռները և գոտան Սիբիրը, որի մասին մինչեայն ժամանակ եւրոպացիները ամենաին բան չգիտեին: Տիրելով սկզբում արևմտեան Սիբիրը՝ կազակները աւելի ու աւելի շարժուեցին դէպի արևելք և հասան Մհծ Ովկիանոսի ափերին: 1648 թուականին կազակ Սեմեն Դեժները գտաւ Ասիայի ամենաարենեան հրուանդանը, որն և այժմ նրա անունով է կոչուում:

Սակայն Դեժնեի գիւտը երկար ժամանակ անծանօթ էր մնում Եւրոպային: Ռուսաց Պետրոս Մեծ կայսը գեռ չգիտեր՝ Ասիան միացած է Սմերիկայի հետ, թէ բաժանում է նրանից նեղուցով: Ահա այս հարցի լուծումը Պետրոս Մեծը յանձնարարեց սուսական նաւատորմի նաւապետ Բերինդին: Հարկաւոր պատրաստութիւնները տեսնելով Պետրուրդում, Բերինդը ցամաքային ճանապարհով դէպի արևելք գիւտց: Մի քանի տարուց յետոյ նա հասաւ կամչատկան, այստեղ նա մի նաւ շինեց, որով և ծով գուրս եկաւ, ուսումնասիրեց այն ծովը և նեղուցը որոնք այժմ նրա անունով (Բերինդին) են կոչուում:

Այդ ժամանակներում նաև յաջողուեց Զելիսկին անունով մի ոռւս ճանապարհորդի ցամաքային ճանապարհով հասնել մինչև Ասիայի ամենահիւսիսային հրուանդանը, որն և այժմ նրա անունով է կոչուում:

Այսպէս ուրիմն եւրոպացիներին ամենից առաջ յայտնի դարձաւ Արևմտեան Ասիան, ապա՝ Հարաւային, Արևելիան և Հիւսիսային Ասիան: Դեռ անծանօթ էր մնում կենդրոնական Ասիան, Մարկօ Պուլուից յետոյ երկար ժամանակ եւրոպացիներից ոչ ոք չէր ճանապարհորդել այն կողմերը: Միայն 19-րդ դարի կէսերում ոռւս ճանապարհորդները հիւսիսից, իսկ անդիմացի ճանապարհորդները հարաւից սկսեց ծառայութիւններ է մատուցել այդ բանում ոռւս ճանապարհորդ Պրենենա ճանապարհորդներից նաև 5-րդ ճանապարհորդութեան, սակայն ոյժերը սպառաւել էին արդէն: նա մեռաւ Տեան-Շան սարի ստորոտում:

Ներկայումս էլ կան Ասիայում այնպիսի վայրեր, որտեղ դեռ ևս եղել եւրոպացի ճանապարհորդներ, — Արաբայի և իրանի բարձրանդակի խորքերը, Տիրետի, Հնդկաչինի մի քանի մասերը, նաև միծ կղզիների խորքերը:

4. ԱՍԻԱՅԻ ՄԱԿԵՐԵՐՈՅՑԹԻ ԿԱԶՄՈՒԻԹԻՒՆԸ

Ասիան իր մակերեսոյթի կազմութեամբ ամենաբարձրն է հինգ աշխարհամասերի մէջ: Ասիայում են գտնւում երկրագնդի ամենաբարձր սարերը և բարձրաւանդակները: Սակայն այնտեղ են գտնւում նաև ամենալարձակները: Հարթութիւնները կազմում են Ասիայի ամբողջ մակերեսոյթի ընդամենը $\frac{1}{4}$ մասը, իսկ բարձրութիւնները՝ $\frac{3}{4}$ մասը: Բարձրութիւնները տարածւում են մայր ցամաքի միջին մասում, որութիւնները տարածւում են մայր ցամաքի մասում, որոնցից գլխաւորները բաղկացած են լեռնաշղթաներից կենաւշղթաների մէջ նկատելի է որոշ կանոնաւորութիւն: այսինքն՝ ամեն մի շղթայ աղեղի նմանութիւն ունի, որի գուրս ցցուած մասը նայում է կամ դէպի Մեծ և կամ դէպի Հընդկական ովկիանոսը:

Դէպի Մեծ ովկիանոսն են նայում Բայկալեան, Եաբրուվիան, Սամանվիան, Խիննան, Չինական լեռները և աղին: Դուրս ցցուած մասով դէպի հարաւ (Հնդկական Ովկիանոս) են նայում Սայեննեան, Ալտայեան, Տեան-Նան, Կուկինուն, Կարակուրում, Հիմալայեան, / Հինդուկու, Հարաւայիններանի լեռները և այն: Ասիայի և Եւրոպայի մէջ է ընկնում Կովկասիան լեռնաշղթան:

Ամենաբարձր սարերն են (ոչ միայն Ասիայում, այլ նաև ամբողջ երկրագնդի վրայ) Հիմալայեան և Կարակուրում սարերը: Հիմալայեան սարերի ամենաբարձր գագաթն է Էյերես, համարեած $8\frac{1}{2}$ վերստ բարձրութեամբ ովկիանոսի մակերեսոյթից: իսկ Կարակուրումի գագաթը՝ Գուլին-Օստեն, 8 վերստափակից բարձր է:

Հիմալայեան և Կարակուրում սարերի ամբողջ տարածութեան վրայ ծածկուած են յաւիտենական ձիւն և սառցարաններ: *) Չեան սահմանը գտնւում է $4\frac{1}{2}$ վերստ բարձրութեան վրայ: Մնացած սարերից շատերի գագաթներն են 7 վերստ վրայ: Մնացած սարերից շատերի գագաթներն են հասնում և մշտապէս ձիւնով են ծածկուած: Բարձրութեան են հասնում և մշտապէս ձիւնով են ծածկուած:

*) Գրանից է առաջ եկել և «Հիմալայ» անունը, որ աշահակում է «Ճիւների» այլրեն իր:

Լեռնաշղթաների մեծ կուտակում ենք տեսնում մենք Պամիր կոչուած լեռնային երկրում, որտեղ իրար են կպչում Կարակում, կուէն-Լուն, Տեան-Շան և Հինդուկուշ սարերը:

Նոյնը նաև Տիբետ բարձրաւանդակը (սարանարթը). Նրա սահմաններն են՝ հարաւից Հիմալյանան, հիւսիսից Կուէն-Լուն սարերը. իսկ բարձրաւանդակի կինդրոնական մասը կտրտուած է բազմաթիւ լեռնաշղթաներով, որոնք զուգահեռական են ձգուած Հիմալյանան սարերին. Տիբետը ամենաբարձր սարանարթն է երկրադնդի վրայ. Նրա միջին բարձրութիւնը 4 վերստից աւելի է:

Արևմտեան Ասիայում նշանաւոր են՝ Հայաստանի, Փոքր Ասիայի և Իրանի բարձրաւանդակները: Սրանք իրենց կազմութեամբ նման են արևելեան Ասիայի սարանարթերին, միայն թէ նրանցից աւելի ցածր են:

Նշանաւոր են նաև Գելիանի (Հնդկաստանում) և Արաբիայի բարձրաւանդակները, որոնք իրենց կազմութեամբ բարբերում են վերոյիշեալ սարանարթերից—հողակոշտերից և բաղկացած և նման են Աֆրիկայի սարանարթերին:

Ասիայի գաշտավայրերը տարածում են մայր ցամաքի ծայրերում. ամենամեծ գաշտավայրը գտնում է հիւսարիկմուտքում: Նրա հիւսիսային մասը կոչւում է Միրինի գաշտավայր և ընկած է գէպի Հիւս. Սառուցեալ ովկիանոսը, իսկ հարաւային մասը կոչւում է Արալո-Կասպիական կամ Թուրքը գաշտավայր և ընկած է գէպի Կասպից ծովը: Ծովի ցածր է:

Արալո-Կասպիական գաշտավայրի տեղը առաջ ծով է եղել որ տարածուել է Ասիայի և Եւրոպայի մէջ: Այդ ծովի մուտքորներն են Կասպից և Արալեան լճերը: Կասպից լիճը կամ ծովը այն աստիճան նստել է ժամանակի ընթացքում, որ այժմ ովկիանոսի մակերեսոյթից 10 սաժէնից աւելի ցածր է:

Ասիայի մնացած գաշտավայրերը մեծ չեն: Նրանք առաջ ծովերի ծոցեր են եղել, մեծ գետերը շրջակայ սարերից գաշտերի ընթացքում հող, աւազ, տիղմ են քշել բերել, լցըել ծո-

ցերը ու նրանցից այդպիսով գաշտավայրեր գոյացրել: Այսպէս են օրինակ՝ Միջագետի գաշտավայրը, որ գոյացրել են Տիգրիս և Եփրատ գետերը, Հնդկաստանի գաշտավայրը, որ գոյացրել են Ինդոս, Գանդէս և Բրահմապուտրա գետերը, Զինական գաշտավայրը, որ գոյացրել է Դեղին գետը:

Ասիայի կղզիները մեծ մասով ցամաքային ծագում ունեն, ուստի և նրանց մակերեսոյթի կազմութիւնը նոյնն է, ինչ որ մայր ցամաքի՝ նրանց մօտ գտնուող մասերը: Այսպէս՝ Յէյլունի կղզին նոյնպիսի հողակոշտ մակերեսոյթ ունի, ինչ որ նրա մօտ գտնուող Դեկանը: Ասիայի արևելեան ծայրերին մօտ գըտնուող Եապոնական և այլ կղզիները ներկայացնում են լեռնաշղթաներ, ձգուած ովկիանոսի մէջ:

5. ԿԼԻՄԱՆ

Ասիան, չհաշուած նրա ամենահարաւային կղզիները, ամբողջապէս հիւսիսային կիսազնդում է գտնուում:

Նա շատ մեծ է, մակերեսոյթի կազմութիւնն էլ բազան է: Ահա սրանք են պատճառը, որ Ասիայի կլիման ևս բազմազան է, տարբեր մասերում միանգամայն տարբեր կլիմայով: Ասիայի $\frac{1}{5}$ մասը գտնուում է ցուրտ գօտում, $\frac{1}{5}$ -ը տաք գօտում, իսկ ամենամեծ մասը, $\frac{3}{5}$ -ը, գտնուում է բարեխառն գօտում:

Նայելով կլիմային՝ Ասիան բաժանուում է 5 շրջանի. — 1) Հիւսիսային Ասիա, 2) Կենդրոնական Ասիա, 3) Հարաւային Ասիա, 4) Արևելեան Ասիա և 5) Արևմտեան Ասիա,— Պամիրից արևմուտք ընկնող բոլոր երկրները:


Հիւսիսային Ասիայում է գտնուում ամբողջ Սիբիրը: Այս շրջանի կլիման ցուրտ է: Արեգակը շատ թոյլ է տաքացնուում այդ շրջանը: Բեեռային շրջանակից հիւսիս ձմեռ ժամանակ լինում է բեեռային գիշեր (կամ խաւար), որի միջոցին լինում է բեեռային գիշեր (կամ խաւար), որի միջոցին լինում է միայն լուսնով, աստղերով և հիւսիսավայրով: Զիլիւսում է միայն լուսնով, աստղերով և հիւսիսավայրով: Կին հրուտանդանի վրայ բեեռային գիշերը տեսնում է ամբողջ

4 ամիս շաբունակ։ Այս պատճառով էլ ձմեռը չիւս։ Ասիայում խիստ ցուրտ է լինում. սառնամանիքները հասնում են երբեմն մինչև 60° , իսկ Լենայի գետաբերանում նոյն իսկ 70° ։ Հողը սառչում է այնչափ խորը, որ ամառը միայն երեսից է հալչում, և այս՝ ոչ միայն հեռաւոր հիւսիսում (տունդրաներում), այլ մինչև անգամ Բայկալեան լճի մօտ, որտեղ արդեն անտառներ կան։ Թէպէտ ամառը հիւսիսային Ասիայում տաք է լինում, բայց տարուայ տաքութեան միջին տատիճանը այնուամենայնիւ շատ ցածր է լինում, այսինքն՝ Սիբիրի մեծագոյն մասում 0° -ից էլ ցածր։ Հիւսիսային Ասիան խոնաւութիւն սահնում է Սառուցեալ ովկիանոսից, որից և միայն ցուրտ ու չոր քամիները կարողանում են սակաւ քառակութեամբ գոլորշի բերել այդ կողմերը։ Մեծ և Հնդկական ովկիանոսներից հիւսիսային Ասիան կտրուած է բարձր սարերով և բարձրաւանդակներով։ Արևմուտքում Ատլանտիան ովկիանոսից նա բաժանուած է Ուրալեան սարերով և Եւրոպայի մայր ցամաքով. դրա համար էլ այդ ովկիանոսից քամիների բերած մթնոլորտային տեղումները զգալի չափով պակասում, քչանում են։ Այս է պատճառը որ հիւսիսային Ասիայի կլիման ցուրտ լինելով՝ նաև չոր է, ցամաքային։

Կենդրոնական Ասիան ունի բարձր մակերեսոյթ, հեռու է գտնում ովկիանոսներից և ըրջապատուած է բարձր սարերով, որոնք չեն թողնում ծովային քամիներին փշել դէպի կլիման շատ չոր է, տւելի չոր և ցամաքային, քան հիւս։ Ասիայի կլիման։ Չափազանց սակաւ է պատահում, որ երկաժամանակ վրայ ամպեր երևան։ այդ պատճառով էլ ամառ բարձր երկնակամարտերը անարգել կերպով տաքանում են էլ նոյն արագութեամբ սառչում են, ցերեկները յաճախ առանելի շող է լինում, իսկ գիշերները՝ սառնամանիք։ Զմեռն երբ արեգակը ցածր է թեքուած, լինում է շատ ցուրտ և դաման։ Այսպիսով՝ ենդրոնական Ասիայի կլիման խիստ

ցամաքային է, — ձմեռները սաստիկ սառնամանիքներ են մինում, իսկ ամառները՝ սաստիկ շոգեր։

Հարաւային Ասիան (այսինքն՝ Հնդկաստանը, Հնդկաչինը և Մալայեան արշիպելագը) ունի տաք կլիմայ։ Ամառ ժամանակ արեգակը գտնուում է ուղղակի մարդու գլխավերներ և շատ սաստիկ է այրում։ Նոյնիով ձմեռուայ ամիսներին արեգակը բարձրածինի վրայ։ Այսպիսի ձմեռներ, ինչպէտ մեր երկրում են, այնտեղ ամենակին չեն լինում, և երկիրը երբէք չէ ծածկուած կլիմանում ծիւլուսային տեղումներ են բերում։



Նկ. 2. Մթնոլորտային տեղումների բաշխումը ւում ծիւլուսային տարբերակը և ամենաշատ մթնոլորտային տեղումներ են բերում։ Նովի Զմեռնարք ամենաշատ մթնոլորտային տեղումներ են բերում։

ուայ ամիսների մէջ համարեա տարբերութիւն չկայ և տարուայ տաքութեան միջին աստիճանը ամեն տեղ 20° -ից բարձր է *).

Հարաւային Ասիան մօտ է գտնում Հնդկական տաք ովկիանոսին, որից շատ գոլորշի է բարձրանում։ Այդ պատճառով էլ նրա կլիման խոնաւ է։ Մթնոլորտային տեղումներ են բերում գլխաւորապէս հարաւարեմտեան մուսսոնները, որոնք տարուայ ամառային ամիսներին, երբ մայր

*) Այսպէտ Սումատրայի հարաւային մասում ամենաշոգ ամսուայ տաքութեան միջին աստիճանն է 27° , իսկ ամենացուրտ ամսուանը՝ 26° .

ցամաքը աւելի շատ է տաքացած լինում քան ովկիանոսը, փչում են ովկիանոսից դէպի մայր ցամաք։ Զմեռը մուսսնաբերը փչում են հակառակ ուղղութեամբ, մայր ցամաքից դէպի ովկիանոս։ Մթնոլորտային տեղումներ բերում են միայն ովկիանոսից փշող (ամառը) մուսսները։ այդ պատճառով էլ Հարաւային Ասիայում ամառները շատ յաճախ և յորդանձրեներ են դալիս։

Արեւելեան Ասիան ոռոգւում է լաւ, որովհետեւ Մեծ Ովկիանոսը մօտ է, շնորհիւ մանաւանդ այդ ովկիանոսի Կուրօ-Սիլի կոչուած տաք հոսանքի։ Հարաւ-հոսանքի վրայով և մայր ցամաք են բերում առատութեամբ մթնոլորտային տեղումներ։ Զմեռը մուսսնները փչում են հակառակ ուղղութեամբ, այսինքն մայր ցամաքից դէպի ովկիանոս, ուստի և բերում են չորութիւն ու ցրտութիւն։

Արեւելեան Ասիայի հիւսիսային մասում ձմեռը բաւական խիստ է լինում և երկար տեսում, սառնամանիքը երբեմն 20⁰ է համառում։ Հարաւային մասում ձմեռը շատ աւելի մեղմ է լինում։ Ամառը ամենատեղ շոգ է։

Արեւմետեան Ասիայի և Արեւելեան Ասիայի կլիմաների մէջ ևս տարբերութիւն կայ, բայց այդ տարբերութիւնը այնչափ աչքի ընկնող չէ, ինչպէս հիւսիսի և Հարաւի մէջ։ Արեգակը թէ Արեւելում և թէ Արեմուտքում հաւասարապէս բարձր է լինում հորիզոնի վրայ, միայն թէ Արեւելը ողողում է հակայան ովկիանոսվ, մինչ Արեւմուտքը՝ միայն Արաբական, Կարմիր և Միջերկրական ծովերով. այն ևս կայ, որ Արեւմուտքը մետեան է Աֆրիկայի չոր մասին։ Այս պատճառով էլ Արեւկլիման չոր է։ Ամառը այնտեղ սաստիկ շոգեր և երաշտներ են լինում, յաճախ 50⁰ տաք է անում։ Զմեռը եղանակը ցուրտ է. յաճախ անձրեներ են դալիս և սարերի լանջերը ծածկւում են ձիւնով։

Ասիայի կլիման էլ ցոյց է տալիս այնպիսի աչքի ընկնող հակառակ երն եր, ինչպէս որ նրա մակերեսովի կազմութիւնը, — զա-

յան ցուրտ՝ հիւսիսում, իսկ այրող շոգ՝ հարաւում։ Հավագանց չորութիւն կհնգրոնական Ասիայում, իսկ առատ խոնաւութիւն՝ Հարաւային և Արեւելեան Ասիայում։

6. ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ

Ասիայի բոլոր մեծ գետերը իրենց սկիզբն են առնում ովկիանոսներից հեռու, կենդրոնական Ասիայի բարձրութիւններից և հոսում են դէպի զանազան կողմեր։ Ասիայի գետերից մեծ մասը շատ երկայն է և ջրառատ։

Ասիայի հիւսիսային մասով դէպի Սառուցեալ ովկիանոս են հոսում հետեւեալ գետերը՝ Օբ (Իրտիշ վտակով), Ենիկանոս և Ահենա։ Օբ գետը իրափիշ վտակի հետ միասին ամենաերած և լինա։ Օբ գետը իրափիշ վտակի հետ միասին այն կայն գետն է Ասիայում¹⁾։ Նրա ջրաբաշխն էլ (այսինքն այն տարածութիւնը, որ ջուր է մատակարարում գետին) ամենաբնակածակն է։

Թէպէտ հիւսիսային Ասիայում սակաւ մթնոլորտային տեղումներ են թափւում, բայց և այնպէս այնտեղ հոսող գետերը ջրառատ են։ պատճառը այն է, որ ջուրը սակաւ է գուրշիանում ցուրտ կլիմայի շնորհիւ։ Այս գետերը իրենց ընթացքի մեծ մասում հոսում են հանդարտ (ինչու) և յարմար են նաւագնացութեան համար։ Ափսոս միայն, որ Սառուցեալ ովկիանոսը, ուր թափւում են այդ գետերը, միշտ միքն է լինում սառոյցով։ հէնց իրենք գետերն էլ երկար ժամանակով սառչում են, իսկ գարնանը նրանք գուրս են դալիս ափերից։

Մեծ են նմանապէս այն գետերը, որոնք հոսում են դէպի Մեծ կամ Խաղաղ օվկիանոս։ Արանք են՝ Ամուր, Դեղին (կամ Հօսնիզո), Կապոյս (կամ Եանցէզեան) գետերը։ Ամենից աւելի ջրառատ լինում են այս գետերը ամառ

¹⁾ Եթէ իրափիշ համարենք Օբի գլխաւոր վտակը, այդ դէպում նրա երկայնութիւնը կանի 5,000 վերստից աւելի։ Նրանից աւելի երկայն են երկարողութիւնը վրայ միայն հետեւեալ երեք գետերը՝ Միասիսերկայն և պի Միստրիկի հետ (Հիւս. Ամերիկայում), Նեղոս (Աֆրիկայում) և Ամազոն (Հար. Ամերիկայում)։

ժամանակ, երբ անձրիներ շատ են գալիս: Գարնանը գետերը
ջրառատ չեն լինում, որովհետև նրանց ջրաբաշխնե-
րում քիչ է ձիւն գալիս: Այս գետերից նաև գնացու-
թեան համար ամենայարմարն է Կապոյս գետը: Այս գետի
հոսանքով նոյնիսկ ովկիանոսի նաև կարող են վեր բարձ-
րանալ գետաբերանից մինչև 1,000 վերստ: Դեղին գետը, ընդ-
հակառակը, սակաւ հաւաքնաց է: Նրա պղտոր ջուրը շարու-
նակ ահազին քանակութեամբ գեղին տիգմ է բերում, որ
նստում է հունի վրայ. այդ տղմից գետի ստորին հոսան-
քում գոյանում են շարունակ նորանոր ծանծաղուաներ: Ժա-
մանակ առ ժամանակ այդ գետը նոյնիսկ բոլորովին փոխում է
իր հունը. 50 տարի առաջ Դեղին գետը չէր թափում
Զօդիլիի ծոցը, այլ Դեղին ծովը,—Կապոյս գետի գետաբերանից
ոչ հեռու¹⁾:

Հ ն դ կ ա կ ա ն ս վ կ ի տ ն ո ո թ ա փ ո ւ ո գ գ ե տ ե ր ի ց
ամենանշանաւորներն են՝ Գալիքի և Բրահմապուրա, Խնոմու,
Տիգրիս և Եփրամ գետերը։ Մրանք բոլորը սարերից ահազին
քանակութեամբ աւաղ և տիզմ են բերում, որոնք և գետերի
ստորին հոսանքում նստում են ու գոյացնում ծանծաղուտները։
Այս պատճառով էլ յիշած գետերը համարեա պէտք չեն նա-
ւագնացութեան համար։ Ծովը թափուելու մօտերքը նրանք
գոյացնում են գելտաներ, բաժանուելով մանր ձիւղերի,
որոնք և մատչելի չեն՝ ծովային նաւերի համար։ Յատկապէս շատ
ձիւղեր ունի Գանգէսի և Բրահմապուրայի գելտան։ Այս գել-
տան $2^{1/2}$ անգամ մեծ է Մոսկվայի նահանգից։

Հարթութեան վրայ, իրանում և Արաբիայում մթնոլորաային տեղումներ քիչ են թափում, իսկ չուրն էլ շատ է գոլորշիա-նում: Այս պատճառով յիշած տեղերում քիչ գետեր կան, եղած գետերն էլ մեծ մասով անապատային են, այսինքն՝ չեն հանում ովկիանոսին, առ եւ առ առ առ:

¹⁾ ζητεῖτε φυσικότοπον την ηγεμονίαν της πολιτείας της Αθηναϊκής περιοχής, η οποία σύμφωνα με την αρχαία γεωγραφία της Αριστοτέλη, διασπάται σε δύο μεγάλους πολιτισμούς, την αρχαίαν και την νέαν, την ελληνική και την βαρβαρική.

կամ թափւում են չոսող լճեր։ Այս գետերից ամենանշանակալի էնքնէրն են՝ Սիր Դարեա և Ամու-Դարեա, որոնք թափւում են Արալեան լիճը։

Լճեր Ասիայում շատ կան: Նրանցից առավել զարգացած է Համով ջուր Կասպից և Արաբեան լճերը, որոնց ջուրը աղի է: Համով ջուր ունեցող լճերը (Ասիայում) իրենց մեծութեամբ յետ են մնում Ամերիկայի և Աֆրիկայի նոյնատեսակ լճերից: Դրանցից ամենամեծն է Ասիայում Բայկալ լիճը ($11/2$ վերստից աւելի խոսակցած): Արալօ-Կասպիական լիճը գտնվուող լճերը, մեծ մասով, հսումը այդտեղ եղած ծովի ֆնացորդներն են, այդ պատճառով նրանց ջուրը աղի է:

7. ԲՈՒԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ասիայի բուսականութիւնն էլ այնպէս բազմազան է, ինչ-պէս կլիման։ Ասիայում կարելի է հանդիպել բոլոր գօտիների բուսականութեան, — սկսած տունդրաներից մինչև արևադարձային անտառներ։


Ասիայի հիւսիսային ցուրտ մասը ծածկուած է տուն-
դրաներով և փշատերև անտառներով։ Տանդրաները
տարածւում են Սառուցեալ ովկիանոսի ափերին, որտեղ ոչ
միայն ձմեռը լինում է սաստիկ, այլ նաև ամառը ցուրտ է և
մառախլապատ։ Այն վայրերում, որտեղ սաստիկ ձմեռուանից
յետոյ գոնէ ամառը տաք է լինում, այնտեղ աճում են սիրի-
րական անտառներ, որոնք տայգա են կոչում։ Եյդ տայգա-
ները լայն տարածուած են, սկսած Ուրալեան լեռնաշղթայից
մինչև Մեծ ովկիանոսի ափերը. մարդկային ձեռքը դեռ Քիչ
է կպել այդ անտառներին. մի քիչ կտրուած են նրանք միայն
Սիրիրի երկաթուղու երկայնութեամբ։

Այս գոտում անտառներ պատահում են միայն սարերի լանջերին և գետերի ափերին գտնուող ովազիսներում:

Ովազիսներում լաւ են աճում պտղատուծառեր, ինչպէս օրինակ՝ խնձորենի, դեղձի, ծիրանի ծառ. իսկ արևմտեան Ասիայում աճում են մշտադալար ծառեր, օրինակ՝ ձիթենի. իրանի հարաւում և Արաբիայում աճում է փինիկեան արմաւենին:

Հարաւային Ասիայում, որտեղ կլիման տաք է և ոռոգումը առատ, աճում են արևադարձային անտառներ: Մըանք ծածկում են Հնդկաստանի և Հնդկաչինի ամենախոնաւտեղերը և Մալայեան արշիպելագը:

Հարաւային Ասիայի առելի չոր մասերում տարածում են արևադարձային տափաստաններ, որոնք Մաւանն են կոչւում, խիտ ծածկուած վայրի խոտերով:




Նկ. 3. Խոտականութեան տարածումը Ասիայում:

Օդտակար բոյսերով Ասիան հարուստ է ֆնացած բո-

լոր աշխարհամասերից: Ասիայում են գտնուել մարդու ձեռքով առաջին անգամ, վայրի դրութեան մէջ, բազմաթիւ նշանաւոր բոյսեր, որոնք այժմ մշակւում են մեծ քանակութեամբ:

Ալպէս, օրինակ, Արևմտեան Ասիայում աճում են առաօրէն՝ ցորեն, վուշ, սոխ: Հարաւային Ասիան բընձի, շաքարեղիքնի, բանանի, դէղնի, բանանի,



Նկ. 4. Սաւանն:

Վարունգի հայրենիքն է, իսկ Արևելեան Ասիան՝ թէյի ծառի հայրենիքը:

8. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱԲՀՀԸ

Ասիայի կենդանական աշխարհը շատ հարուստ է: Կենդանիների բազմատեսակութեամբ Ասիան առաջին տեղն է բընում բոլոր աշխարհամասերի մէջ: Այնաեղ պատահում են Եւրոպական-Ասիական, Հնդկական, Աֆրիկայի և նոյնիսկ Աւստրալիայի շրջանների կենդանիներ. միայն թէ եւրոպականասիական և հնդկական շրջանների կենդանիներն ասիական և հնդկական շրջանների կենդանիներն են ցրուած ընդարձակ տարածութեան վրայ: Ամբողջ կենդրուական և արևելեան Ասիայի, նաև հիւսիսային և արևմտեան Ասիայի մեծ մասին յատուկ են եւրոպական-ասիական շրջանի կենդանիները:

Տունդրաներում աճառ ժամանակ ցրուած են լինում շատ տեսակ կենդանիներ, յատկապէս թուչուններ, որոնք անազին երամներով Հարաւային Ասիայից շւում են դէպի Սառուցեալ Ովկիանոսի ափերը: Այստեղ նրանց գրաւող մնունդի առատութիւնն է, որտեղ կան ամեն տեսակ ձկներ և բոյ-

սեր: Աշնանը նրանք կրկին թռչում գնում են դէպի տաք երկիրներ: Զմեռը տունդրաներում սակաւաթիւ կենդանիներ են

միայն մնում — սպիտակ կաքաւներ, բնեռային աղուէսներ, հիւսիսային եղջերուներ: Արանք էլ մեծ մասով ձմեռը դէպի Տայգա են չում:

Տայգան հարուստ է աղուամագ գաղաններով. այնտեղ կանքազմաթիւ սկիւներ, աղուէսներ, գայլեր, արջեր, և այլն: Արևելեան Սիբիրում են լինում աղուամագ գաղաններից ամենաթանգագինները — սամոյրներ և սպիտակ

Նկ. 5. 1-ին ցորեն, 2, 3—գարի, 4—գարսակ, 5—կողաքարիններ: Տայգանակ անտառային թռչուններ — մայրի հաւեր, փայտմո-

րիկներ, և այլն:

Տափաստաններում (ստէպ) ապրում են բազմաթիւ կրծող և սմբակաւոր կենդանիներ, որոնք մնում են խոտով: Զմեռ ժամանակ կրծողները թագնուում են որջերում և քուն մտնում, իսկ սմբակաւորները խոտ են ճարում ձեան փաստանները:

Արեւելեան Սսիայի տափաստաններում ապրում են թէ սմբակաւոր և թէ կրծող կենդանիներ, միայն թէ աւելի պակաս քանակութեամբ. պատճառն այն է, որ այնտեղ աւելի շատ մարդ է ապրում և բաւականաչափ գիշատիչ գաղան-

ներ ևս կան: Մրանցից մի քանիսը Աֆրիկայի շրջանի ծագում ունեն, օրինակ՝ բորենին, շնագայլը: Արաբիայում և առեղ-տեղ իրանում պատահում է նոյն իսկ առիւծ:

Հարաւային Ասիայում, արևադարձային անտառներում և սաւաններում կան շատ բազմաթիւ և բազմազան կենդանիներ: Նրանցից շատերը ապրում են



Նկ. 7. բամբակ.



Նկ. 6. բրինձ:

միայն արևադարձային գօտում և անկարող են դիմանալ բարեխառն երկրների ցըտին: Այսպէս են, օրինակ, մարդանման կապիկները և հաստակաշի

հնդկական փիղը, ոնդեղիւրը և տապիրը¹⁾:

Արեւելեան Սսիան այնչափ խիտ է մարդկային բնակութեամբ և այնչափ է մշակուած, որ վայրի կ'նդանիները այնտեղ համարեա թէ ոչնչացրուած են:



Նկ. 8. բանան.


¹⁾ Գիշակեր կենդանիներից չար. Ասի. ամենառեզեզն է բենզալեան վագրը: Կան բազմաթիւ թռւնաւոր օձեր, կօկորդիլոսներ և այլն:

կանց բոլոր աշխարհամասերում։ Մարդիկ նրանց առաջին ան-
գամ Ասիայում գտան վայրի վիճակի մէջ և ընտանեցրին
նրանց յօդուա ամ-
բողջ մարդկութեան
Այսպէս, ասիական
տափաստաններից
են ծագում ձին և
ուղարք։ Կենդրո-
նական Ասիայի տա-
փաստաններում նր-
անք մինչև օրս էլ
մնում են վայրի վի-
ճակի մէջ։

Ասիայից են ծա-
գում եղջիւրա-
ւոր խոշոր անա-
սունները, ոչխարը՝
այծը և խոզը։ Տիբե-
տում և մօտակայ երկրնե-
րում մարդուն ծառայու-
է նաև ամենաուժեղը ըն-
տանի կենդանիներից —
հնդկան փիղը։

9. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ասիայում ապրում են
800 միլիոնից աւելի
մարդիկ, այսինքն՝ ամբողջ
մարդկութեան կէսից ա-
ւելին։ Քանի որ Ասիայի
մակերեսը թարածու-
թիւնը մօտաւորապէս 40
միլիոն քառակուսի վերստ-
է, ապա կնշանակէ, որ 1



Նկ. 9. Տապիր։



Նկ. 10. Օրանգուտան։

քառ. վերստի վրայ Ասիայում ապրում է միջին հաշուով
մօտ 20 հոգի։

Ամենից աւելի պակաս են բնակուած տունդ-
րաները, որտեղ մարդ շատ դժուարութեամբ է կարողանում
ապրուստի միջոցներ գտնել. երկրագործութեամբ պարապել այն-
տեղ անհնարին է. իսկ ընտանի կենդանիներից այնտեղ ծառայում
են մարդուն միայն հիւսիսային եղջերուները և լծկան շները։



Նկ. 11. Բենզական վագ։ Եղեգնութեամբ։

Սակայն բնակութիւն կայ նաև Սիբիրի տայգայում։
Այդ անտառների խորքերում հազուադէպ անգամ միայն կա-
րելի է տեսնել թափառաշրջիկ որսորդներ (օրինակ
տունգուսներ), միայն մեծ գետերի հոսանքի վրայ և Սիբիրի
երկաթուղու երկայնութեաբ ձգուած են ոռւս զաղթական-
ների գիւղեր։ Մեծ աշխատանք թափելով միայն նրանք
ների գիւղեր։ Մեծ աշխատանք թափելով միայն նրանք
կարտում են խիտ անտառները, մաքրում հողը ծառերի ար-
ևմատներից և վարում այն։ Սիբիրի հիւսիսային կէսում միան-
գամայն անկարելի բան է երկրագործութեամբ պարապելը։
Ասիայի տափաստանները շատ չոք են. երկրա-

գործութեան համար անյարմար են նրանք մեծ մասով. այդ պատճառով էլ այնաեղ ապրում են, զլխաւորապէս, քոչուրիսաշնարածներ, օրինակ մոնղոլներ, կիրգիզներ, —որոնք արօտատեղեր փնտրելով անդադար մի տեղից ուրիշ տեղ են թափառում: Այսպէս՝ հօտերը արածացնելու համար քոչուրներին անհրաժեշտ են ընդարձակ տարածութիւններ. ուստի և նրանց տափաստանները շատ սակաւ են բնակուած:

Տափաստաններից էլ աւելի պակաս բնակութիւն կայ հաստատած անապատներում, որտեղ մարդ ապրել կարող է միմիայն ովագիաներում:

Բոլորովին այլ բան ենք տեսնում մենք Ասիայի հարաւում և արևելեան մասում, որտեղ ամբողջ մարդկութեան կէսն է ապրում և որտեղ ազգաբնակութիւնը վերին աստիճանի իիտ է: Հնդկաստանի և Չինաստանի հարթութիւններում ազգաբնակութեան խտութիւնը հասնում է մինչև 200 (և նոյն իսկ աւելի) մարդու 1 քառ. գերստի վրայ: Այսպիսի խիտ ազգաբնակութեան պատճառը երկրի տաք, խոնաւ և արգաւանդ լինելն է, որ առատօրէն վարձատրում է մարդու աշխատանքը: Անյիշատակ ժամանակներից սկսած այնտեղ ապրում են հաստատաբնակ երկրագործ ժողովուրդներ—հնդիկներ, չինացիներ և ուրիշ ժողովուրդներ:

Ասիայի ժողովուրդների մեծ մասը պատկանում է գեղին ցեղին: Այդ ազգութիւնները կազմում են Ասիայի ամբողջ ազգաբնակութեան կէսից աւելին և բանում են նրա տարածութեան $\frac{3}{4}$ -ը (տես փոքր քարտէսը): Դեղին ցեղին պատկանող զլխաւոր ժողովուրդներն են—չինացիները, մոնղոլները և մալայցիները:

Սպիտակ ցեղը բնակուած է Հնդկաստանում, Արևմտեան և մասամբ Հինդուային Ասիայում: Այդ ցեղին պատկանող զլխաւոր ժողովուրդներն են — հնդիկները, պարսիկները, արաբները և ռուսները:

Սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդները երեսց լեզուին նա-

յելով բաժանուում են երկու խմբի — արիացիներ և սկմիտներ: Ասրիացիների թուին են պատկանում՝ հնդիկները, պարսիկները, հայութեացիների թուին են պատկանում՝ հնդիկները, պարագական ժողովները, նաև ուստաները (և մնացած համարեա բոլոր Եւրոպական ժողովները): Սեմիտների թուին են պատկանում՝ արաբները, հրէաները (և մի քանի աֆրիկացի ժողովուրդներ):


Աև ցեղը Ասիայում շատ փոքր տարածութիւն է միայն բոնում՝ Հնդկաստանի հարաւում Ցէլլոնում, որտեղ ապրում են Դրաւիդներ:

Վերյիշել այսեղ դեղին, սպիտակ եւ սեղ ցեղերի առանձնայակութիւնները:

Զանազան ցեղերի պատկանող մի քանի ազգութիւններ Ասիայի որոշ մասերում սաստիկ խառնուել են իրար հետ: Այսպէս՝ Դեկանում և Ցէլլոնում դրաւիտները խառնուել Այսպէս՝ Դեկանում և Ցէլլոնում դրաւիտները կամ տակն հնդիկների հետ, Փոքր Ասիայում թիւրքերը կիկները (որոնք գեղին ցեղին են պատկանում) խառնուել ճիկները (որոնք գեղին ցեղին են պատկանում) հետ:

Ժէպէտ եւ-

րոպացիները շատ վազուց չէ, որ ծանօթացել են ամբողջ Ասիային, բայց էլի նըրանք կարողացել են տիրել նըրատարածութեան մեծ մասուն: Ասիայի $\frac{1}{3}$ -ից աւելին հէնց Ռուսիային է պատկանում. հնդկաստանն ու Հնդ-



Նկ. 12. Ցեղերի տարածումը Ասիայում:

կաշինի մի մասը պատկանում է Անգլիային. Հնդկացինի մի մասը պատկանում է Ֆրանսիային, և այլն:

Եւրոպացիների կալուածները Ասիայում (նաև Աֆրիկայում, Ամերիկայում և Աւստրալիայում) կոչում են Եւրոպական գաղթավայր Ասիայում, բայց որովհետև նա սերտ միացած է բուն Ռուսիային, ուստի աւելի ճիշտ է համարել նրան միայն մի մասը ոռուսական կայսրութեան:

Ասիայի անկախ պետութիւնները բռնում են այդ մայր ցամաքի տարածութեան կեսից պակասը: Նրանցից ամենաշանաւորներն են՝ Չինաստանը, Եազնիան և Պարսկաստանը. բացի այդ պետութիւններից՝ Ասիայում է գտնում նաև Թյուրքիայի կամ Տաճկաստանի մեծագոյն մասը:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՍԻԱ

10. ԲՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Այս բոլոր երկները, որոնք ընկած են Ասիայի Արևմուտքում, շատ ընդհանուր կողմից ունեն իրար հետ: Համարեա այդ բոլոր երկներն էլ բարձրաւանդակներ են, ունեն տաք և չոր կլիմայ: [Կրկնել «կլիմայ» դասի (յօդ. 5.) Արևմ. Ասիային վերաբեր կառորը]: Բարձրաւանդակների խորքերը մեծ մասով ներկայացնում են անապատներ՝ չորս կողմը տափաստաններով: Բնդհանական կառավարում և սարերի լանջերում ձմեռ ժամանեն: Պտղաբեր են նաև այն երկները, որոնցով հոսում են գետեր. սրանք նպաստում են հողը արուեստական կերպով ջրելուն: Այս բանը պահանջում է ի հարկէ շատ աշխատանք և հոգատարութիւն, դրա համար պէտք է շինել մեծ ջրանցքներ, Հասկանալի է ուրեմն, որ երկրի մասին այսպէս հոդալ կարելի է միայն խաղաղ ժամանակ: Աւերիչ պատերազմները, որոնք յաձախ էին մղում հին ժամանակերը Արևմտեան Ասիայում, կործանում ոչնչացնում էին յիշած ջրանցքները:

և նման ձեռնարկները: Այժմ էլ, շնորհիւ տիրող քաղաքական քայլացիչ պայմանների, այդ երկները աւերտում են: Այս է պատճառը, որ Արևմտեան Ասիայում մեծ հանդիպում ենք այնպիսի երկների, որոնք հնում եղել են ծաղկած, կերակրել են միլլիոնաւոր մարդիկ, —այն ինչ ներկայումս կարողանում են սնել միայն սահմանափակ թուով թափառաշրջիկ ցեղերի: Այսպէս է գրութիւնը մանաւանդ Միջագետքում, իսկ աւելի պակաս չափով՝ նաև ամբողջ Արևմտեան Ասիացագետքում, իսկ աւելի պակաս չափով՝ նաև ամբողջ Արևմտեան Ասիացագետքում—Փոքր Ասիայում, Հայաստանում, Ասորիքում (Սիրիա), Պաղեստինում և Պարսկաստանում:

11. ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Փոքր Ասիա թերակղզին յիշեցնում է Ասիա մայր ցամաքը՝ փոքրացրած չափով: Այդ երկիրը բարձրաւանդակ է, ըստ ջապատուած լեռնաշղթաներով: Հիւսիսային սահմանում ընկապատուած լեռնաշղթաներով: Հիւսիսային սահմանում ընկապատուած է լեռները, իսկ հարաւում Տաւրոսի լեռները:

Փոքր Ասիայի արեելեան կողմում է տարածում Հայաստանը, որտեղ հանգած հրաբղյային լեռներ շատ կան: Այդ լեռներից ամենաբարձրն է Արարատ կամ Մասիս սարը՝ ծովի մակերեսոյթից 5 վերստ բարձրութեամբ. Մասիսի գագաթը ծածկուած է յաւիտենական ձիւնով:

Հայաստանում են իրենց սկիզբը առնում և որոշ տարածութեան վրայ հոսում Տիգրիս, Եփրամ և Երասխ գետերը: Լեռներից նշանաւոր են Վանայ և Ուրմիայի աղի լճերը:

Քոքր Ասիայի և Հայաստանի կլիման համեմատաբար խոնաւ է: Այդ երկներում բաւական շատ մթնոլորտային տեխնոլոգիաներ են թափւում, որովհետև այստեղ համեստ են Ասլանդումներ և անձրև է գալիս, ուստի և այդ շրջանները պաղպակեր հող պահանջում է ի հարկէ շատ աշխատանք և հոգատարութիւն, դրա համար պէտք է շինել մեծ ջրանցքներ, Հասկանալի է ուրեմն, որ երկրի մասին այսպէս հոդալ կարելի է միայն խաղաղ ժամանակ: Աւերիչ պատերազմները, որոնք յաձախ էին մղում հին ժամանակերը Արևմտեան Ասիայում, կործանում ոչնչացնում էին յիշած ջրանցքները:

Գարնանը, ձիւնը հալչելուց յետոյ, Փոքր Ասիայի և Հայաստանի հողը շատ խոնաւութիւն է ծծում, այդ պատճառով յաստանի հողը շատ խոնաւութիւն է ծծում, և հովիտէլ սարերի ստորոտներում աղբեւրներ են բղխում, և հովիտէլ սերով գետակներ հոսում: Սարերի լանջերը գարնանը ծածկուած է կլիման չոր բայց էլի յարմար է խաչնարածուներում է կլիման չոր բայց էլի յարմար է խաչնարածուներում:

ւում են կանաչ խոտով, բայց ամառուայ սկզբում արդէն չորանում է խոտը։ Անտառներ քիչ կան։ միայն Պոնտոս լեռների հիւսիսային լանջերը ծածկուած են ստուերախիտ կաղնու և հաճարի անտառներով։ Աւելի հեռուն հարաւում տարածւում են տափաստաններ և աղոտ հող ունեցող անապատներ։ Տարոսի լանջերում և թերակղզու արևմտեան ծայրերում միայն պատահում են մշտականաչ մրտենիների և դափնիների ցածրիկ թփուտներ։

Հնումը Փոքր Ասիան և Հայաստանը աւելի մեծ ազգաբնակութիւն են ունեցել, քան այժմ։ Մինչև այժմ էլ այդ երկրներում պահուել են հնութիւնից մնացած շատ յիշտակարաններ — տաճարների, ջրանցքների, թագաւորական գերեզմանների մնացորդներ և հին ամրոցների ու ամբողջ քաղաքների աւերակներ։

Ներկայումս էլ Փոքր Ասիան Թիւրքիայի ամենակարևոր և ամենալաւ բնակուած մասն է կազմում։ Ազգաբնակութեան մեծ մասը Թիւրքերը կամ տաճի կներն են, որոնց թիւրայստեղ մօտ 9 միլիոնի է հասնում։

Թիւրքերը նուաճեցին Փոքր Ասիան գեռ 11-րդ դարում Ք. յ., իսկ 15-րդ դարում նրանք իրենց իշխանութիւնը տարածեցին նաև Արևմտեան Ասիայի հարեան երկրների, հիւսիսարեկեան Սփրիկայի, և հարաւ — արևելեան Եւրոպայի վրայ։ Այժմ Թիւրքիան ամենաթոյլ, յետ մնացած պետութիւններից հնորհիւ Թիւրքական տիրապետութեան էլ երկիրը հետզհետէ դատարկուել է։ Ժամանակի ընթացքում Թիւրքիան կորցրել է իր տիրապետած երկրների մի մասը, իսկ Ասիայում այժմ բաւական երկրների վրայ գեռ լինում է նա։ Թիւրքիային են պատկանում հետեւել երկրները — Փոքր Ասիա, Հայաստան, Միջագետ, Ասորիք՝ Պաղեսինի հետ և Արարիայի մասը։

Թիւրքերը հետեւում են մահմեդական կրօնի սիւնսի դաւանութեան։ Թիւրքերը թէկ մոնղոլական ծագում ունեն, բայց դարերի ընթացքում նրանք խառնուել են սպիտակ ցեղին պատկանող զանազան ժողովուրդների հետ և ներկա-

յումս մոնղոլական գծեր շատ քիչ կան նրանցում։ Թիւրքերը պարապում են զլխաւորապէս երկրագործութեամբ և այգեգործութեամբ։ Արտերում ցանում են ամենից շատ՝ ցորեն և գարի։ բացի հացահատիկներից նրանք մշակում են նաև ծխախոտ ու խաշխաշ։ Ծնկիոնի (օպիում) գործածութիւնը աւելի է տարածւում թիւրքերի մէջ։ Այդեղործութեան մէջ յատկապէս խաղողի մշակութիւնը կարևոր տեղ է բռնում։ Արևմտեան մասում զարգացած է նաև թթենիների մշակութիւնը, որի հետ և կապուած է որոշ չափով տարածուած մետաքսագործութիւնը։ Թերակղզուներսերում, աւելի չոր տեղեր, թիւրքերը զբաղւում են նաև անասնաբուծութեամբ։ Յայտնի են մանաւանդ Անգորայի այծերը,¹⁾ որոնք տալիս են թանգարժէք, մետաքսանման բուրդ։

Արդիւնագործութիւնը շատ քիչ է զարգացած։ Երկրում ծախւում են զլխաւորապէս եւրոպական գործարանային ապրանքները։ Եւրոպական ապրանքների վաճառումը աւելի սկսուեց տարածուել Թիւրքիայում մանաւանդ այն ժամանակից սկսած, երբ եւրոպացիները, զլխաւորապէս գերմանացիները, երկաթուղարյին գծեր անցկացրին այնտեղ — ծովափինեայ Զմիւռնիա և Սկիւտարի (վերջինս Կոստանդնուպոլիսի մի արուարձանն է ասխական ափում) քաղաքներից դէպի Անգորա։ Այստեղից էլ այժմ մի երկայն երկաթուղարյին գիծ է անց կացնում դէպի Բաղդադ՝ Միջագետքում։

Փոքր Ասիայի նաւահանգիստներից նշանաւոր են Զմիւռնիան, Տրապիզոնը և Սկիւտարին։ Զմիւռնիան գտնուում է Միջերկրական ծովի ափին. բնակիչների մեծ մասը յոյներ են. կան նաև շատ հայեր։ Տրապիզոնը գտնուում է Սև ծովի ափին։ Սկիւտարին Բոսֆորի ափին է և գտնուում է Թիւրքիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի դիմացը՝ Փոքր-ասիական հողի վրայ։

¹⁾ Այդ այծերը ամենից շատ պահուում են Անգորա քաղաքի շրջակայքում, ուստի և կոչում են Անգորայի այծեր։

Ներկայումս էլ Թիւրքիայում ապրանքների տեղափոխութիւնը տեղի է ունենում ուղտերի կարաւաններով։ Արտահանում են գլխաւորապէս ցորեն, մրգեր, ծխախոտ և բուրդ, իսկ ներմուծում են՝ եւրոպական գործարանային ապրանքներ։

Փոքր Ասիայի ծովափնեայ վայրերում և Եգիեան ծովի կղզիներում ապրում են յոյները։ Յոյները շատ ընդունակ են առևտրական գործերում։ Նրանց ձեռքին է գտնուում Փոքր Ասիայի առևտրի մեծ մասը։ Յոյները պարապում են նաև այգեգործութեամբ և սպունգներ որսալով Եգիեան ծովում։

Հայաստանում բացի Թիւրքերից ապրում են նաև շատ հայեր։ Հայերի թիւը այնտեղ հասնում է մօտ $2^{1/2}$ միլիոնի։ Մեծ մասը հայ-լուսաւորչական գաւանութեան է հետևում։ Կան նաև կաթոլիկ ու բողոքական հայեր։ Հայերի մեծ մասը պարապում է երկրագործութեամբ և անասնապահութեամբ, թէպէտ նրանց այդ զբաղմունքները շատ խանգարուում են կլիմայի խստութիւնից և քրդական յարձակումներից։

Քրդերը ապրում են Հայաստանի հարաւարեւեան կողմը ընկած լեռնային երկրում, որ Քրդաստան է կոչում։ Քրդերը մեծ մասով թափառաշրջիկ կեանք են վարում ու պարապում են անասնապահութեամբ։ Քրդերից շատ շատերը զբաղմունք են դարձել իրենց համար աւազակութիւնը։ Թիւրք կառավարութիւնը հովանաւորում է նրանց, որոնք և յաճախ յարձակում են խաղաղ ժողովուրդների, գլխաւորապէս հայերի վրայ, թալանում նրանց ու սպանում, բոլորովին անպատիժ կերպով։

Հայաստանում, ոռւսական սահմանի մօտերը, կան միքանի ամրոցներ։ Նրանց մէջ ամենամուլ բերդը Երգրումն է, որն և ամենամեծ քաղաքն է Հայաստանում։ Նշանաւոր է Հայաստանում նաև Վան քաղաքը, Վանայ լճի հարաւարեւեան ափին։

Փոքր Ասիայից հարաւ գտնուում է Կիարոս կղզին, որի բնակիչները յոյներ են։ Այդ կղզին առաջ թիւրքերին էր պատկանում, իսկ ընթացքում կարողացան բարձրացնել պղպարնակութեան վիճակը։

12. Միջագետք

Տիգրիս և Եվրաս գետերը դուրս գալով հայկական բարձրաւանդակից՝ հոսում են դէպի հարաւ մի գաշտավայրի միջով, որ կոչում է Միջագետք։ Այս գաշտավայրը գոյացել է յիշած գետերի բերած հողից և տիղմից։

Հնումը Միջագետքը, մանաւանդ նրա հարաւային մասը, իսկ ազգաբնակութիւն է ունեցել։ Քրիստոսից համարեա 2,000 տարի առաջ այնտեղ գտնուում էին հին աշխարհի ամենազօրեղ պետութիւններից երկուսը—Ասորեսանը (Ասսիրիա) և Բաբելոնիան։ Վերջինիս մայրաքաղաքը, Բաբելոնը, մօտ մէկ միլիոն բնակիչ է ունեցել։

Միջագետքը ծաղկած ժամանակ կտրուած է եղել բազմաթիւ ջրանցքներով, որոնցով արուեստական կերպով ջրուել են արտերը. Հողը եղել է արգաւանդ, բարերել և կերակրել է բազմաթիւ պղպարնեան։

Սակայն այդ հնումը ծաղկած և բարերել երկիրը այժմ անապատ է ներկայացնում։ Այնտեղ, ուր առաջ ջրանցքներով ոռոգուող հողի վրայ մշակուում էին փարթամ այգիներ և արտեր, այժմ ոչնչացրուած են ջրանցքները, հողը աւազու է և ճահճոտ, վատառողջ և անյարմար բնակութեան համար։ Առաջուայ մեծ և ծաղկած քաղաքներից այժմ աւերակներ են միայն մնացել։ Ճանապարհորդներին և գիտնականներին գրաւում են մանաւանդ Բաբելոնի աւերակները։

Միջագետքը այժմ շատ սակաւ է ընակուած։ Բնակիչները նստակեաց արաբներ են, որոնք ապրում են գետերի ափերին և ովագիսներում։ Նրանք պարապում են փիւնիկեան պրմաւենիների մշակութեամբ և անասնապահութեամբ։ Կան նաև Բելվիններ, որոնք աւազակութեամբ են պարապում։

Միջագետքը ամենակարճ ճանապարհն է Հնդկաստանից և հարաւային Պարսկաստանից դէպի Եւրոպա, այդ պատճառով էլ մեծ է Միջագետքի առևտրական նշանակութիւնը, որն աւելի ևս կմեծանայ, եթե կառուցուի արդէն նախագծուած երկաթուղին (գլխաւորապէս գերմանացիների նախաձեռնութեամբ) դէպի երկրի մայրաքաղաքը՝ Բաղդադ Նշանաւոր է

Միջագետքում նաև Մոսուլ քաղաքը: Երկուսն էլ գտնվում են Տիգրիսի վրայ:

13. ԱՐԱԲԻԱ

Արաբիան երկրագնդի ամենամեծ թերակղզին է (միայն 2 անգամ փոքր եւրոպական Ռուսիայից): Արաբիան ներկայացնում է մի ընդարձակ բարձրաւանդակ, բաղկացած հողակոշտերից: Իր բնութեամբ և կազմութեամբ Արաբիան աւելի նման է Հիւս. Աֆրիկայի, քան Ասիայի բարձրաւանդակներին: Արաբիայի մեծագոյն մասը գտնվում է տաք գոտում և ներկայացնում է աւազոտ անապատ, մանաւանդ հարաւային մասում: Գետեր համարեա թէ չկան այստեղ: Անձրևներ գալիս են սակաւ, այն էլ միայն ամենաբարձր վայրերում: Եղած ովաղիսներն էլ շատ քիչ են:

Միայն ծովափնեայ մասերում անձրւներ են գալիս և այնտեղ կարելի է մշակել հողը, ի հարկէ արուեստական կերպով ջրելով: Արաբիայի ամենալաւ մասն են կազմում Հեծալ և Եմինը (կամ երջանիկ Արաբիան), — կարմիր ծովի պին:

Այստեղ, սարերի լանջերին, տարածւում են լաւ արօտատեղիներ. մշակւում են նաև փիւնիկեան արմաւենիներ՝ ակացիաներ (որոնք տալիս են խէժ՝ գումմի-արաբիկ) և սուրճի ծառեր: Սարերից հոսող փոքրիկ գետակների հովիտներում ծաղկում են նաև այդիներ և արտեր:

Արաբիայի բնակիչները արաբներ են (մոտ 3 ½ միլ.), որոնց մի մասը նստակեաց է, իսկ միւս մասը՝ թափառաշըր՝ չիկ: Վերջինները կոչւում են բեդուիններ, որոնք պարապում են անասնապահութեամբ: Նրանք պահում են ձիերի, ուղտերի և ոչխարների ամենաընտիր տեսակները: Յայտնի է ամեն տեղ արաբական ձին: Բեդուինները յաճախ յարձակում են անապատով անցնող կարաւանների և նստակեաց արաբների գիւղերի վրայ: Նստակեաց արաբները ապահում են գետակների ափերին կամ անապատում եղած ովաղիսներում: Նրանք պարապում են փիւնիկեան արաբիայի գաղափարը՝ Մելկան՝ Եպիսկոպոսի պատուի պատճենը:


Նիներ, առարձի ծառ տնկելով, մշակում են բըինձ և ուրիշ հացահատիններ,—ի հարկէ արուեստական կերպով հողը ջրելով: Արաբիայում այնչափ շատ սուրճ է պատրաստում, որ արտահանուում է նոյն իսկ եւրոպա:



Նկ. 13.—Բեդուիններ, նրանց բնակարանը և զգեստը:

Արաբները պատերազմասէր և քաջ ժողովուրդ են: Դրդ դարում Ք. յ. Նրանց մէջ գուրս եկաւ Մահմէդ մարգարէն և հիմք դրեց մահմէդական կրօնին: Այդ կրօնը արաբները վէնքի ոյժով տարածեցին Արևմտեան Ասիայում և Հիւսիսային Աֆրիկայում: Ասկայն արաբների զօրութիւնը տեսական չեղաւ. Նրանք ընկան թիւրքերի իշխանութեան տակ, որոնք և տիւրքին նոյնիսկ Արաբիայի ամենալաւ մասերը Հեծալ և Եմինը: Ենքին նոյնիսկ Արաբիայի ամենալաւ մասերը Հեծալ և Եմինը: Թիւրքերի ձեռքում է այժմ նաև մահմէդականութեան հետեւ կարգադրութեան պատճենը՝ Մելկան՝ Եպիսկոպոսի պատճենը:

Արաբները ընդունակ ժողովուրդ են: Նրանք միջին գարերում հիմնեցին խոշոր պետութիւններ Արևմտեան Ասիայում և Հիւս. Աֆրիկայում և ամենաառաջադէմ ժողովուրդներից մէկն էին. ունէին հարուստ գրականութիւն, ընտիր բանամատեղծութիւն և նշանաւոր հատատութիւններ:



Կ. 14. Մեկկա. քառանկիւնի ու շէնքն է Քամրա:

Մահմեդական կրօնը, որ Արաբիայից դուրս եկաւ, ներկայումս մօտ 200 միլիոն հետեղներ ունի: Նրանք բաժանուում են երկու դաւանութեան—սիւնի և շիա: Առաջին դաւանութեան հետեղները բացի դուրանից ընդունում են նաև զանազան կանոններ և աւանդութիւններ, որոնք հաւաքուել և պահուել են Մահմեդի մահուանից յետոյ: Շիա դաւանութեան հետեղները ընդունում են միմիայն դուրանը: Արեւան Ասիայի մահմեդականներից շիային են հետեղում պարսիկները և Ասրպատականի թուրքերի (թաթարների) մեծ մասը: Մնացած մահմեդականները սիւննի են:

Աշխարհի բոլոր կողմերում ապրող մահմեդականները ամեն օր աղօթելիս իրենց երեսը գարձնում են դէպի Մեկկա, Մահմեդի ծննդավայրը: Տարեկան 100 հազար հոգուց աւելի մարդիկ (հաջիներ) ուխտ են գնում Մեկկա, աղօթելու Քամրա սրբավայրում և ծունդ դնելու «Սև քարին»: Վերջինս մահմեդականութեան գլխաւոր սրբութիւնն է համարում, որը, նրանց հաւատալով, երկնքից է բերուած Գարդիէլ հրեշտակապետի ձեռքով: Քրիստոնեաններին արգելում է, մահման երկիւղով, Մեկկա մտնել: Մինչև այժմ այսուղ եղել են միայն սաւ-

կաւաթիւ եւրոպացի ճանապարհորդներ: Մեկկայի նաւահանգիստն է Թիղդա:

Արաբիայի խորքերը շատ քիչ են ուսումնասիրուած: Նրանք հարաւ-արևմտեան անկիւնը գրաւել են անգլիացիները: Նրանք այդ մասում շինել են և լաւ ամրացրել Ալինը, որ նշանաւոր նաւահանգիստն է Եւրոպայից դէպի Հնդկաստան և յետ գնացող նաւերի համար:

Արաբիայի հարաւ-արևմտեան ծայրում ընկնում է մի արաբական պետութիւն, որ Ուման է կոչւում. որպա նաւահանգիստն է Մասկա: Այդ պետութիւնը գտնուում է անգլիական հովանաւորութեան տակ:

Արաբիայի մնացած մասերում ապրում են արաբական մանր ցեղեր, որոնք կառավարուում են իրենց շէյխերի ձեռքով: Այդ ցեղերը յաճախ կուիներ են մղում իրար դէմ:

14. ԱՍՈՐԻՔ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆ

Ասորիք (Սիրիա) և Պաղեստինը ներկայացնում են մի տեսակ շարունակութիւն Արաբիայի բարձրաւանդակի և բաղկացած են հողակոշտերից: Միջերկրական ծովի ափով, հիւափից դէպի հարաւ, ընկած է Լիբանանի լեռնաշղթան (Յամունա) ու բաժանուած է մի ընդարձակ հովիսով արևելեան կողմն ընկած Անտիլիբանան լեռնաշղթայից:


Հին ժամանակներում Ասորիքը (Ասսիրիա), շշփոթել Ասորիստնի (Ասսիրիա) հետ, որ գտնուում էր Միջագետքում, ինչպէս օր. Փոքր Ասիան, ամենահարուստ և ամենարերի երկրներից մէկն էր: Ասորիքը ունէր շատ առեւրական բազաքներ: Այժմ էլ այնտեղ ամեն մի քայլափոխի վրայ կարելի է հանդիպել հին քաղաքակրթութեան մնացորդների, —հոռվմէական, արաբական և քրիստոնէական հնութիւնների աւերակների: Ներկայումս նուահանգիստները խանգարուած են, երկրի մեծ մասն էլ ներկայացնում է անապատ, որտեղ թափառաշընիկ կեանք և են վարում արաբ-բեղուինները: Միայն Միջերկրականի ծովափը և Անտիլիբանանի արևելեան լանջերը, որտեղ կան շատ ութափիսներ, յարմար են նստակեաց բնակութեան համար:

Լիբանանի և Անտիլիբանանի մէջ ընկած ընդարձակ հովով է հոսում Յորդանան գետը, որը հոսում է դէպի Միևնալ ծովը¹⁾ (190 սաժէն ցածը ովկիանոսի մակարեսոյթից):

¹⁾) Մեռեալ ծովը մի լիճ է, որի ջուրը շատ աւելի հարուստ է

Ասողիքի և Պաղեստինի բնակիչների մեծ մասը արար-
ներ և նրանց ցեղակից ասորիներ են (հրէաները իրենց
հայրենիք Պաղես-
տինից ցըռւել
են աշխարհի բո-
լոր կողմերը և
այժմ քիչ հրէա-
ներ են ապրում
(Պաղեստինում):
Արաբների և ա-
սորիների գլխա-
ւոր զբաղմունքը
այդ գործում ու-
թիւնն է: Այ-
դիներում շատ
լաւ աճում են
խաղողիորթ, ար-
մաւենի, ձիթենի,
նարինջ: Ասո-
րիքում, Անտիլիբանանի ստորոտներում, ծաղկում է և մե-
տաքսործութիւնը: Արաբները պարապում են նաև
երկրագործութեամբ: Բայց որովհետեւ ամառը Ասորի-
քում և Պաղեստինում անձրեւներ չեն գալիս, ուստի և ցանքու-
անում են աշնանը, որ արտերը ջրուեն աշնանային և ձմե-
ռային անձրեւներով: Հունձը լինում է գարնան սկզբին:


Նկ. 15 Յորդանան:



Արհեստները և առևտուրը կենդրոնացած են քա-
ղաքներում: Ասորիքի ամենանշանաւոր քաղաքն է Գամալիոս:
Սա երկաթուղով միացած է Բեյրութ նաւահանգստի հետ:
Պաղեստինի գլխաւոր քաղաքն է Երուսաղէմ, որ ունի մօտ 50
հազար բնակիչ և երկաթուղով միացած է Եաֆֆա (Յոպպէ):

աղով, քան սովորական ծովային ջուրը, այնպէս որ այդ ջրում չեն
կարող ապրել ոչ կենդանիներ, ոչ էլ բոյսեր. դրա համար էլ կոչում

չնումը Պաղեստինը ունեցել է մինչև 4 միլիոն բնակիչ, իսկ
ներկայումս՝ 400 հազարից էլ պակաս: Յորդանանի արևելեան կողմը
ընկած մասը կատարեալ անապատ է, որտեղ թափառում են սակաւա-
թիւ բեղուիններ:



Նկ. 16 Երուսաղէմ:


Երուսաղէմը քրիստոնեաների, հրէաների
և մահմեդականների համար սրբազն
քաղաք է: Ամեն տարի տասնեակ հազա-
րաւոր քրիստոնեաներ ուխտ են գնում
Երուսաղէմ: Երուսաղէմի գլխաւոր սրբ-
ութիւնը Յիսուսի գերեզմանն է, որի
վրայ կառուցուած է մի եկեղեցի և պատ-
կանում է բոլոր քրիստոնէական դաւա-
նութիւններին և որտեղ անդադար ժամապաշտութիւն է լինում զա-
նազան լեզուներով: Երուսաղէմում է գտնում նաև հայկական Ս. Յա-
կոբայ վանքը, որ ունի միաբանութիւն:

Պաղեստինից հարաւ է ընկնում Սինայի թերակղին, որ
քարքարոտ մի անապատ է: Այստեղ թափառում են բեղուիններ, ուր
մշտական բնակութիւն չկայ: Այստեղ է գտնուում Մովսէսի սարը,
որի ստորոտում կայ մի քրիստոնէական վանք, իսկ սարի կատարի
վրայ՝ եկեղեցի և մզկիթ: Մովսէսի սարի կագաթից հրաշալի տեսա-
րան է բացւում դէպի Կարմիր ծովը և Աֆրիկայի ափերը:

15. Ի Ր Ա Ն

Հայաստանից դէպի հարաւ-արևելք գտնուում է Իրանի
Վարձրաւանդանից դէպի հարաւ աւելի մեծ է Փոքր Ասիս-
տարձրաւանդան:

յից և շրջապատուած է աւելի բարձր սարերով։ Ամենաբարձրը՝ ները գտնուում են հիւսիսում—Հինդուկուս և կիրուս։ Ելքուրս լեռների ամենաբարձր գազավճն է Դիմաւենի, որ մօտ 5^{1/2} վերստ բարձրութիւն ունի, նաև հանգած հրաբուղիս է։



Նկ. 17 Տաճար Յիսուսի գերեզմանի վրա։

նում աճում են միայն կիրուրսի հիւսիսային լանջերում որտեղ մթնոլորտային տեղումներ շատ են թափւում։ անտառներ կան նաև հինդուկուշի հովիաներում։ Խոկ իրանի ամենալարձակ մասը անապատ է, ծածկուած գեղին աւազով կամ աղի շերտով, որը արեի տակ փայլում է՝ ինչպէս ձիւն։ Մարդկային բնակութեան համար իրանում ամենից յար-ջրառատ չեն և համարեա բոլորն էլ կորչում են աւազուտների և աղի ձահճուտների մէջ, ինչպէս օրինակ Հիլմենի գետը։ Հայոց և այնպէս այդ գետերի տփերին կարելի է պարապել երկրագործութեամբ և այգեգործութեամբ, գետե-

իրանի կլիման չոր է. ամառը այսահեղ սաստիկ շոգեր են անում, լինում են երկարատև երաշտներ. հազուադէպ են երեւում երկնքում ամպեր և օդը լցուած է լինում փոշով։ Զմեռը եղանակը խոնաւ ու ցուրտ է լինում և սարերի լանջերը ծածկում են ձիւնով։ Գարնանը ձիւնը հալշում է և ձիւնի տակից բնում է խոտ, որը սակայն շուտ է չորանում։

Անտառներ իրա-

րից բերուող ջրանցքների միջոցով արտերը արուեստական կերպով ջրելով։ Որպէսզի ջուրը զուր տեղը չգոլորշանայ, իրանի ժողովուրդները՝ պարսկիները և աֆղանները այդ ջըրանցքները յաճախ գետնի տակ են շինում, երբեմն շատ խորը, մինչև 50 սաժէն և աւելի։ Ալդախիսի ստորերկրեայ ջըրանցքները իրանում կոչւում են «կանատներ» և յաճախ ընկած են մի քանի տասնեակ վերստ երկայնութեան վրայ։

Իրանի դաշտերում ցանում են բրինձ, ցորեն և դարի։ Վերջին ժամանակներս սկսել են մշակել նաև բամբակ և խաշխաշ (ափիոն պատրաստելու համար)։ Այդիներում աճում են դեղձի, ծիրանի ծառեր, փիւնիկեան արմաւենիներ, նշի ծառ, խաղողի որթ, և այլն։ Միրգ շատ է ստացւում իրանի այգիներից։ յայտնի են իրանի չորացրած մրգերը։

Սարերի լանջերին, որտեղ խոտ է բնում, ապրում են թափառաշրջիկ անասնապահներ, որոնք պահում են ձի, ուղար, ոչխար և այծ։ Խոշոր եղջիւրաւոր անասունների համար իրանի արօտատեղիները յարմար չեն։

Իրանի բարձրաւանդակի վրայ գտնուում են երեք պետութիւններ—Պարսկաստան, Աֆղանստան և Բեղուջիստան։

16. ՊԱՐՄԿԱՍՏԱՆ

Իրանի բարձրաւանդակի արկմտեան, ամենամեծ, մասը բոնում է Պարսկաստանը (որը 3 անգամ փոքր է Եւրոպական Թուսաստանից), որ ունի մօտ 9 միլիոն քնակիչ։ Ազգաբնակութեան մեծ մասը պարսկիներ են. նրանք սպիտակ ցեղին են պատկանում. ցեղակից են հնդիկներին և հայերին։ Պարսկականները բոլորն էլ մահմեղական են (շիա)։ Նրանց կառավարում է շահը, որ համարւում է Մահմեդի փոխանորդ։

Հնումը Պարսկաստանը ամենազօրեղ թագաւորութիւններից մէկն է եղել, իսկ այժմ, Թիւրքիայի նման, ամենայետարկ է այս պատկանութեան ձեր շատ վատ է։ Փողոմնացներից է։ Կառավարութեան ձեր շատ վատ է։ Փողոմնացներից է։ Կառավարութեան ձեր շատ վատ է։ Այս պատկանութեան համար ծանրաբեռնուած է մեծամեծ հարկերով։ Շահի նշակած պաշտօնեաները հաւաքում են ժողովրդից առուրքեր և նակած պաշտօնեաները հաւաքում են ժողովրդից առուրքեր և

դատում՝ նրանց իրենց քմահաձոյքի համաձայն, որովհետեւ Պարսկաստանում համարեա գոյութիւն չունի օրէնք ասած բանը: ¹⁾ Ժողովուրդը աղքատ է, թշուառ փիճակի մէջ: Մշակուող հողը համարւում է սեփականութիւն շահի կամ զանազան կալուածատէրերի, սրանք իրենց են վերցնում հնձի մեծ մասը: Ժողովրդական կը թութիւն ասած բանը չկայ. եղած ուսումնարաններում էլ սովորեցնում են սիայն Ղորան կարդալ:

Երկաթուղիներ չկան Պարսկաստանում: Ապրանքների տեղափոխութիւնը կատարւում է ուղարկով և ձիերով, որոնցից կարաւաններ են կազմուում: Արտաքին առևտուրը գտնուում է օտարերկրացիների ձեռքին:



Նկ. 19. Պարսկական կտոր:

¹⁾ Ճիշտ է, ներկայ շահը խոսուցել է երկրին սահմանադրութիւն, և այժմ թէ զրանում կայ պարլամենտ (մէջլիս), բայց նոր սահմանադրութիւնը զնու ևս առաջ է իրերի վրայ չէ գրուած. Երկրը այժմ անիշխանական դրութեան մէջ է:

նային ապրանքներ: Պարսկաստանի մայրաքաղաքը և ամենաշանաւոր առևտորական կենդրոնն է՝ Թէհրան: Սա գտնուում է կերպուրս սարի հարաւային ստորոտում, որի լանջերից քաղը ստորերկրեայ ջրանցքների միջոցով ջուր է ստանում:

Միւս քաղաքներից նըշանաւոր են՝ Խաչտը, Բուշիրը, Թաւրիզը և Մեշեղը: Թաշի վրայով է կատարեւում առևտուրը Խուսաստանի հետ, Բուշիրի վրայով՝ Անդիա-



Նկ. 20. Փողոց Թէհրանում:

Եթ հետ, իսկ Թաւրիզի վրայով Թիւրքիայի հետ: Թաւրիզում է նստում պարսից թազաժառանգը: Այստեղ կան մօտ 800 տուն հայեր: ունեն իրենց գպրոցները, բարեգործական ընկերութիւնները: Այստեղ է նստում Ատրպատականի հայոց առաջնորդը: Մեծէլոր պարսիկների սրբազն քաղաքն է, ուր ամեն տարի բազմաթիւ ուխտաւորներ են գնում Պարսկաստանի բոլոր ծայրերից և հարեան երկրներից: Մնացած քաղաքներից յիշատակութեան արժանի է Սպահանի, Երկրի հին մայրաքաղաքը: Այդ քաղաքի մօտ է գտնուում հայաքնակ Նորջուլա քաղաքը, որի բնակիչները գաղթել են Շահ Աբասի օրով: Նոր Զուղայում հայերը ունեն գպրոցներ, բարեգործական ընկերութիւններ: Այստեղ է նստում Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց առաջնորդը:

17. ԱՅՑԱՆԻՄԱՆ

Իրանի հիւսիս—արևելեան մասը, Հինդուկուշ լեռները և Պամիրի արևմտեան մասը բռնում է Աֆղանիստան տերու-

թիւնը: Բնակիչները կազմում են պարսիկներին ցեղակից աֆղանները և տաճիկները: Աֆղանները սպիտակ ցեղին են պատկանում, բայց խառնուած են ուրիշ ժողովուրդների հետ: Նրանք մահմեդական են, պատերազմակար: Ապրում են գիւղերում և պարապում են երկրագործութեամբ ու անասնապահութեամբ: Քաղաքներում ապրում են տաճիկները: սրանք պարսիկների և մոնղոլական ցեղի ուրիշ ժողովուրդների խառնուրդ ժողովուրդ են: Տաճիկները պարապում են արհեստներով և առևտուվ:

Աֆղանիստանը $1\frac{1}{2}$ անգամ մեծ է Գերմանիայից, բայց բիշ է բնակուած (4 միլիոն): Երկիրը կառավարում է էմիրը՝ որ ապրում է Կաբուլ մայրաքաղաքում, անգլիական սահմանին մօտ: Միւս նշանաւոր քաղաքն է Հերատ, որ գտնւում է ոռւսական սահմանին մօտ:

Իրանի բարձրաւանդակի հարաւարեկեան մասը կոչում է Բելուջիստան, որ պատկանում է անգլիացիներին Բելուջիստանը իրանի բարձրաւանդակի ամենաամայի, սակաւաբնակ մասն է: Բնակիչները մահմեդական են, կիսավայրենի և վարում են թափառաշրջիկ կեանք: Նրանց կառավարում են իրենց խաները, որոնք այժմ ուստիկ են ստանում Անգլիայից: Անգլիացիները երկաթուղային գծեր են անցկացրել երկրով և շինել են կիլոսու—ամրոցը:

18. Խիզը եհ ԲՈՒԽԱՐԱ

Ամուշարիա գետի երկայնութեամբ ընկնում են Ռուսաստանի գերիշխանութեան տակ գտնուող երկու երկրներ—Խիզը և Բուխարա: Իրենց ընութեամբ նրանք յիշեցնում են Հիւսիսային իրանը և Արևելեան թուրքեստանը: Այդ երկրների կլիման չոր է, ամառը շոգ է լինում, իսկ ցմեռը՝ բոււական ցուրտ: Անտառներ քիշ կան: Դաշտերը և այգիները արուեստական են կերպով են ջրուում, ջրանցքներով ջուր բերուում է Ամուշարիայից կամ ուրիշ գետերից, որոնք հոսում են Պամիրի և Տեանշանի սարերից: Դաշտերում ցանում են բրինձ, ցորեն,

բամբակ: Այդիներում աճում են դեղձի, ծիրանի ծառեր: Տեանշանի լանջերում կան լաւ արօտատեղիներ, որոնք կերակրում են թափառաշրջիկների հօտերը:

Այդ տէրութիւններում ապրում են թիւրք—թաթարական ժողովուրդներ, ինչպէս օրինակ՝ ուզբէկներ, սարթեր, նաև սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդներ օրինակ՝ պարսիկներին ցեղակից տաճիկներ: Ուզբէկները տիրող ժողովուրդն են:

Խիզայի զլիաւոր քաղաքն է Խիզա, իսկ Բուխարայի զլիաւոր քաղաքը՝ Բուխարա:



ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ
19. ԲՆԴՀԱՆՈՒԹՅ ԱԿՆԱՐԿ

Կենդրոնական Ասիան տարածւում է Հիմալայան լեռներից մինչև Սայեանեան լեռները և Պամիրից մինչև Խինհան: Կենդրոնական Ասիան չորս կողմից սարերով շրջապատուած լինելով ունի չոր կլիմայ: մակերեսոյթին կ. 21. Բելուջիստանի խան: կազմութիւնն էլ անապատացին է, մանաւանդ միջին մասում, որտեղ տարածւում է խանիայ ցածրութիւնը, որ չինարէն է և նշանակում է «չորացած ծով»: Հին ժամանակներում, յերաւի, այդ ցածրութիւնը ծածկուած է եղել ջրով, իսկ այժմ անապատ է: սրա արևմտեան մասը աւագու է, իսկ արեւելեան մասը քարքարոտ անապատ է և կոչում է Գորի կամ Ճամօ: Գորի անապատից հիւսիս նկնում է Վոնդոլական տափաստանը, որ ծածկուած է ցածրիկ խոտով: Դարձանը այդ տափաստանը կանաչում է և ծածկուած գոյնզգոյն ծավակներով: բայց այդ երկար չէ տեսում: ամառը սկսուելուն պէս տափաստանը չորանում է և ծածկուած փոշով: Հողագործութեան համար Վոնդոլական տափաստանը անյարմար է, որովհետև չափազանց չոր է:

Մարգարին ընակութեան համար անյարմար է նմանապէս Տիրեանի բարձրաւանդակը, որ ամենաբարձր լեռնոտ երկիրն է երկրագնդի վրայ: Տիրեաի լեռների զագաթները ծածկուած են ձիւնով: Մարերի լեռները միայն ծածկուած են լինում անշան խոտով: Անտառ համա-

բեա թէ ոչ մի տեղ չկայ. հովիտներում կան աղի լճեր: Կ լի ման է խիստ ցամաքային է: Զմեռները սաստիկ սառնամանիքներ են մի նում, մինչև 40° ցրտութիւն, ամառներն էլ սաստիկ շոգեր են անում: [Կրկնել «կլիմայ» դասի (յօդ. 5) կենդր. Ասիային վերաբերող կտորը] կենդրոնական Ասիան բռնում է ամբողջ Ասիայի 1/6 մասը, սակայ շատ նոր է բնակուած: Այնտեղ ապրում են ընդամենը մօտ 6 միլ լին բնակիչ: Կենդրոնական Ասիայի մասերն են կազմում—Տիբետ Արևելեան թուրքեստան և Մոնղոլիա:

20. Տ Ի Բ Ե Տ

Տիբետի բնակիչներն են մոնղոլական ծագում ունեցող տանգուտները և տիբետցիները: Տանգուտները թափառ աշրջիկ խաշնարածներ են: Բացի ոչխարից և ձիուց նրանք պահում են նաև եակ (լեռնային ցուլ): Այս կենդանին գործ է ածում նստելու կամ բեռնակրութեան համար: Նա հեշտութեամբ կարող է սար բարձրանալ նոյնիսկ շատ ծանր բեռ վրան: Տանգուտները ապրում են սև վրաններում, պատրաստուած եակ կենդանու բըդից:

Տիբետցիները մեծ մասով նստակեաց կեանք են անցկաց նում: Լեռնային հովիտներում նրանք մշակում են գարի և ցորեն. ապրում են քարաշէն տներում: Տիբետցիները խառնուրդ ժողովուրդ են. մասամբ նման են մոնղոլներին, մասմբ էլ չինացիներին: Չինացիներից են փոխ առել նրանք իրենց քաղաքակրթութիւնը—տներ շինելու եղանակը հող ճշակելու—ձեւնոյնիոկ զգեստները: Իրենց միւս հարեան ներից, հնդիկներից, փոխ են առել իրենց կրօնը՝ բուդդիզմական ութիւնը.

Բուդդիական կրօնը ծագել է 6-րդ դարում Քրիստոսից առաջ Այդ կրօնի հիմնադիրն էլ հնդիկական մի իշխանի որդի՝ Սակիա-Առունի կամ Բուդհա անունով: Բուդդիայի հետեւողները հալածուեցին Հնդկաստանից և տարածուեցին կենդրոնական և Արևելեան Ասիայի ամբողջ տարածութեամբ: Այժմ այս կրօնին հետեւում են երկրագոյնի վրայ առելի թուրով մարդիկ, քան որևէ ուրիշ կրօնի:

Բուդդիայականութիւնը առանձին և աւելի ազգեցութիւն է ունեցել Տիբետի ազգաբնակութեան վրայ: Համարեա ամեն մի ընտանիք միջից դուրս է գալիս մի հոգևորական: Հոգևորականները Տիբե-


տում կոչւում են լաման եր: Տիբետում կան բազմաթիւ վանքեր, որոնցում ապրում է ազգաբնակութեան համարեա 1/8մասը:

Տիբետի և ընդհանրապէս բոլոր բուդդիայականների կրօնապետը կոչւում է Դալայ-Լամա, որ համարւում է Բուդդիայի մարմնացումը և փոխանորդը այս աշխարհի վրայ: Դալայ-Լաման և նրան շրջապատողներն են կառավարում Տիբետը, որը սակայն գտնւում է Չինաստանի գերիշխանութեան տակ: Դալայ-Լաման ապրում է երկրի մայրաքաղաք Լիասայում (25,000 բնակիչ):

Դալայ-Լամային երկրագելու համար ամեն տարի հազարաւոր ուխտաւորներ են գնում Լիասասա՞ ոչ միայն կենդրոնական Ասիայից, այլ նաև Արևելեան և Հարաւային Ասիայից: Բայց եւրոպացիների մուտքը Լիասասարգելուած է:

Այդքաղաքի մըշտական բնակիչների մեծ մասը կլօնաւորներից է բաղկացած:

21. ԱՐԵՒԵ-ԼԵԱՆ ԹՈՒԻՐ-ՔԵՍՏԱՆ



Նկ. 22. Լամա: Վանք Լիասայում, որտեղ ապրում է Դալայ-Լաման: սաստանի 1/3-

ին, սակայն ունի հազիւ մէկ միլիոնից աւելի բնակիչ: Բնակիչների մեծ մասը նստակեաց կեանք է վարում, ապրում է ովազիսներում, սարերի ստորոտներում, թարիմ և ուրիշ գետերի ափերին: Բնակիչների մեծ մասը թուրք-թաթարներ են: Արանք

փորել են անհամար ջրանցքներ, որոնցով և գետերից ջուր են բերում իրենց դաշտերը և այդիները ջրելու համար Այստեղ ստացւում են լաւ ցորեն, ձմեռուկ, սեխ և ուրիշ տեսակ մրգեր—ծիրան, դեղձ և այլն։ Բայց որտեղ ջուր չէ հասնում, այստեղ երկիրը աւագոտ անապատի է փոխւում։

Արևելեան Թուրքեստանի ամենանշանաւոր քաղաքներին են՝ Եարկինդ և Կասպար։

Արևելեան Թուրքեստանն ևս պատկանում է չինացիներին և կառավարւում է նրանց պաշտօնեաներով։

22. ՄՈՆՂՈԼԻԱ

Մոնղոլիան Արևելեան Թուրքեստանից երկու անդամ առելի մեծ է, բայց նրանից էլ աւելի նոսր է բնակուած, ըլ-




Նկ. 23. Մոնղոլներ.

նակիչների թիւը 2 միլիոնից պակաս է։ Աւագոտ անապատ ներ գտնուում են նրա արևելեան մասում միայն, իսկ երկրի մեծ մասը՝ տափաստան է, շատ սակաւ բուսականութեամբ։

կամ թէ չէ՝ քարքարոտ անապատներ։ Մոնղոլիաի բնակիչները բոլորն էլ թափառաշրջիկ են։

Թափառաշրջիկ մոնղոլները պարապում են անապատապահութեամբ—պահում են ոչխար, ձի և երկսապատ ուղտերը անասունները ուտում-վերջացնում են մի տեղի խոսր, նրանք քոչում են մի ուրիշ—խոտաէտ տեղ։ Ամառը, երբ գաշտերում չորանում է խոտը, նրանք բարձրանում են Սալահինան, Ալտայիան և Տիան-Շան սարերի լանջերը, որտեղ ամբողջ ամառ արօտատեղիները մնում են կանաչ։

Մշտական, հաստատուն բնակավայրեր Մոնղոլիայում շատ քիչ կան։ Դրանք կամ վանքեր են, որտեղ ապրում են լամաներ (բազդհայական կրօնաւորներ) կամ՝ փոքրիկ քաղաքներ։ Ամենանշանաւոր քաղաքն է Մոնղոլիայում՝ Այրգաւ Այստեղ կան բազդհայական շատ վանքեր և տաճարներ, որտեղ ապրում են հազարաւոր լամաներ և նրանց ամենաբարձր կրօնաւորը, որ կոչում է բօղոք։ Ուրգայով են անցնում թէյի կարաւանները, որոնցով մոնղոլները թէյ են փոխադրում Չինաստանից Ռուսաստան, սահմանակից Կենաչան քաղաքի վրայով։



Նկ. 24. Չինական մեծ պարիսպ.

Պուտեան Ասիա ու Եվրոպին շատ երկար լըներ. նրանք տիւրեցին Հայաստանը և նոյն իսկ Ռուսաստանը Մոնղոլները յաճախակի արշաւանքներ էին գործում չինացիների

կրայ, որոնք և իրենց նրանց դէմ պաշտպանելու համար շինեցին չի նական մեծ պարիսպը, որ 2,000 վերստից աւելի երկայնութիւն ունի: Բայց մոնղոլները յետոյ բուդուհայականութիւն ընդունեցին, որ խաղաղութիւն և անգործութիւն է քարոզում: Այսպէս՝ թուլացան մոնղոլները և ուուաճուեցին չինացիներից: Այժմ մոնղոլները ենթարկում են Չինաստանին և նրանց իշխանները չինական կառավարութեանը հարկ են վճարում:

Մոնղոլները ցածրահասակ են, սև, բիզ և կոշտ մազերով: Նրանց գլուխը մեծ է, երեսը՝ լայն, աչքերը թեր: Մոնղոլների դէմքի գծարութեան մէջ այնչափ աչքի են ընկնում՝ դեղին ցեղի բոլոր առանձնայատկութիւնները, որ յաճախ դեղին ցեղ ասելու փոխարէն ասում են մոնղոլական ցեղ.

ՀԱՐԱՒՅԻՆ ԱՍԻԱ

23. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հարաւային Ասիայի մասերն են կազմում—Հնդկաստան, Հնդկաջին և Վալայիան արշաբելափի կղզիները: Այս բոլոր երկրներն էլ համարեա ամբողջովին տաք գոտում են գտնուում. այն մասերն ևս, որոնք արևադարձից հիւսիս են ընկած, նմանապէս ունեն արևադարձային, տաք և մեծ մասով խոնաւ կղզմայ: Զմեռ, ինչպէս մեզնում է, այնտեղ չենում: Տարուայ ամենազոր եղանակն էլ աւելի շող է, քան մեզ նում ամառը, իսկ տարուայ եղանակները որոշուում են այն բանով՝ ձիւն գալիս է, թէ ոչ:

Կը կնել «կլիմայ» դասի (յօդ. 5) Հարաւային Ասիա-յին վերաբերող կտորը:

Հարաւային Ասիան բնութեամբ ամենահարուստ մասն է ամբողջ մայր ցամաքի, ունի հարուստ, արևադարձային բուսականութիւն և շատ խիտ բնակչութիւն: Այստեղ շատ հին ժամանակներում արդէն ազդաբնակութիւնը նստակեաց կեանք էր վարում, հասել էր բարձր դարձացման և կազմակերպել մեծ պետութիւններ, որոնք յետոյ եւրոպացիների իշխանութեան տակ ընկան:

24. ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստան կոչւում է այն ընդարձակ (մեծութեամբ համարեա հաւասար Եւրոպական Ռուսաստանին) երկիրը, որ արևելեան կողմից ողողուում է Բնադրական ծոցով, արևմուտքից Արաբական ծովով, իսկ հիւսիսային կողմից նրա սահմանա-


են կազմում Հիմալայեան, Սոլիմանեան և Հնդկաչինի լեռները: Հնդկաստանը շատ հարուստ քնութիւն ունի: Ամառը հարաւար և մտեան մուսսոնները յորդ անձրևներ են բերում այնտեղ: Մանաւանդ շատ անձրևներ են գալիս Դեկան բարձրաւանդակի արևմտեան ծայրերում, որոնք աւելի բարձր են, սարերի նման, (1 վերսա) ու կոչւում են Արևմտեան Հարէս (Արևելեան Հարէսը՝ 1/2 վերստ բարձր): Անձրևներ շատ են գալիս նաև Հիմալայեան սարերի ստորոտներում՝ Բնենգալիայում, այսինքն այն արդաւանդ հարթութեան վրայ, որ գոյացել է Գանգէսի, Բրահմապուտրայի և նրանց վտակների բերած հողից և տիղմից: Այդ հարթութեան հիւսիս-արևմտեան մասում՝ Ինդուսի և նրա վտակ Սենլեջի մէջ ընկած վայրերում շատ աւելի պակաս, թէ գարձեալ բաւարար չափով, անձրև է գալիս: Իսկ աւելի արեելք ընկած է Թար անապատը, որտեղ արդէն շատ հազուադէպ են լինում անձրեները:

Իր լաւ ոռոգման և տաք կլիմայի շնորհիւ Հնդկաստանը երկրագնդի ամենապտղաւէտ երկրներից մէկն է: Նրա աւելի խոնաւ տեղերում, մանաւանդ Բնենգալիայում, առատօրէն աճում է բրինձ. համեմատաբար աւելի պակաս խոնաւ տեղերում աճում են՝ ցորեն, բամբակ, կորեկ, բանան և ուրիշ շատ մշակովի բոյսեր:

Շատ հնուց այստեղ ընդարձակ տարածութիւններ, աւելի խոնաւ տեղերում, ծածկուած էին արևադարձային անտառներով: Այդպիսի անտառներ այժմ էլ կան Հիմալայեան լեռների լանջերում և Արևմտեան Հարէսի վրայ: Դեկանի վրայ եղած սաւաններն էլ համարեա բոլորը մշակուած դաշտ են այժմ:

Հարուստ է նաև Հնդկաստանի կենդանական աշխատանքը: Հնդկաստանի արօտատեղիները կերակրում են միլիոնաւոր անասուններ, մանաւանդ սապատաւոր եղներ (զեբու) և գոմէշներ: Դեռ հին ժամանակներում էլ Հնդկաստանը յայտնի էր ալմաստ և մարգարիտ թանկագին քարերով. այժմ էլ

ալմաստ գնուում է Դեկանում, իսկ մարդարիտ՝ ծովում,
Յէլոնի եղերքում:



Նկ. 25. Հիմալայեան լեռներ:

Թէպէտ իր տարածութեամբ Հնդկաստանը Եւրոպական
Ռուսաստանից էլ փոքր է, բայց այստեղ ապրում են 300
միլիոն բնակիչներ, այսինքն՝ երկու անգամից էլ աւելի
շատ, քան ամբողջ Ռուսաստանում:

Շատ հին ժամանակներում Հնդկաստանում ապրում էին զրա-
սի գներ, ու ցեղին պատկանող մի ժողովուրդ: 2,000 տարի Քրիստո-
ւեղին պատկանող հնդիկները: Սկ գրաւիդներին նրանք դէպի հա-
րա քշեցին—Դեկանի բարձրաւանդակը և Ցէլըն կղզին: 15-րդ դարի
վերջում Ք. Տ. յետոյ այդ երկիրը արշաւեցին թափառաշրջիկ մոն-
ղուները, որ եկել էին կենդրանական Ասիայից: Նրանք իրենց հպա-
տակեցին հնդիկներին, հիմնեցին մեծ պետութիւններ և իրենք էլ
նստակեաց դարձան: Սակայն ժամանակի ընթացքում նրանք իրա-
նուեցին հնդիկների հետ և մոռացան նոյն իսկ իրենց լեզուն: Վերջա-
պէս, երբ գտնուեց ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան, այն ժա-
մանակից դէպի այդ երկիրը դիմեցին շատ եւրոպացիներ—սկզբում
պրոտոգալացիներ, յետոյ ֆրանսիացիներ և անգլիացիներ:
Ներկայումս Հնդկաստանը պատկանում է Անգլիային:

51
Սրան են պատկանում նաև Հնդկաչին թերակղզու հիւսիս — արհ-
մտեան մասը և Բելուջիստանի արևելեան մասը: Անգլիական այս
բոլոր կալուածները միա-
սին կոչւում են «Բը ի-
տանական Հնդկաստան»: Բը իտանական
Փասեան Հնդկաստանը մակերեսոյ-
թի տարածութեամբ հա-
մարեա հաւասար է Եւ-
րոպայի կեսին և 14 ան-
գամ մեծ է Անգլիայից:



Նկ. 26. Հնդկական լըջանի կենդանիներ:

Հնդիկների ազգեցութեան տակ: Նրանց թիւն է մօտ 15 միլ-
լիոն: Հնդկաստանի հիւսիսարևելեան մասը և Հնդկական
հարթութիւնը բնակուած են սպիտակ ցեղին պատկանող
հնդիկ ժողովրդով: Հնդիկների թիւն է մօտ 200 միլիոն: Նրանք
են կազմում Հնդկաստանի ազգաբնակութեան գլխաւոր

մասը և բաժանւում են շատ ցեղերի: Հնդիկները յայտնի են իբրև բարի, մեղմ բնաւորութեան տէր ժողովուրդ:



նկ. 27. Դրաւեր




նկ. 28. Հնդկուհի

Հնդիկները պարապում են երկրագործութեամբ: Խոնաւ վայրերում նրանք մշակում են զլխաւորապէս բրինձ: Այս բոյսի աճելու համար բաւական չեն նոյնիսկ այն առատ անձրեները, որ տեղում են Բենգալիայում: այդ պատճառով էլ հնդիկները Գանգէս և ուրիշ գետերից փորած ջրանցքներով ջուր են բերում և զաշտերը ջրում: Ծնորհիւ այս բանի էլ այստեղ տարեկան երկու անգամ է բընձի հունձ լինում: Աւելի արևմուտք, որտեղ պակաս անձրէ է լինում, յաջողուում է տարեկան միայն մէկ հունձ: Ինդոս գետի և նրա վատակների մէջ եղած տարածութեան վրայ հնդիկները գերադասում են մշակել ցուրեն, իսկ Դեկանի բարձրաւանդակի վրայ՝ կորեկ:

Բացի հացահատիկներից՝ հնդիկները իրենց գաշտերում մշակում են նաև շատ ուրիշ բոյսեր: Նրանցից ամենանշանաւորներն են՝ բամբակ, չուտ կամ հնդկական կանեփ, որի թելերից պարան են գործում, խաշեաց, որից պատրաստում են ափիոն (չինացիների համար):

Այդիներում տնկում են բանան և զանազան տեսակի արմաւենիւր (Կոկոսեան և Փիւնիկեան արմաւենիներ): Հիմալայեան և հագէս լեռների լանջերում վերջերս սկսել են գցել նաև թէյի տնկարաններ (պլանտացիաներ): Յէլլոն կղղին համա-

րեա ամբողջովին ծածկուած է թէյի, սուրճի և կինամոնի (դարչինի) տնկարաններով:



նկ. 29. Փիւնիկեան արմաւենի:

մն ապրում: Այդ աղբատութիւնը երկու գլխաւոր պատճառ ունի. 1) Հնդիկները թուլակագմ են, չեն կարողանում այնպէս աշխատել, ինչպէս եւրոպացիները, և 2) Հնդկաստանը այնչափ շատ բնակիչներ ունինի, որ ամեն մէկին հացահատիկի և պտղի հնձի մի չնչին մասն է ընկնում: Եւ երբ հունձը վատ է լինում, — իսկ այդ լինում է ամեն անգամ, երբ մուսսոնները ուշանում են կամ քիչ անձրէ են բերում, — այն ժամանակ արդէն Հնդկաստանում սովոր է լինում, և միշտ լինաւոր մարդիկ մեռնում են սովամահից:

Արդիւնագործութիւնը շատ քիչ է զարգացած Հնդկաստանում: Վերջերս միայն անգլիացիները սկսել են այնտեղ ևս գործարաններ հիմնել: Ապրանքների մեծ մասը բերում է Անգլիայից: Առևտուրը մեծ է: Ամենից շատ արտահանում են՝ բամբակ, անմշակ գրութեան մէջ, բրինձ, ցորեն, ջուտսրանք՝ գէպի եւրոպա, զլխաւորապէս՝ Անգլիա. խաշխաշը արտահանում է գէպի Չինաստան:


Հնդիկների մեծ մասի կրօնը հեթանոսական է, գլխաւորապէս՝ Բրահմական: Նրանց զլխաւոր աստուածն է՝ Բրահմա—սուեղծագործող—աստուածը և տիեզերքի հոգին: Նրանք պաշտում են նաև

ծառերի, սարերի, գետերի և այլ ողիներ: Առանձին յարգանքի առարկայ է Գանգէս գետը, որ սրազան է համարում: Նրանում լողանալը կրօնական ծէս է: Հնդիկները սրբազն են համարում նաև որոշ կենդանիներ, որովհետև հաւատում են, թէ մեռած մարգկանց հոգիները նրանցում են բնակութիւն հաստատում: Հնդիկների մէջ քիչ չեն նաև մտհմեղ կաններ, մանաւանդ հիւսիւրկութաքում իրանի սահմանին մօտ:

Հնդիկները ընդունակ ժողովուրդ են: Հին ժամանակներում, երբ այժմեան եւրոպական ժողովուրդների նախնիները զեռ վայրենի էին, նրանցում ծաղկում էին դիտութիւնն ու գեղարուելու առաջնորդ: Սակայն յետոյ կանգ առաւ նըրանց մտաւոր զարգացումը զբավարութագութիւնների բաժանուած լինելն էր. այդ կաստաները (նեղ, քարացած դասակարգերը) մինչեւ օրս էլ

թշնամարար է վերաբերում ուրիշ կաստայի: Բարձր կաստաներին պատկանողները, օրինակ քը մերը (հնդկուրականները) և զինուորականողներից, օրինակ երկրագործներից և արհեստաւորներից: Կաստաներից գուրս, ամենքից ցածր, համարում են պարիաները, որոնց մերձենալը սրբապղծութիւն է համարում:

Ներկայումս Հնդկաստանը անգլիացիների իշխանութեան տակ է: Անգլիացիների թիւը այնուելք 200 հազարից աւելի չեղականութապէս պաշտօնեաներ, վաճառականներ, զինուորականներ ևայլն: Անգլիացիները շինում են Հընդկաստանում երկաթուղիներ, փորում են ջրանցքներ, ծաղկեցնում են առևտուրը, հիմնում են գոլրոցներ, թուշցնում են կաստաների մէջ եղած հակառակութիւնը, և այլն բայց, ժանտախտի և մալեարիայի (Ճհճճային տեսնդ) դէմ: Այս հիւանդութիւնների բոյնը Հնդկաստանն է, որտեղ ամեն




Նկ. 30. Կոկոսեան արմաւենի:

տարի մի քանի միլիոն հնդիկ է մեռնում: Խոլերան մեծ զոհեր է տանում գլխաւորապէս ամառը, խոնաւ ժամանակ, ժանտափար՝ ձմեռը, չոր ժամանակ, մալեարիան՝ ամբողջ տարին անընդհատ:



Նկ. 31. Սակոսի արմաւենի:



Նկ. 32. Անգլ. և Հնդ. համեմատական մեծութիւնը: Կաւահանգիստների վը-

կառավարչ ական տեսակէ, տից Հնդկաստանը բաժանւում է նահանգների, որոնք կառավարուում են անգլիական նահանգապետներով, և առանձին պետութիւնների, որտեղ գեռ բոլորովին չեն կորցրել իրենց իշխանութիւնը տեղական, հնդիկ իշխանները, որ ո՛վաջա են կոչում: Սրանք էլ առանց անգլիացիների ոչինչ անել չեն կարող, նրանցից են ոռմիկ ստանում: Ամբողջ Հնդկաստանի կառավարութեան գլուխ է կանգնած անգլիական փոխարարան:

Հնդկաստանի գլխաւոր քաղաքը և փոխարայի աթոռանիստն է Կալկարան: Երկու հարիւր տարի առաջ Կալկաթայի տեղում ձկնորսների մի փոքրիկ գիւղ էր. իսկ այժմ՝ ամենաշահաւոր հաւահանգիստը և ամենամեծ քաղաքն է (1,300,000 բնակիչներով) Հնդկաստանում: Անգլիացիների շնորհւարձեալ՝ արագօրէն մեծացաւ Բոմբեյը (800 հազար բն.): Այս երկու

բայով է կատարւում Հնդկաստանի համարեա ամբողջ արտաքին առևտուրը: Բաւական նշանաւոր են նաև հետեւեալ նաւահանգիստները—Մալցաս, Կարաչի (ինդուի գետաբերանի մօտ) և Կօլոմբո (Ցէլլոնում): Հնդկաստանի ներսում եղած քաղաքներից շատ նշանաւոր է Բենարէսը (Գանդէսի վրայ)



Ակ. 33. Բենարէս քաղաքը:

իրեւ Հնդիկների սրբազն քաղաք: Ամեն տարի հազարաւոր ուխտաւորներ են գնում այնտեղ: ¹⁾

1) Այդ ուխտաւորները աղօթում են տաճարներում, որոնց թիւը Բենարէսում հազարից աւելի են հաշւում. լողանում են սրբազն գետում (Գանգէսում), առաւօտեան շատ վաղ: Խուռը բազմութեամբ Հնդիկները մտնում են պղտոր գետը, աղօթելով և ծաղիկներ ցանելով գետի վրայ: Ապա բռնով ջուր են առնում գետից, լուանում նրանով ուսերը, զլուխը, կուրծքը և թիկունքը, Հիւանդներին, նոյնիսկ մասմարձներին, ազգականները բերում են այդտեղ, որպէսզի գետը բժշկէ նրանց կամ բարի վախճան տայ: Իսկ գետի ափին բոցավուում են խարոյկները, որոնց վրայ այրում են մեռածների զիակները: Այրուածներին աճիւնը զցում են Գանգէս, որ գետը տանէ Ովկիանոս:

25. ՀՆԴԿԱԶԻՒՆ

Հնդկաչինը մի լեռնային թերակղզի է, որ մի կողմից ողողւում է Բենգալեան ծոցով և Մալակլայի նեղուցով, իսկ միւս կողմից՝ Հարաւային-Զինական ծովով (Սիամի և Տոնիինի ծոցեր): Թերակղզու ամբողջ հիւսիսային մասը ծածկուած է բարձր (2—3 վերստ), գժուարամատչելի լեռներով, որոնք կազմում են Տիբետի լեռների շարունակութիւնը: Քանի հարաւ են գնում լեռները, այնքան էլ ցածրանում են: Լեռնաշղթաներից մէկը ձգւում է դէպի հեռու հարաւ, կազմելով Մալակլա թերակղզին:

Հարաւ-արևմտեան մուսսոնները ոռողում են Հնդկաչինը աւելի լաւ, քան Հնդկաստանը: Այս է պատճառը, որ Հնդկաչինի լեռները բոլորն էլ ծածկուած են արեագործացին խիտ անտառներում ապրում են վայրի փոեր, ոնդեղիշտիւրներ, տապիրներ, բազմաթիւ կապիկներ: Սակայն այդ անտառները մարդկային կեանքի համար անյարմար են, որովհետեւ շատ գժուար է մաքրել նրանց՝ հողագործութեան յարմարեցնելու համար:

Լեռնաշղթաների մէջ ընկած հովիտներով հոսում են հետեւեալ գետերը. Մելոնք, Իրաւադայի և ուրիշներ: Այդ գետերի հովիտները նեղ են, այդ պատճառով դրանք ևս անյարմար են մարդկային բնակութեան համար: Միայն գետաբերաններից ոչ հեռու այդ հովիտները լայն են, ծածկուած արգաւանդ հողով:

Հէնց այստեղ էլ կենդրոնացած է Հնդկաչինի ազգաբնակութեան մեծագոյն մասը: Այդ ազգաբնակութիւնն էլ խառն է: Արևմուտքում գերակշռում են Հնդիկները, արևելքում՝ չինացիները, իսկ հարաւում՝ մալայցիները: Նրանք ըգրադւում են երկրագործութեամբ, զինաւորապէս բընձի մշակութեամբ: Շնորհիւ առաստ անձրեների և բացի դրանից նաև արտեստական ոռոգման՝ բընձի հունձը միշտ այնպէս էլ լինում որ Հնդկաչինից շատ բընձ է արտահանւում ուրիշ երկրներ:

Լեռների լանջերին, արևադարձային անտառների մէջ,
շատ գժուար է մշակել հողը, այդ սպատճառով էլ այնտեղի
գլխաւոր զբաղմունքներն են՝ անտառային և լեռնային
աշխատանքները — փայտ կտրելը և վաճառելն ու հանքերում
աշխատելը:

Համարեա ամբողջ Հնդկաչինը եւրոպացին երի իշխանութեան տակ է: Նրա հիւսարկմտեան մասը կոչում է Բիրմա, պատկանում է անգլիացիներին, որն և կառավարում է Հնդկաստանի փոխարքան:

Բիրմայի պլիսաւոր նաւահանգիստը և ամենամեծ քաղաքն է՝ Ռանգուն: Ինչպէս միւս նշանաւոր նաւահանգիստները չնդկացնում, այնպէս նաև այս նաւահանգիստը նշանաւոր է բրնձի և արժէքաւոր փայտեղէնի արտահանութեամու:

Սնգլիացիներին է պատկանում նաև
Մալակայի հարաւային մասը, որի
ծայրում, փոքրիկ կղզու վրայ, գտնվ-
ում է անգլիական նշանաւոր Սինգա-
լուր նաւահանգիստը, որը հանգստա-
տեղի է բոլոր այն նաւերի համար,
որոնք չնդկական ովկիանոսից դէպ
Մեծ ովկիանոսն են գնում, կամ ընդ-
հակառակու:

Հաղպատակ Առաջնորդի մասնակիցներ է՝ Սայգոն։
Հաղպատակ Առաջնորդի մասնակիցներ է՝ Բանգկակի
և Թրանսիայի կալուածների մէջ, գըտ-
պետութիւնը։ Նրա մայրաքաղաքը,
հանգիստն է՝ Բանգկակ (600 հազ. բն.):

26. ՄԱԼԱՅԵՍՆ ԱՐՃԻՊԵԼԱԳ

Մալայեան արշիպելագը գտնւում է Ասիայի և Աստրա-
լիայի մէջ և կարծես մի կամուրջ լինի՝ ովկիանոսի վրայ զցած:
Նա բաղկացած է հետեւել կողիներից—Մեծ Զոնդիան խոռոչ

(Սումասրա, Ետա, Բորնիկօ, Ցելեբէս), Փոքր Զոնիկան, Մոլովիկան և Ֆիլիպպինեան Կղզիներ:

Արշակունյացի ծայրերում, այսինքն Հնդկական և Մեծ ովկիանոսների եղերքին, ընկնում են մի շարք հանգած և գործող հրաբուղ խոնար, որոնց մշտական ժայթքումներից մեծամեծ դժբախտութիւններ են առաջանում, մանաւանդ Սումատրայում և Եաւայում։ Միայն վերջինիս վրայ եղած հրաբուղիների թիւն է՝ 45¹⁾:

Մալայեան արշիպելագի կլիման արևադարձային է և անփոփոխ: Այստեղ հաւասարապէս տաք է լինում թէ ձմեռուայ և թէ ամառուայ; ամիսներին: Մթնոլորտային տեղումներ շատ են պատահում երաշտ երբէք չի լինում: Այս պատճառով էլ կղզիները ծածկուած են արևադարձային փարթամ տնտեռներով:

Այդ անտառները այնչափ լսիտ են, որ կապիկները կարող են մեծ ճանապարհորդութիւններ անել՝ մի ծառից միւս ծառը թռչելով և երբէք ոտքը գետնին չդնելով։ Նրանք այնքան ըարձր են, որ մեր երկրի գարեւոր կաղնիներից և մայրիներից բաղկացած անտառները սրանց հետ համեմատած կարծէք թփուտներ կամ մանրածառ անտառներ լինեն։

կենդանիներ, այդ անտառներում շատ կան, մանաւանդ մայր ցամաքին մօտ գտնուող կղզիներում. այստեղ կան թէ վայրի փղեր, թէ ոնքեղջիւրներ և վագրեր և թէ մարդանման կապիկներ:

Արշակելագի բնիկ ազգաբնակութիւնը կազմում են մա-
լայցիներ, որոնց անունով էլ արշակելագը Մալայեան է
կոչում:

Մալայցիները դեղին ցեղին պատկանող ժողովուրդներից են:
Աւելի արևելք ընկնող կզզիների վրայ նրանք խառնուել են պապուաս-
ների (ահ) հետ: Մալայցիները ընդունեն 40 միլիոն հն, որոնցից 25
միլիոնը եաւա կղզու վրայ է ապրում: Նրանց մի մասը մինչև այժմ

կիսավայրենի կեանք է անցկացնում: Մալայցիների մեծ մասը զբաղ-
ւում է երկրագործութեամբ, զիսաւորապէս բրնձի մշակութեամբ:
Մալայցիները զբաղւում են
նաև արմաւենին երի (կոկոսեան և սագոսեան), բանանի և արքայա-
խն ձորի (անանաս) ծառերի մշակութեամբ: Նը-
րանք յայտնի են նաև իբ-
րև ճարպիկ ձկնորսներ և ծովագնացներ:

Բացի մալայցիներից արշի-
պելագի վրայ ապրում են նաև
չինացիներ (մօտ $1/2$ միլ-
լին), որոնք զբաղւում են
առևտուվ և արհեստներով:
Կան նաև ոչ շատ եւրոպա-
ցի պաշտօնեաներ, զինու-
որականներ և առևտուրական-
ներ:

Կղզիների ծայրերին,
**ծովափի մօտ, ապրող մա-
լայցիները մեծ մասով մահ-
մեգական են, իսկ կղզիների
խորքերում ապրող կիսավայրենի-
ները՝ կոապաշտ:**

Բոլորովին անկախ պետու-
թիւններ չկան Մալայեան արշի-
պելագի վրայ. բոլոր կղզիներն էլ
զանազան տէրութիւնների գա-
ղութներ են: Արշիպելագի ամե-
նամեծ և ամենալաւ մասը պատ-
կանում է հոլանդացին երին
Սումատրա, Եաւա, Ֆելքլս, Փոք-
րոնդեան, Ծուլուկեան կղզիները,
բորնիօի հարաւարելեան մասը: Հոլանդական այս գաղութ-



Նկ. 35. Մալայական տուն՝ ծառի վրայ:


բորնիօի հարաւարելեան մասը: Հոլանդական այս գաղութ-

ները 46 անգամ մեծ են բուն Հոլանդիայից, իսկ
բնակիչների թուով՝ 7 անգամ:

Այդ բոլոր կղզիների մէջ ամենանշանաւորն է՝ Եաւան: Սա երկրագնդի ամենաբերրի և ամենախիտ բնակուած վայ-
րերից մէկն է:

Երկրագործութիւնը ծաղկած է Մալայեան արշի-
պելագում, մանաւանդ Եաւայում: Հարթ տեղերում մշակում
են՝ բրինձ, ծխախոտ, եղիպացորեն և շաքարեղին,
իսկ սարերի լանջերին՝ սուրճ, թէյի և խինայի ծառեր:

Եաւայի զիսաւոր քաղաքը և հոլանդական ընդհանուր-
նահանգապետի աթոռանիստն է՝ Բատավիա:

Նկ. 37. Հոլանդիայի և նրա Մալայեան կալուածների հա-
մեմատական մեծութիւնը:

Բորնիօ կղզու
հիւսիս՝ արևմը-
տեան մասը պատ-
կանում է անգ-
լիացին երին,
իսկ Ֆիլիպինի-
նեան կղզիները՝
չիւսիսային՝ Ա-

մերիկայի Միա-

գեալ-Նահանգներին: Այստեղի զիսաւոր քաղաքն է՝ Մանիլիա:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՍԻԱ

Արևելեան Ասիայի մասերն են կազմում հետեւալ երկրները՝ 2 հ-
նաստան, Մանջուրիա, Կորէա և Եավոնիա:

[Կրկնել «Կլիմայ» դասի (յօդ. 5.) Արևելեան Ասիային վերաբ-
րող կառըը]:

Արևելեան Ասիայում է ապրում մայր ցամաքի (Ասիայի) ամբողջ
ազգաբնակութեան կէսից աւելին, որ ամբողջապէս դեղին ցեղին է
պատկանում: Իրենց քաղաքակրթութեամբ Արևելեան Ասիայի ժողո-
վուրդները ամենահներից են: Հողը այստեղ բերքի է և երկրագործու-
թիւնը հասել է ամենաբարձր կատարելագործութեան:

Արևելեան Ասիայում գտնուող պետութիւններից Զինաստանը և Եա-
սոնիան պահպանել են իրենց անկանութիւնը:

27. ԶԻՆԱՍՏԱՆ

Չինաստանը բնուում է Արևելեան Ասիայի մեծ մասը. նա տարածւում է Պամիրից մինչև Մեծ ովկիանոս և Ամուրից մինչև Հնդկաշխն. Բուն Չինաստանը իր մեծութեամբ հաւասար է Եւրոպական Ռուսաստանին, իսկ իր բոլոր կալուածներով (Մանջուրիա, Կենդրոնական Ասիա) միասին՝ ամբողջ Ռուսաստանի կէսին:¹⁾ Իսկ Չինաստանի բնակիչները 2^{1/2} անգամ աւելի են, քան Ռուսաստանի բնակիչները.—Ռուսաստանում ապրում են ընդամենը մօտ 140 միլիոն բնակիչներ, իսկ Չինաստանում՝ մօտ 350 մի լիոն, այսինքն մօտավորապէս այնքան, որքան ամբողջ Եւրոպայում:

Իր բնութեամբ Չինաստանը բաժանուում է երկու մասի—հիւսիսային և հարաւային:

Հիւսիսային Չինաստանում գտնուում է չինական գաշտավայրը: Հողը դեղին է արգաւանդ: Իսկ Հարաւային Չինաստանում հարթութիւններ համարեա չկան.—ամեն տեղ լեռներ են, թէպէտ ոչ բարձր: Այդ լեռների լանջերին աճում են մշտադալար ծառեր: Հարաւային Չինաստանի գետինը կարմրանող է, բաղկացած գլխաւորապէս կարմրաւուն կաւից: Չնայելով այդ հողը այնպէս պաղաքեր չէ, ինչպէս Հիւսիսային Չինաստանի հողը, բայց և այնպէս այդտեղ էլ հունձը լինուում է առատ, որովհետև կլիման աւելի տաք է և աւելի խոնաւ, քան հիւսիսում: Հիւսիսային Չինաստանում ձմեռը սառնամանիքներ են լինում և ծիւն է գալիս, թէպէտ կարճատե. իսկ հարաւառում գետինը երբէք ծիւնով չէ ծածկուում: Հիւսիսում արտերը տալիս են տարեկան մէկ կամ երկու հունձ, իսկ հարաւում՝ երկու կամ երեք:

Չինաստանում բնակուող ազգութիւնը (չինացիները) պատկանում է դեղին ցեղին: Շատ հնուում նրանք ապրում են Կենդրոնական Ասիայում, բայց վաղուց արդէն, 2,000 տարի թ. ձն. առաջ, նրանք գաղթեցին այժմեան Չինաստան,

¹⁾ Ռուս-չինական սահմանի երկայնութիւնը 4000 վերսից աւելի է:

հիմնեցին այդ մեծ պետութիւնը և զօրեղ ազգեցութիւն ունեցան հարեան ժողովրդների վրայ:



Նկ. 38. Չինացի:

Չինացիները աչքի են ընկնում իրենց աշխատասիրութեամբ: Նրանց գլխաւոր զբաղմունքն է՝ երկրագործութիւնը: Հիւսիսային Չինաստանի արտերը ծածկուած են ցորենի և բակլայի ցանքսերով, իսկ Հարաւային Չինաստանում, լեռնաշղթաների մէջ ընկած հովիաններում, տարածւում են բընձի արտեր, շաքարեղիզնի տնկարաններ և բամբուկի թփուտներ: Բամբակ և խաշխաշ (ափիոն) մշակուում է Չինաստանում ամեն տեղ:

Չինացիները մշակուում են իրենց գաշտերը աւելի խնամքով, քան մեր գիւղացիները: Նրանք պարարտեցնուում են հողը աղբով և ջրում արտերը՝ ջրանցքներով բերած ջրով, որ անց են կացնում նրանք ամեն տեղ՝ գետերից և գետակներից ջուր բերելու համար: Հունձը այնտեղ լինում է միշտ շատ առատ: Մի փոքր կտոր հողից անգամ չինական գիւղացին ստանում է բաւականաչափ հաց՝ իր ընտանիքը կերակրելու համար:

Երկրագործութիւնը չինացիների մէջ համարւում է ոչ միայն վիսաւոր, այլ նաև ամենայարգի զբաղմունքը: Նրանք ունեն երկրա-

գործութեան տօնը, երբ ինքը Զինաստանի կայսրը որ կոչւում է «Իլ-
կնքի որդի» վարում է մի կառը հոդ:

Զինացիները մեծ հոգատարութեամբ զբաղւում են նաև
այդ եղործութեամբ, մանաւանդ հարաւային Զինաստա-
նում, որտեղ աճում են թութիւն և թէյի ծառեր: Թէյի ծառի
տերմերից չինացիները պատրաստում են թէյ, իսկ թթենու-
տերմերով կերակրում են մետաքսի որդերին: Զինացիների
մէջ կարեոր տեղ է բռնում մետաքսագործութիւնը և թէյի մշա-
կութիւնը: Զինաստանից Եւրոպա են արտահանուում մեծ քա-
նակութեամբ թէյ և մետաքս:



Նկ. 39. Թէյի ժողովելը, չորացնելը և բովելը:

Մեծ նշանակութիւն ունի չինացիների համար նաև
ձկնորսութիւնը: Զինական ծովերը, գետերը, ջրանցքները
և լճակները հարուստ են ձկներով:

Բրինձը, բակլան և ձուկը կազմում են չինացիների սննդի գըլ-
իաւոր առարկան: Յաճախ գործ են ածում նրանք նաև խողի, շան և
կատուի միս: Զինական սիրուած ուտելիքների թուլին են պատկանում
մի քանի տեսակ ծովային որդեր և ծովային ծիծեռնակի բոյնը: Ոգե-
լից խմիչքներ չինացիները համարեա թէ չեն խմում. բայց դրա փո-

լարէն՝ գործ են ածում ափիոն, որ առողջութեան վրայ աւելի վատ է
ներգործում, քան սպիրտը:

Անասնապահութիւնը Զինաստանում զարգացած չէ, որով-
հետեւ բոլոր պէտքական հողերը մշակուած են, և անասունների համար
չկան արօտատեղիներ: Կաթի և իւղի մասին չինացիները համարեա
ոչինչ չգիտեն, և կաթնատնտեսութեան մասին գաղափար անգամ չու-
նեն: Անասուն քիչ լինելու պատճառով Զինաստանում բեռը կրում են
մշակները (կուլի): Հարաւային Զինաստանում նոյն իսկ կառքի համար
ձանապարհներ չկան, այլ միայն շաւի դներ՝ ոտքով գնացողների
համար. զրա փոխարէն՝ Զինաստանը հարուստ է գետային ձանա-
պար հներ ովկ և արուեստական ջրանցքներով, որոնցով երթե-
կում են բազմաթիւ նուեր: Ամենամեծ ջրանցքը (Կայսերական)՝
1,000 վերստից աւելի երկայնութիւն ունի:

Առևտութը Զինաստանում շատ եռուն է և չինացիները
շատ ընդունակ են առևտութի մէջ: Զինացիների ձեռքին է
կտնուում ներքին առևտութը ոչ միայն բուն Զինաստանում,
այլ նաև նրա բոլոր կալուածներում:


Զինացիները շնորհըով են նմանապէս արհեստների մէջ:
Միլիոնաւոր չինացիներ զբաղւում են պատրաստելով ամեն
առաջականներ, տնային գործածութեան համար, նաև
փարթամութեան (արդուզարդի) առարկաներ: Առանձնապէս
շնորհքով պատրաստում են նրանք յախճապակէ («չինի»)
ամաններ (ափուներ և այլն), մետաքս է գործուածքներ, փայ-
տի և փղոսկրի բանդակներ:

Զինացիները ապրում են գլխաւորապէս գիւղերում, մասսամբ
առաջաբներում: Հողի պակասութեան պատճառով նրանք անելը
ինում են իրար շատ մօտ: Զինացիների ընակարանները, ինչպէս և
ինց իրենք, շատ կեղտուած են: Զինական ռազմաքնները պատաժ են
ինում հաստ պարիսպներով, որոնք առաջն լեռն ծառայում էին թա-
փառաշրջիկների յարձակումներից ժողովուրդը պաշտպաններու համար:
Բէկէտ բազմամարդ են չինական քաղաքները, բայց բարեշէն չեն:

Կը թութիւնը շատ յարգի է չինացիների մէջ ամենա-
ին ժամանակներից սկսած: Ժողովուրդական գլորոցներ հիմ-
ուել սկսեցին նրանք եւրոպացիներից առաջ: Եւրոպացիներից
ուելի առաջ են գտել նրանք նաև ապագրութիւնը, կողմ-
ուացոյցը և վառովը: Բայց ինչպէս եղել են հնումը, չինա-
կանները այնպէս էլ մասցել են մինչեւ մեր օրերը: Ամեն բա-

նում նրանք հնապաշտ են, նոյն իսկ մեզք են համարում փոխել այն կարգերը, որ դրել են իրենց նախնիները:

Իրենց երեխաներին չինացիները սովորեցնում են, գլխաւորապէս յարգել ծնողներին և նախնիներին, որոնց մտքերը նրանց համար սուրբ են: Գիտութիւնները չինացիների մէջ ամեննեին չեն զարգացած, բացի թուաբանութիւնից, որ նրանց հարկաւոր է առևտում: Զինարքն լեզուն, մանաւանդ գրութիւնը, շատ գժուար է. բառերը բոլորը միավանկ են: Գրութիւնն էլ ոչ թէ այբուբենից է բաղկացած այլ բազմաթիւ նշաններից, որոնք ամբողջ բառեր են ցոյց տալիս: Սովորել բոլոր նշանները՝ դա քչերին է յաջողւում: Մեծամասնութիւնը սովորում է կարգալ միայն սակաւաթիւ գրքեր, որոնք պարունակում են չինական իմաստունների մտքերը:



Նկ. 40. Չինական տաճար:

¹⁾ Չինացիները կրօնամուլ ժողովուրդ չեն, այլ համբերատար. յաճախ տարբեր կրօնների հետեղներ միենալու տաճարում են կատարում իրենց ծէսները:

(մանդարինարի) ձեռքում: Արանք բոլորը աւելի իրենց անձնութան շահին են, ծառայում, քան ժողովրդի օգտին:



Նկ. 41. Մանդարին (չինական պաշտօնայի):

Տիրապետող կրօն չկայ Զինաստանում, բայց համարեա լուր չինացիները երկրպագութիւն տալիս երկնքին, երկրին ընութեան ոյժերին: Շատերը տեսում են բուռդ հայտ կարծին, մանաւանդ հասարակ դովուրդը: Աւելի բարձր խաւեր հետեւում են Քրիստոսից 5 դառաջ ապրած չինացի իմաստուն կոնֆուցիոնի վարդապետութեան թոլոր չինացիներն էլ զոհ են բրում իրենց վախճանուած նախների ոգիներին: ¹⁾


Երկիրը կառավարում է կայսր Բողդիխանը, որ նշանակում է երկնքի (այսինքն Աստուծութիւն): Նրա իշխանութիւնը մարտում է անսահման: Իր պէս կառավարութիւնը գտնում է պալատական մեծամեծների գոխարքաներում էլ գործարաններ հիմնել:

Չինաստանի մայրաքաղաքն է, Յուղիխանի աթոռանիստը, Պիեկին, և միլ. աւելի բնակիչներով: Նշանաւոր նաւահանգիստներ են — Տեալ-Ցզին (որ Պեկինի հետ երկաթուղով է միացած), Նանչին և Կանչոն: Այդ նաւահանգստների վրայով են ներմուծւում Չինաստան՝ երոպացից և եապոնիացից՝ գործարանային տալրանքներ, չնդկաստանից ափիոն և չնդկաչինից:

Ժողովրդի տղիտութեան և վատ կառավարութեան չնորհիւ խեղճ է ապրում ամբողջ ժողովուրդը: Այդ պատճառով էլ արդիւն ագործ ծութիւնը չէ զարգանում այնակեզ: Չինաստանում զանւում են օր. շատ հարուստ ածխահանքեր, բայց նրանք չեն մշակուում: Բազմաթիւ կուլիներ (բանուորներ, մշակներ) պարապ ման են զալիս. շատերը սոփակուած թողնում են իրենց հայրենիքը և օտար երկրներ (չնդկաչին, Աֆրիկա, Ամերիկա) են գնում և զանազան աշխատանքներ անուն ամենաէժան վարձով:

Որովհետեւ գտբերի ընթացքում չինացիները աւելի կը թուած են եղիլ քան ուրիշ ժողովուրդներ, այդ պատճառով էլ նրանք սովոր էին ար-

բրինձ (թէպէտ չինացիները շատ բրինձ են ցանում, բայց եղածը չի բաւականացնում չինական ամբողջ ժողովրդին կերակրելու համար):



Նկ. 42. Փողոց Պեկինում:

Միւս քաղաքներից նշանաւոր է Խանկօնու՝ Կապոյտ գետի վրայ: Այս քաղաքը յայտնի է իրեկ թէյի մեծ շուկայ, որտեղից շատ թէյ է ուղարկում եւրոպա և Ամերիկա՝ ծովային նաւերով: Թէյը և մետաքսը Չինաստանի արտահանութեան դլաւոր առարկաներն են: Խանկին, Կապոյտ գետի մօտ, նշանաւոր է բամբակի առևտրով:

Եւրոպացիները, նոյնիսկ ամերիկացիները, օգտուելով իրենց ոյժից, սկսում են խառնուել չինական գործերի մէջ: Նրանք արդէն զբաւել են մի քանի նաւահանգիստներ չինական ծովափում: Այսպէս՝ անգլիացիները խլել են Հօնգկոնգին, որի վրայ է գտնուում Վիկտորիա նաւահանգիստը: Դերմանացիները իրենց ձեռքն են ցցել Կիաո-Չաու Դեղին ծովում: Այս վայրերը առևտրական խոշոր նշանակութիւն ունեն:

28. ՄԱՆՅՈՒԻՐԻԱ

Մանչուրիան ընկնում է Չինաստանից հիւսիս և իր մեծութեամբ հաւասար է կովկասին, Լեհաստանին և Ֆինլանդիային՝ միասին վերցրած: Մանչուրիան մեծ մասով լեռնոտ, բայց հարուստ երկիր է: Հարաւային մասում, Լեա-Խէ-ամի հովտում, տարածում են բերրի դաշտեր, իսկ հիւսիսում՝ խոտաւէտ տափաստաններ (степи). Մանչուրիան շրջապատող լեռները ծածկուած են խիտ անտառներով և հարուստ են ուկու ու քարածումի հանքերով:

Մանչուրիայի բնակիչների թիւն է մօտ 8 միլիոն: Երկրի բնիկները մանջուրացիներն են: Առաջ նրանք անկախ և զօրեղ ժողովուրդ են եղել: Մի քանի հարիւր տարի սրանից առաջ նրանք նուաճեցին Չինաստանը, որտեղ մինչև այժմ էլ թագաւորում է մանչուրական հարստութիւնը (չինաստիա): Բայց տիրելով չինացիներին՝ մանջուրացիները այնպէս խառնուեցին նրանց հետ, որ իւրացրին նրանց բոլոր սովորութիւնները և մոռացան նոյն իսկ իրենց լեզուն: Այժմ բուն Մանջուրիայում էլ գժուար է ջոկել մանջուրացիներին (թուրք ընդամենը մօտ 1 միլ.) չինացիներից: Սրանք բնակութիւն են հաստատել Լեա-Խէ-և Սունգարի գետերի հովիտներում և աշխատասիրութեամբ մշակում են իրենց դաշտերը. ցանում են կորեկ, բակլայ, խաշխաշ և ծիախոտ: Վերջին ժամանակներս չինացիները խմբերով բնակութիւն են հաստատում նոյն իսկ հիւսիս-արևեմտեան Մանչուրիայի տափաստանում (ստէպ): Միայն լեռների անտառներում գեռ ևս թափառում են մանջուրացիներին ցեղակից տունգուսները և ուրիշ ժողովուրդներ, որոնք զբաղւում են սամոյը, կզաքիս և վագր որսալով:

Չինացիներին և մանջուրացիներին մեծ օգուտ են տալիս ուռւսների ձեռքով շինած երկաթուղային ճանապարհները: Սրանցից մէկը կտրում է չիւսիսային Մանչուրիան և միացնում է Սիբիրի երկաթուղին Վլադիվոստոկի հետ: Մի ուրիշ երկաթուղային գիծ անցնում է Խարբիլ քաղաքից

(Սունդարի գետի վրայ) գէպի հարաւ՝ Մանջուրիայի գլխաւոր քաղաք Մոկկոնի վրայով մինչև Պօրս-Արտուր, որ այժմ գտնւում է ետպնացիների ձեռքին:

29. Կ Ո Ր Ե Ա.

Կորէան լեռնոտ թերակղզի է, մի կողմից նա ողողւում է ետպնական ծովով, իսկ միւս կողմից՝ Դեղին ծովով: Հարաւարեմտեան մասը շատ աւելի տաք է, քան հիւսիս-արևելեան մասը:

Կորէայում բնակւում են կորէացիները, ($10^{1/2}$ միլ.) արտաքին տեսքով նրանք նման են չինացիներին և ետպնացիներին, իսկ իրենց զարգացմամբ և ձեռներէցութեամբ շատ աւելի յետ են մնացել թէ մէկ և թէ միւս ժողովրդից: Նրանք զբարւում են երկրագործութեամբ և անտանապահութեամբ: Սակայն կորէացիները իրենց զաշտերը մշակում են շատ աւելի վատ, քան ետպնացիները և չինացիները: Կորէացիները չեն անկում թէյի և թթի ծառեր, մետաքսագործութեամբ էլ չեն պարապում: Արհեստների մէջ ևս նրանք առանձին շնորհք չեն ցոյց տալիս:

Կորէացիները ապրում են խղճուկ լորձիթներում: Նրանց երկրում քաղաք համարեած թէ չկայ. Կորէայի թագաւորի աթոռանիստն էլ Սկոլ, մեծ զիւղի է նման:

Կորէացիները շատ հանդարտաբարոյ և խաղաղասէր ժողովուրդ են, այդ պատճառով էլ Կորէան առաջ ենթարկուած էր Չինաստանին, իսկ այժմ ետպոնացիների ձեռքին է գտնւում: Թէպէտի կորէացիները ունեն իրենց կայսրը՝ բայց նա ետպնացիների իշխանութեան տակ է, որոնց համար կորէան մեծ նշանակութիւն ունեցող մի երկիր է: Ետպնիայի ազգաբնակութիւնը շատ խիս է, իսկ Կորէայի ազգանակութիւնը՝ նոսր. այդ պատճառով էլ ետպնացիները խմբերով բնակութիւն են հաստատում կորէայում և վաճառում են այնտեղ իրենց գործարաններում և զաւոդներում պատրաստած ապրանքները:

ՅՈՒ ԵԱՊՈՆԻԱ.

Եապոնիան Ասիայի ամենաարևելեան երկիրն է, այդ պատճառով էլ կոչւում է «Ծագող արեգակի երկիր»: Եապոնիան բաղկացած է չորս մեծ և բազմաթիւ աւելի մանր կղզիներից: Այդ չորս մեծ կղզիներն են—Հօնյո կամ Նիպոն, Կիու-Շիու, Նիկօկ և Նասո: Բացի սրանցից՝ եապոնացիներին են պատկանում նաև Կուրիլեան կղզիները, Սախալինի հարաւային կէսը, Ռիու-Կիու և Ֆօրմօզա կղզիները: Մակերևոյթի տարածութեամբ եապոնիան մի փոքր մեծ է Անդիայից և համարեա հաւասար է մեր կովկասին:

Եապոնական կղզիները ցամաքային ծագում ունեն. նրանք շատ վաղուց կտրուել են մայր ցամաքից: Թէպէտ եապոնիան բաղկացած է բազմաթիւ կղզիներից, բայց և այսպէս եապոնացիների համար իրենց երկիրը ներկայացնում է մի միացած ամբողջութիւն: Բանն այն է, որ եապոնացիները հրաշալի ծովագնացներ են. նրանց համար ամենին գժուար բան չէ մի կղզուց միւս կղզին երթալ ծովով: Ծովային հաղորդակցութեան ձանապարհները նրանք գերադասում են ըոլոր ֆացած տեսակի ձանապարհներից: Նրանց կղզիները իրարից բաժանող ծովերը և նեղուցները շատ յարմար են նաւագնացութեան համար, որոնք խոր են, երբէք չեն սառչում և կազմում են բազմաթիւ յարմար նաւահանգիստներ:

Եապոնական բոլոր կղզիներն էլ լեռնոտ են և ենթակայ են յաճախակի երկրաշարժների:¹⁾ Լեռնագագաթները սովորաբար հրաբուղիների թիւն է՝ 13: Եապոնիայի ամենաբարձր հրաբուղին սարն է՝ մուզի-Եամա (3 $^{1/2}$ վերստ բարձրութեամբ), որ կանուում է հօնդո կղզու վրայ. 10 ամիս շարունակ նա ձիւնով ծածկուած է լինում: Եապոնացիները սուրբ են համարուում այդ սարը: Դաշտավայր եր համարեա թէ չկան. չկան նաև երկայն, նաւագնացութեան յարմար գետեր:

¹⁾ 1885 թուականին եապոնիայի մայրաքաղաք Տոկիոում 80 անգամ երկրաշարժ եղաւ, որոնցից աւերակների տակ ոչնչացան 100,000-ից աւելի մարդիկ:

Կուրօ-Սիլօ տաք հոսանքը եապոնիային բերում է տառութիւն և խոնաւութիւն։ Ամառ ժամանակ այդ հոսանքի



Նկ. 43. Ֆուզի-եամա։

վրայով են փչում հարաւարևելեան մուսսոնները, որոնք և ջրային գոլորշիներով լցւում ու տուատ անձրեներ են թուփում եապոնական կղզիների վրայ։

Կուրօ-Սիլօի մի ճիւղը մտնում է եապոնական ծովի ջմեռը մայր ցամաքից փչող մոսսոնները ջերմութիւն և խոնաւութիւն են սահանում Կուրօ-Սիլօի այդ ճիւղից, այդ պատճառով էլ նրանք եապոնիա են բերում առատօրէն մթնոլուտային տեղութներ։ Այսպէս ուրեմն, եապոնիայում ամառը շատ անձրև է գալիս, իսկ ճմեռը՝ շատ ձիւն։ Տարուայ տմենալու եղանակներն են՝ գարուն և աշուն։

Ծնորհիւ տաք և խոնաւ կիմային եապոնական զիխաւով կղզիների բուսականութիւնը շատ փարթամ է։ Լեռները ծածկուած են անտառներով, իսկ հովիաները և բլուրները արտերով և այզիներով։

եապոնական կղզիների բուսականութիւնը մեր ձար և ագարակային է։ անտառներում աճում են՝ մշտադալար կամելիաներ և քափենի զափնիներ (камфорные лавры), նմանապէս լաքի ծառեր (որոնց հիւթից լաք (лакъ) է ստացւում)։ բացի եսո կղզուց Հօնդո կղզու հարաւում աճում են արգէն արմաւենիներ և բամբուկ։



Նկ. 44. Բամբուկի թփուտ եապոնիայում. (Եապոնական կան կառապան)

Ճութեամբ թէպէտ Ռուսաստանից 50 անգամ փոքր է, իսկ բնակիչների թուով՝ հազիւ 3 անգամ։ Եապոնիայում մօտ 50 միլիոն մարդ է ապրում։ Այդպէս խիտ բնակուած լինելու զիխաւոր պատճառները երկու են։ Նախ բնութեան հարըստութիւնը, երկրորդ՝ եապոնացիների աշխատասիրութիւնը և մեծ ընդունակութիւնները։ Եապոնացիները գեղին ցեղին են պատկանում և չինացիներին ցեղակից են։

Եապոնացիների մեծ մասը աղքատ գիւղացիներ են, սրանց ունեցած հողը այնչափ սակաւ է, որ կէս զեսեատինը համարելում է արդէն մեծ հող։ Բայց իրենց փոքրիկ արտերը նրանք մշտակում են այնպէս ջանասիրութեամբ, ինչպէս չինացիները։ զբաղւում են զիխաւորապէս բընձի մշտակութեամբ։ Աշնանը, բընձի հնձից յետոյ, նոյն հողի վրայ ցանուում են հացա-

հատիկներ—գարի կամ ցորեն, որոնց հունձը լինում է գարնանը: Եապնիայի հարաւում ամեն մի արտից կարելի է լինում տարեկան նոյն իսկ եթե հունձ վերցնել:

Հացահատիկների արտերը Եապոնիայում տարածւում են ամենացածր վայրերում: Աւելի բարձր տեղերում եապոնացիները մշակում են թէյի ծառեր, իսկ սարերի լանջերին՝ թթենիներ: Եապոնիայում այնչափ շատ մետաքս է պատրաստում, որ նա կազմում է եապոնական արտահանութեան գլխաւոր առարկան: Իսկ թէյը համարեա ամբողջն էլ երկրի ներսում է ծախւում, որովհետեւ եապոնական թէյը իր որտկով շատ յետ է մնում չինականից և հնդկականից:

Հովիտի ափերին եապոնացիները զբազւում են ձկնորսութեամբ, որ նրանց համար էլ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան չինացիների համար: Ամենահարուստ ձկնորսարանները գտնուում են Եսոսում և Սախալինի հարաւում: Այնքան շատ է լինում ձուկը, որ մի մասը գործ են դնում նոյն իսկ արտերը պարարտացնելու համար:

Բրինձը, ձուկը, բակլան և ծովային կաղամբը կազմում են հապնացիների գլխաւոր ուտելիքները: Թէ լրինձը եապոնացիների համար ինչ մեծ նշանակութիւն ունի, այդ երկում է նրանից, որ փոխանակ ասելու «ասխաճաշ», ճաշ, ընթրիք» նրանք ասում են՝ «առաւօտեան բրինձ, կէսօրուայ բրինձ, երեկոյեան բրինձ»—որովհետեւ ամեն անգամ էլ բրինձ են ուտում: Միս, կաթ և իւղ նրանք ևս, չինացիների նման, համարեա չգիտեն ինչ բան է, որովհետեւ արոտատեղիներ չենելու պատճառով անասնապահութիւնը նրանցում զարգացած չէ:

Եապոնացիները մեծ մասով ապրում են գիւղերում, որանք աչքի են ընկնում իրենց զարմանալի մաքրութեամբ: Տները շինած են լինում փայտից: Տներում կահկարասիք չի լինում. եապոնացիները նստում և քնում են խոտից կամ արմաւենու տերեներից հիւսած խսիրների (փոխաթ) վրայ: Տուն մտնելիս եապոնացիները հանում են կօշիկները. նրանց բնակարանների մաքրութիւնն էլ օրինակելի է,

Եապոնացիները շատ ընդունակ ժողովուրդ են: Հին ժամանակները նրանք սովորեցին չինացիներից մի քանի արհեստներ (օրինակ՝ ձենապակեղին պատրաստելը), բայց այդ բոլորում նրանք գերազանցեցին իրենց ուսուցիչներին:

Անցեալ դարի վերջերում նրանք սկսեցին շատ բան սո-

փրել և ըստ այս իներից և ամենակարճ ժամանակուայ ընթացքում ցոյց տուին մէծ առաջադիմութիւն: Ներկայու մա-



Նկ. 45. Եապոնական դիւզացի:

կան լուսաւորութիւն:

Եապոնացիները շատ հնում արդէն զարձել են կուլտուրական ժողովուրդ: Իրենց կրթութիւնը, շատ սովորութիւններ և կրօնը փոխ են առել չինացիներից: Չինաստանի նման՝ եապոնիան ևս երկար ժամանակ տպրում էր կտրուած ուրիշ երկներից. եապոնացիները իրենց երկիրը ներա մտնել չէին թողնում օսարերեկրացիներին: Միայն 50 տարի սրանից առաջ երոպացիներին թոյլ տրուեց եապոնիա մտնել: Այդ ժամանակից էլ սկսած նրանք շատ բան սովորեցին երոպացիներից:

Բայց ամենազլիւառը այն է, որ եապոնացիները այժմ կրթուած ժողովուրդ են: Նրանք հիմնել են բազմաթիւ ժողովրդական դպրոցներ և ուսումը պարագիր են զարձել բոլորի համար: Այդ պատճառով էլ համարեա բոլոր եապոնացիները զրագէտ են, կարդում են լրացիներ, զրքեր, որ

Եապոնիայում աւելի է լոյս տեսնում, քան Ռուսաստանում:
Երկրի կառավարութիւնն էլ նման է եւրոպականին
Եապոնիան այժմ Ասիայում միակ
երկիրն է, որտեղ կայսրի (Մի-
կադօ) իշխանութիւնը սահմա-
նափակուած է պ արլամենտով
այսինքն՝ ժողովրդական ներկա-
յացուցիչների ժողովով։ Ժողո-
վրդից ընտրուած այդ մարդիկ
աշալուրջ կերպով հսկում են մի-
նիստրների և պաշտօնեաների
գործերին և նրանցից ամեն բա-
նի համար հաշիւ են պահանջում։



Նկ. 46. Եապոնացի.

Տապոնացի մեծ մասը դա-
ւանում է Շինտո կրօնը, որ
Եապոնացիների բնիկ, ազգային
կրօնն է։ Այդ կրօնի էութիւնն է
բնութեան ոյժերին և նախաճայ-
րերի ողիներին երկրպագելը։ Եա-
պոնացիների մէջ քիչ չեն նաև
բուդդայականներ և կոն-
ֆուցիոնի վարդապետութեան
հետապողներ։

Եապոնիայի մայրաքաղաքն է
Տոկիօ. ունի մոտ 1,800,000 բնա-
կիչ։ Զնայած որան՝ Տոկիօն մեծ
որոշեակ բաղկացած է բազմաթիւ փոքրիկ փայտաշէն տնե-
րից։¹⁾ Փողոցների երթևեկութիւնը մեծ է. կայ նաև էլեկ-
տրաքարշ։ Կառապանները իրենք են քաշում երկանիւ փոքրիկ
կառքերը թէպէտ Տոկիօ մայրաքաղաքը շինած է ծովածոցի
վրայ, բայց որոշեակ այդ ծովածոցը փոքր է, այդ պատճառով

¹⁾ Տները փայտից են շինում, որ յաձախակի կրկնուող երկրութիւնը շատ չի առած։

է մեծ նաւերը կանգ են առնում Խօհօնամս նաւահանդստում։



Նկ. 47. Եապոնացի կառապան։

Ասարարժէք Խօհօնամային, Կօրի և Նագատակի։
Եսո, Սախալին և Կուրիլեան կղղիների վրայ բացի եապոնացի-
ներից ապրում են նաև

Այն կոչուող մի խեղճ
և համարեա վայրենի ժո-
ղովրդի մնացորդներ։ Նը-
րանք հագնում են զա-
զանների մորթիներ, Վեր-
ջերը միայն նրանք սո-
վորեցին եապոնացինե-
րից երկրագործութիւն և
արհեստներ։ Հնում այ-
ները բնակւում էին հա-
պոնական բոլոր կղղինե-
րի վրայ էլ. բայց յետոյ
եապոնացիները քշեցին
նրանց դէպի հիւսիս։ Նը-
րանց թիւը փոքրտնում
է և այժմ հազիւ մի քա-
նի հազար հոգի լինեն։

Նկ. 48. Եապոնական տաճար։



Ա Փ Ր Ի Կ Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԸԴՐՈՒԹՅՈՒՆ

**1. ԱֆրիկաՅի Դիրքը, Մեծութիւնը Եհ Աֆերի^ա
ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Աֆրիկան չին Աշխարհի բոլոր մասերի մէջ միակն է, որ գտնում է հասարակածի երկու կողմում։ Հասարակածի անցնում է Աֆրիկայի հիւսիսային և հարաւային ծայրերից համարեա հաւասար հեռաւորութեան վրայ, նրա կենդրութիւնունից հիւսիսից հարաւ Աֆրիկան տարածւում է մօտ 8,000 վերտիւնկան արևմուտքից արևելք, ամենալայն տեղում՝ 7,500 վերտիւն։ Աֆրիկան եւրոպայից մեծ է 3 անգամ, իսկ Ասիայից փոքր՝ 1½ անգամ։ Աֆրիկայի մակերեսը բռնում է 27 միլ. քառակուսի վերստ տարածութիւն։

Աֆրիկայի ամենահեռաւոր ծայրերն են։— հիւսիսում՝ Բլազի կո կամ Սպիտակ հրուտնդանը 37 աստիճան լայնութեան տակ հարաւում՝ Սանդի հրուտնդանը 34 աստիճան հարաւային լայնութեան տակ, արևմուտքում՝ Կանաչ հրուտնդանը 17 աստիճան արևելեան երկայնութեան տակ, իսկ արևելքում՝ Գուարդիու հրուտնդանը 51 աստիճան արևելեան երկայնութեան տակ։

Աֆրիկան ամեն կողմից էլ շրջապատուած է խոր ծովերով և ովկիանոսներով, արևմուտքից՝ Ալյանտեան ովկիանոսներով, Միջերկրական ծովով, արևելքից՝ Հնդկական ովկիանոսով և նրա մասերով—Աղենի ծոցով և Կարմիր ծովով։

Հիւսիսի—արևմուտքում Աֆրիկան բոլորվին մօտենու է եւրոպային, որից բաժանուում է Զիբրալտարի ոչ խոր և լայն (ընդամենը 14 վերստ լայնութիւն) նեղուցով։ Հիւսիսի

արևելքում Աֆրիկան միանում է Ասիայի հետ Սուեզի պարանոցով, որի վրայ 35 տարի սրանից առաջ, Սուեզի ջրանցքն են փորել։

Աֆրիկայի տփերը շատ աւելի քիչ են կտրտուած, քան որևէ ուրիշ աշխարհամասի տփեր։ Այնտեղ համարեա չկան ոչ ծովեր, ոչ ծոցեր, ոչ էլ թերակղզիներ կամ կղզիներ՝ մայր ցամաքին մօտ։ Եղած ծոցերից ամենամեծերն են—Գուինեյի ծոցը արևմուտքում, և Գարեւի ծոցը՝ հիւսիսում։ Թերակղզիներից նշանաւոր է Սադագասկար մեծ կղզին հարաւարևելքում, որ մայր ցամաքից բաժանում է Սովորամբիկի խոր և լայն նեղուցով։ Լաւ, յարմար նաւահանգիստներ Աֆրիկայում շատ քիչ կան։

2. Աֆրիկայի ՀԵՏԱԶՈՑՈՒՄԸ

Ամենահին ժամանակներից սկսած արդէն եւրոպացիներին յայտնի էին Աֆրիկայի հիւսիսային ծովափնեայ երկրները։ Վաղուց յայտնի էին նրանց նաև կարմիր ծովի ափերը, որոնցով նրանք Սուեզի պարանոցից Հնդկաստան էին գնում։ Իսկ Աֆրիկայի մասցած ահազին տարածութիւնը եւրոպացիները յետոյ միայն ճանաչեցին։ 8-րդ դարում Քրիստոնից յետոյ ամբողջ հիւսիսային Աֆրիկան նուաճեցին արար ները, որոնք տարածեցին իրենց կրօնը (մահմեկանութիւն) և առևտրական յարաբերութիւններ ստեղծեցին նաև երկրի ներքին մասերի հետ։ 15-րդ դարում, երբ նաւազնացութիւնը զարգացաւ, եւրոպացիները սկսեցին յաճախ երթալ դէպի Աֆրիկայի արևմտեան ափերը և հիմնեցին այնտեղ գաղթականութիւններ։ Դրանք Կլիստորապէս պորտուգալացի իներ էին։

15-րդ դարի վերջում պորտուգալացի ծովագնաց Պասկօ-դէ-Գայան կատարեց առաջին ծովային ճանապարհորդութիւնը Աֆրիկայի շուրջով դէպի Հնդկաստան։ Պորտուգալացիներից յետոյ Աֆրիկայում գաղութիւններ հիմնեցին նաև իսպանացիները, ֆրանսիացիները, անգլիացիները, իսկ վերջին ժամանակներուն նաև գերմանացիները։ Սակայն Աֆրիկայի խորքերը երկար ժամանակ ոչ ոք սիրու չէր անում թափանցել, երկիւղ կրելով վատառողջ կլիմայից և դէպի եւրոպացիները թըշնամութիւն տածող սեամորթ լնիկներից։

Առաջինը անգլիացի Լեինգատոնն էր, 19-րդ դարի 60-ական թուականներին, որ երկար ճանապարհորդութիւններ արաւ դէպի Աֆրիկաններին, որ երկար ճանապարհորդութիւններ արաւ դէպի Աֆրի-

կայի խորքերը: Նա ձանապարհ ընկաւ դէպիհար աւային Աֆրիկա՝ տւետարանը քարոզելու նպատակով: Իր հեզ և բարի բնաւորութեան չնորհիւ նա զբաւեց տեղացիների սէրը և նրանց օգնութեամբ շատ ուսումնասիրութիւններ արաւ:

Լեինգատոնը շատ սակաւ անգամ էր տեղեկութիւն տալիս իր մասին, ուսափ և մատածեցին մի ժամանակ, թէ նա արդէն սպանուել է: 80-ական թուականներին նրան որոնելու—նպատակով Աֆրիկա ուղարկեցին մի ուրիշ անգլիացու, Ստէնլի անունով: Սա կտրում անցնում է կենդրոնական Աֆրիկան, գտնում է Լեինգատոնին: Յետոյ Ստէնլին հայրենիք է վերադառնում, իսկ Լեինգատոնը շարունակում է իր ճանապարհորդութիւնը դէպի հարաւ: Շուտով տենդից նա հիւանդանում է և մեռնում: Նրա հաւատարիմ ծառաները—նեղբերը իրենց ուսերի վրայ են ատանում նրա դիակը անտառների խորքերից մինչև ովկիանոսի ափերը, այգաեղից արդէն անգլիացի նաւաստիները նրա դիակը հայրենիք են փոխադրում:

Ստէնլին էլի երեք անգան ճանապարհորդութիւն է կտրաբում Աֆրիկայում և ուսումնասիրում է Վիկտորիա~~ջլիճը~~, Կոնգո գետը և այդ գետի ջրաբաշխում գտնուած դարեւոր արևադայլային անտառները: Լեինգատոնից և Ստէնլիից յետոյ ուրիշ ճանապարհորդներ էլ ուսումնասիրել են Աֆրիկան, բայց և այնպէս մինչև այսօր էլ Աֆրիկայում կան շատ տեղեր, որոնք շատ քիչ են հիտագուտուած: Բայց Աֆրիկայի բոլոր մասերն էլ բաժանուած են հերոպական պետութիւնների մէջ, որոնք և շատ տեղ երկաթուղիներ են անց կացրել:

• Ա. ՄԱԿԵՐԵՒԻՑԹԻ ԿԵԶՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Համարեա ամբողջ Աֆրիկան ներկայացնում է մի բարձրաւանդակ, հողակոշտերից բաղկացած, որի միջին բարձրութիւնն է կէս վերստ: Նրա մակերեսոյթը բաւական հարթ է, այնպէս որ օրեր և շաբաթներ շարունակ Աֆրիկայում կարաւաններ են զնում, առանց տեսնելու իրենց շուրջը աւելի կամ ովակաս բարձրութիւն ունեցող սարեր:

Աֆրիկայի հարաւարեւելեան կէսը աւելի բարձր է, քան հիւսիս-արևելյանը: առանձնապէս բարձր է (տեղ-տեղ և վերստից էլ բարձր) Հարկեսանի բարձրաւանդակը,—մի լեռնոտ և վայրի երկիր: Բարձր են նաև Դրակոնի սարերը՝ հարաւարեւելյում (Յ վերստից բարձր):

Արևելեան Աֆրիկայի բարձրաւանդակների մէջ գտնուում

են բազմաթիւ խորը և նեղ (40—100 վերստ) ցածրութիւններ: Սրանցից մի քանիսը լցուած են ջրով—լճեր են, ինչպէս օրինակ՝ Վիկտորիա, Տագանիկա, Նեասաա և ուրիշները: Յածրութիւնների ծայրերին բարձրանում են հանգած հրաբութիւններ, որոնցից ամենաբարձրներն են Կիլիմանջարո (6 վերստ բարձր) և Կենիա (5 ½ վ.) ծածկուած են մշտական ձիւնով: Գուշացայ և Խարանածք աւաշացը

Հիւսիսարևեան Աֆրիկան թէպէտ իր բարձրութեամբ չէ կարող հասնել հարաւ-արևելեանին, բայց և այնպէս նա էլ բաղկացած է ընդարձակ բարձրաւանդակներից: Դաշտավայրերը այնտեղ փոքր տեղ են բոնում:

Աֆրիկայում չկան այնպիսի լեռնաշղթաներ, ինչպէս Ասիայում: բացառութիւն կազմում է Ալյասի լեռնաշղթան՝ Միջերկրական ծովի ափին:


Աֆրիկայի միակ մեծ կղզին Մադագասկարը—ցամաքային ծագում ունի. նա ևս հողակոշտերից է բաղկացած: Աֆրիկայի մնացած կղզիներից շատերը հրաբուխային են, ինչպէս օրինակ՝ Համբարձման, Ա. Հեղինելի, Կանարեան, Մակարենեան կղզիները. շատերն էլ կորալլական ծագում ունեն, օրինակ՝ շատ մասը կղզիներ Աֆրիկայի արևելեան ափում, նրանց թւում՝ Զանգիբար:

4. Կ Լ Ի Մ Ա Ն

Քանի որ Աֆրիկան ընկնում է հասարակածի երկու կողմը, ուստի և նրա կղիման տաք էն Արեգակը ամբողջ տարին շատ է տաքացնում այդ մայր ցամաքը. ամառուայ և ձմեռուայ ամիսների մէջ այնտեղ համարեա տարբերութիւն չկայ: Աֆրիկայի ամենահիւսային կամ ամենահարաւային ծայրերում եսկ աւելի տաք է, քան Եւրոպայի ամենահարաւային, տաք երկրներում:

Ամենատաք երկրամասը, այն էլ ոչ միայն Աֆրիկայում, այլ նաև ամբողջ երկրագնդի վրայ, Տանարա անապատն է. այնտեղ տարուայ տաքութեան միջին աստիճանը 35-ի է հասնում: Ամառ ժամանակ անապատի երկ ժայռերը մինչև

70, նոյն իսկ 80 աստիճան տաքանում են. օդն էլ այնչափ է տաքանում, որ գժուար է շնչել: Իսկ երբ անապատով փշում է սոսկալի աւազախառն փոթորիկը, Սամում կոչուող, այն ժամանակ արդէն դրանից շատ անգամ կարաւաններ են ոչընչանում: Իսկ գիշերները Սահարայում զով է լինում, յաճախ ցօղ է նստում. իսկ ձմեռուայ գիշերներին ժայռերի վրայ նոյն իսկ եղեամ է երկում:



Կ. 49. Մթնոլորտային տեղումների բաշխումը Աֆրիկայում:

և Միջերկրական ծովերն էլ այնչափ ներ են տալիս: Իսկ Գվինէի ծոցից փշող և խոնաւութիւնը բերող քաղաքները իրենց խոնաւութիւնը թողնում են նրա ծովափնեայ բարձութիւնների վրայ: Վերջապէս՝ Հնդկական ովկիանոսից փշող քամիները խոնաւութիւնը թողնում են Հաբէշստանում:

Սահարայի հարաւային կողմը ընկնում են տաք և խոնաւ երկրներ, որոնք գտնւում են հասարակածի երկու կողմում: Խոնաւութիւնը բերող քամիները այդ երկրներու թափում են շատ մթնոլորտային տեղումներ, —թէ Ասլանտեսն ի թէ Հնդկական ովկիանոսներից: Մանաւանդ շատ անձրև է

գալիս Փվինէի ծոցի ափերին և կոնգո գետի ջրաբաշխում: Եյտեղ յորդ անձրևներ գալիս են համարեա ամբողջ տարին: Իսկ Աֆրիկայի մնացած մասերում ձմեռուայ ամիսներին չոր է լինում և անձրև գալիս է գլխաւորապէս ամառը, մանաւանդ կէսօրին:

Այժեղ արևագարձից հարաւայ՝ Աֆրիկայի կլիման չափաւորապէս է: Ամառը (այսինքն՝ դեկտեմբերին, յունուարին, փետրուարին) այդ ամիսներին հիւս, Աֆրիկայում ամառ է) շատ շոգ է լինում այստեղ, իսկ ձմեռը՝ բաւական զով. բարձր տեղերում նոյն իսկ անձրև է գալիս: Անձրևներ բերում են Հնդկական ովկիանոսից փշող քամիները:

Աֆրիկայի հիւսիսային ծայրն ևս ունի այնպիսի չափաւորապէս կլիմայ, ինչպէս հարաւային ծայրը. միայն թէ, այստեղ ձմեռ է լինում այն ժամանակ, երբ հարաւում ամառ է, և Հնդկակառակը: (հնչո՞ւ)

5. ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ

Աֆրիկայի բոլոր մեծ գետերն էլ իրենց սկիզբը առնում են այն վայրերում, որտեղ շատ մթնոլորտային տեղումներ են լինում: Այդ գետերի մեծ մասը թափւում է Ասլանտեսն ովկիանոս, և փոքր մասը միայն՝ Հնդկական ովկիանոս:

Աֆրիկայի գլխաւոր գետն է Նեղոսը, որ իր երկայնութեամբ (մօտ 6,000 վերստ) յետ է մնում միայն Միսսիսիպի և Միսսուրի գետերից: Նեղոսը բաղկացած է Սպիտակ Նեղոսից և Կապոյշ Նեղոսից:

Սպիտակ Նեղոսը (կամ Բար-Էլ-Արիադ) իր սկիզբը առնում է Վիկտորիա լճից, որի բարձրութիւնը մէկ վերստից աւելի է (ովկիանոսի մակերեսոյթից): Կապոյշ Նեղոսը (կամ Բար-Էլ-Արիեկ) սկսւում է Հաբէշստանի Յան կոչուող լճից, որ աւելի բարձր է ովկիանոսի մակերեսոյթից, քան Վիկտորիա լիճը: Ամառ ժամանակ, ամեն տարի, Նեղոսը ափերից դուրս է գալիս, շնորհիւ այն առատ անձրևների, որոնք գալիս են նրա աղբեկների մօտ:

Իր երկայնութեամբ, Աֆրիկայի գետերի շարքում, երկրորդ տեղը բռնում է Կոնգո գետը: Նա իր ջրառատութեամբ երկրորդ տեղն է բռնում երկրագնդի բոլոր գետերի շարքում (առաջինը՝ Հարաւ). Ամերիկայի Ամազոն գետը). այդ գետի սովորական լայնութիւնը, միջին հոսանքի վրայ, մօտ 10 վերստ է. իսկ ովկիանոսի մօտ նեղանում է մինչև $1/4$ վերստի:

Իր լայնութեամբ երրորդ գետն է Աֆրիկայում՝ Նիգեր: Մասցած գետերից նշանաւոր են—Օրանժի, Զամբեզի և Շարփ (որ թափւում է Չափ լիճը):


Արեւելան Աֆրիկայի լճերն են—Նեասսա, Տագանիլա, Վիկտորիա, Ալբերտ և ուրիշներ: Սրանց մէջ ամենախոր լիճն է՝ Նեասսա, իսկ ամենամեծը՝ Վիկտորիա:

Աֆրիկայի չոր մասերում շատ քիչ կամ ամենին գետ չկայ: Սահարայում ոչ մի գետ էլ չկայ, այստեղ պատահում են միայն չոր հովիտներ (վագիներ), որոնցով շատ սակաւանձրեից յետոյ մանրիկ գետակներ են հոսում, սրանք էլ կորչում են աւազուտների և քարքարուտների մէջ: Սահարայի հիւսիսային ծայրում, մի քանի ցածրութիւնների վրայ, պատահում են աղի լճակներ (շոտեր), որոնցով ջուր լինում է դարձեալ անձրեից յետոյ միայն. իսկ մասցած ժամանակ նրանք ծածկուած են լինում ձիւնանման աղի սպիտակ շերտով:

6. ԲՈՒԽԱԿԱՍՆՈՒԹԻՒՆԸ

Գվինէի ծոցի ափերին և Կոնգո գետի ջրաբաշխի վրայ, այսինքն Աֆրիկայի ամենախոնաւ մասերում, աճում են արեւագածային անտառներ: Սրանք շատ խիտ են, լիանուներով պատած, ուստի և մութն են: Արեգակի ճառագայթները շատ քիչ տեղ միայն կարողանում են ծառերի միջով ներս թափանցել: Օդը այստեղ տաք է լինում և խոնաւ: Սակայն իրենց փարթամութեամբ և բազմազանութեամբ Աֆրիկայի անտառները համեմատուել չեն կարող Մալայեան արշեպելագի կամ Հարաւային Աֆրիկայի անտառների հետ: Պատ-

ճառն այն է, որ Աֆրիկայում քիչ տեղեր կան, որտեղ ամենին երաշտ չլինէր:



Կ. 50. Բուսականութեան տարածումը Աֆրիկայում:

Ա. 50. Բուսականութեան տարածումը Աֆրիկայում: 1) Սահարամեայ բաօբարներ: 1) Սահարաները կտրող հովիտներում տարածում են անտառներ. գետերի և լճերի ճահճոտ ափերը ծածկւած են խիտ եղեգնով և պապիրուսով:

Երբ սկսում են ձմեռային երաշտները, այն ժամանակ սաւանների խոռը չորանում է և ծառերը թափում են իրենց տերևները: Ահա այդ միջոցին սաւաններում հեշտութեամբ առաջ են գալիս հրդեններ, որոնք բռնում են տասնեակ և հարիւրաւոր վերստ տարածութիւն:

Աֆրիկայի անապատները—Սահարա և Կալահարի—բռնում են ահազին տարածութիւն: Նրանք համարեա բոլորովին զուրկ են որևէ բուսականութիւնից: Հովիտներում և սարքերի լանջերի վրայ, որտեղ հազուադէպ անգամ տնձրե է գարելացի կամ շամազի կամ շամազ-կամաց ոչնչանում են:

¹⁾ Մատաղ բաօբարներ համարեա ամենին չեն պատահում, այդ պատճառով պէտք է կարծել, որ այդ ծառերը կամաց-կամաց ոչնչանում են:

լիս, աճում են միայն խոտ և փշատերև թփեր՝ մանրիկ տերեներով և չափազանց երկայն, հաստ արմատներով:

Աֆրիկայի ամենահիւսիսային մասում, Ատլասի երկրներում, բուսականութիւնը, անձրևների շնորհիւ, աւելի թարմ է քան Սահարայում: Բարձրաւանդակների վրայ կան տափաստաններ: Հովհաններում և սարերի լանջերին տարածում են մերձարևագարձային անտառներ՝ մշտականաչ ծառերով, ինչպէս են՝ ձիթենի, օլէանդր և այլն:

Աֆրիկայի ամենահարաւային մասում բարձրաւանդակների վրայ, գտնուում են դարձեալ տափաստաններ: Գարնալ այդ տափաստանները ծածկւում են ծաղկներով և շատ գեղեցիկ են լինում: Ծովափի հովհաններում աճում են մշտականաչ տերենոտ ծառեր (միայն թէ ուրիշ տեսակի, քան Աֆրիկայի հիւսիսում):

Աֆրիկայում աճում են շատ օգտակար բոյսեր, չարչատանից է դուրս եկել սուրճի ծառը, Գվինէի անտառներից—ձիթարմաւենին, Սահարայի ովազիսներից—փիւնիկեան արմաւենին, և այլն:

7. ԿԵՆՔԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՅԸԸ


Աֆրիկայի կենդանական աշխարհը պատկանում է երկու Աֆրիկական և Եւրոպական-Ասիական շրջաններին: Առաջին շրջանի կենդանիներ կան ամբողջ Աֆրիկայում, իսկ երկրորդ շրջանի կենդանիներ՝ մայր ցամաքի միայն հիւսիսարևմտեան մասում: Ամենից շատ կենդանիներ կան սաւաններում, որտեղ փարթամ արօտատեղիներում արածում են անտիլոպների, ջայլաֆների և զեբրերի խմբեր: Սաւանների վրայ ցրուած ծառերի ճներից են կերակրում ընձուղաները (ժիրաֆֆ). խոտակեր կենդանիներին հալածում են դիշակերները—առիւծներ, բորենիներ և շնագայլեր: Նրանց սիրած տեղերը անտառների բոլորն են, որտեղից նրանք գիշերը սաւանն որսի են զուրս դալիս:

Էլի նոյն տեղ, անտառների շրջակայքում, թափառում են


և ճղներով, արմափեռով ու պտուղներով կերակրուում ահազին և հաստակաշի վղեր և ոնդեղջիւրներ:

Աֆրիկայի անտառների

խորքում համեմատաբար աւելի քիչ կենդանիներ կան: Ամենից շատ այնտեղ պատահում են կապիկներ և նըրանց գլխաւոր թշնամիները՝ յովազներ (լէօպարդ): Ամե-



Նկ. 51. Աֆրիկայի աշխանի կենդանիներ:




Նկ. 52. Յովազ (լէօպարդ):

Նախուլ տեղերում, փոքրիկ ընտանիքներով, ապրում են մարդանման կապիկներ — շիմպանզէ և գորիլլայ: Անտառների և սաւանների մէջ ընկած գետերում և լճերում ապրում են գետաձիեր (բեղեմօտ) և կոկորդիլոսներ: Թէ անտառներում և թէ սաւաններում շատ կան միջատներ:

Նեղոսի գերին հասանքի և մեծ լճերի մօտերքը լինում են շատ թըրչուններ: Զմեռը այդ կողմերն են գալիս Եւրոպայից

տարափոխիկ թռչունների աճադին երամներ:

Հարաւային Աֆրիկայի տափաստաններում առաջ ապրում էին նոյն կենդանիները,



Նկ. 53. Շիմպանզէ:

ինչպէս նաև ջայլամների համար գժուար բան չէ մի օրում մի քանի տասնեակ և հարիւրաւոր վերստ տարածութիւն անցնել և ուտելիք կամ խմելիք որոնել: Անապատների ծայրերում պատահում են գիշակերներ—առիւծներ և բորենիներ:

Անապատների բոլոր կենդանիներն էլ մոխրա-ղեղնաւուն գոյն են ուսնենում, այդ պատճառով էլ գժուար է նրանց նկատել՝ նոյն գոյնը ունեցող ժայռերի և աւազի մէջ:

Առլասի երկրներում ևս առաջ կային ջայլամներ և առիւծներ, իսկ այժմ նրանք համարեա ոչնչացրուած են:

8. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Աֆրիկայում ապրում են մօտ 150 միւլիոն բնակիչ-

ներ, այսինքն՝ ամբողջ մարդկութեան $\frac{1}{10}$ -ից էլ պակաս: Որովհետեւ Աֆրիկայի մակերեսոյթը հաւասար է մօտ 27 միլ. քառ.



Նկ. 54. Գորիլլայի ընտանիք:

Ճրկների առատութեան պատճառով հնարաւոր է երկրագործութեամբ պարապելը: Իսկ ամենախիտ ազգաբնակութիւնը դանւում է Նեղոսի ստորին հոսանքի բերրի հովտում:

Աֆրիկայի ժողովուրդները պատկանում են երեք՝ սև, սպիտակ և գեղին ցեղերի: Սև ցեղին է պատկանում Աֆրիկայի բոլոր բնակիչների $\frac{2}{3}$ -ից աւելին: Այդ ցեղին պատկանող գլխաւոր ժողովուրդն են կազմում Աֆրիկայում—ներերը: Սրանք ապրում են սաւանների և արևադարձային անտառների ամբողջ տարածութեան վրայ և իրենց լեզուին նաև լուզ բաժանուած են: Սուգանի և Բանտու նեղրերի:

Սև ցեղին են պատկանում նաև հոտտեն տոտները և բուշմէնները, որոնք ապրում են հարաւարեկմտեան Աֆ-


վերստի, կնշանակէ իւրաքանչիւր քառակուսի վերստի վրայ միջին հաշուով գալիս է վեց մարդուց պակաս:

Աֆրիկայի տարբեր մասերը տարբեր չափով էլ բնակուած են: Անապատները համարեա անմարդաբնակ են: Սակաւ բնակութիւն կայ նաև ճահճոտ արևադարձային անտառներում, որոնց խորքերում թափառում են միայն մանրիկ որսորդական ցեղեր: Աֆրիկայի սաւանները շատ աւելի խիտ են բնակուած, քան կենդրոնական ասիական տափաստանները, որովհետեւ սաւաններում անՃրկների առատութեան պատճառով հնարաւոր է երկրագործութեամբ պարապելը: Իսկ ամենախիտ ազգաբնակութիւնը դանւում է Նեղոսի ստորին հոսանքի բերրի հովտում:

Աֆրիկայի ժողովուրդները պատկանում են երեք՝ սև, սպիտակ և գեղին ցեղերի: Սև ցեղին է պատկանում Աֆրիկայի բոլոր բնակիչների $\frac{2}{3}$ -ից աւելին: Այդ ցեղին պատկանող գլխաւոր ժողովուրդն են կազմում Աֆրիկայում—ներերը: Սրանք ապրում են սաւանների և արևադարձային անտառների ամբողջ տարածութեան վրայ և իրենց լեզուին նաև լուզ բաժանուած են: Սուգանի և Բանտու նեղրերի:

Սև ցեղին են պատկանում նաև հոտտեն տոտները և բուշմէնները, որոնք ապրում են հարաւարեկմտեան Աֆ-

բիկայում: Նեղրերից նրանք զանազանւում են իրենց աւելի փայլուն, բայց խորշումաւոր կաշուով և դանգուր մարդուով:



Նկ. 55. Ցեղերի տարածումը Աֆրիկայում:
Թամիտները և սեմիտները նըման են իրար թէ արտաքինով և թէ լեզուով. միայն թէ քամիտների մէջ մի փոքր նկատելի են սեղերի մի քանի նշաններ՝ աւելի հաստ շրթունքներ, սակաւամազութիւն դէմքի վրայ: Երկուսի կաշուի գոյնն էլ թուխ է:

Եւրոպացիները վազուց չէ որ սկսել նն բնակութիւն հաստատել Աֆրիկայում. նրանք խիտ ապրում են միայն ամենահարաւային մասում, որտեղի կլիման նրանց համար առողջարար է:

Դեղին ցեղին պատկանում են միայն Մադագասկարի բնակիչները, մագագասաները, որոնք այստեղ են գաղթել հաւանօրէն Մալայան արշիպելագից:

ԱՓՐԻԿԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԵՐԸ

9. ԵԳԻՊՏՈՒՄ

Եգիպտոս կոչւում է ստորին Նեղոսի հովիտը՝ շուրջը տարածուած անապատային մասերով: Այդ հովիտը ներկայացնում է մի տեսակ երկայն ովազիս՝ Մահարայի մէջ:

Հովտի լայնութիւնը հասնում է մինչև 50 վերտիպ, բայց մարդկային կեանքի համար պէտքական է միայն նրա այն մասը, որ ողողում է ջրով, երբ Նեղոսը վարարում և ափերից դուրս է գալիս: Հովտի այդ մասի լայնութիւնը ոչ մի տեղ 15 վերտիպ չի անցնում. միայն գելացիում նա շատ աւելի լայն է: Հովտի մնացած ամբողջ մասը անապատ է, որովհետև եգիպտոսի կլիման չափաղանց չոր է և անձրև համարեա երբէք չէ գալիս:

Եգիպտոսի բնակիչների թիւը հասնում է մոտ 10 միլիոնի, մինչդեռ նրա շրջակայրի անապատները համարեա անմարդաբնակ են: Ամբողջ ազգաբնակութեան $\frac{3}{4}$ -ը կազմում են սպիտակ ցեղի քամիտ ճիւղին պատկանող ֆելլաները:

Սրանք հին եգիպտացիների սերունդ են, միայն թէ խառնուած են արաբների հետ և իւրացրել են վերջիններիս լեզուն ու կրօնը—մահմեդականութիւնը: Նրանց ամբողջ կեանքը կախուած է Նեղոսից: ¹⁾ Գլխաւոր զբաղմունքն է՝ երկրագործութիւնը:

Դեռ վարաւոնների ժամանակից սկսած նեղոսի հովիտը ամբողջապէս կտրառուած է ջըրանցքներով, առունենական այս ջրանցքները երկու տեսակ են. կան այնպիսինները, որ խոր են, կան այնպիսիններն եւ, որ

¹⁾ Ի գուր չէ, որ ֆելլահների նախնինները—հին եգիպտացիք—



Նկ. 56. Ֆելլահ:

ծանծաղ են: Խոր ջրանցքներով ջուրը գետից գալիս է ամբողջ տարուայ ընթացքում, իսկ ծանծաղ ջրանցքներով՝ երբ Նեղոսը վարարում է:

Նեղոսը վարարում է ամառը, երբ եղանակը պարզ և շոգ է լինում: Վարարելուց Նեղոսը պղտորում է, ջրանցքները լցում են ու արտերը ողողում: Ամեն ինչ ծածկում է ջրով որից բարձր մնում են միայն արմաւենու անտառակներով, ծառերով և քաղաքներով ծածկուած կղզիներ:

Պղտոր ջուրը կանգնում է ամբարդակներով (պատճշներով) շրջապատուած դաշտերում և զետինը ծածկում է արդաւմնդ տղմի հաստ շերտով: Հոկտեմբերին միայն, երբ ջուրը կրկին իջնում է, ֆելլաները ցանում են թաց տղմի մէջ ցորեն, բակլայ, եղիպտացորեն, բամբակ, շաքարեղիկ և այլն: Այս բոլորը աճում է ուշ աշնանը և ձմեռը: Այն ժամանակ, երբ մեջնում արտերը ձիւնով են ծածկուած լինում, Եղիպտոսում կանաչում են փարթամ ցանքսերը: Հունձը լինում է գարնանը — մարտին և ապրիլին:

Հունձից յետոյ ֆելլաները սկսում են մաքրել ջրանցքները, որոնք տղմով են ծածկուած լինում: Տիզմը զամբիւղների մէջ ածերով նրանք վեր են բարձրացնում և նրանով ամրացնում ամրարդակները: Հարիւմ հաղարաւոր ֆելլաներ ամեն գարուն այդ գործով են զրադում:

Հունձը ծղիպտոսում, միշտ էլ, շատ առատ է լինում: Ոչ մի տեղ հողը այնպիսի հունձ չէ տալիս, ինչպէս Նեղոսի հովտում: Այդ պատճառով էլ աղգաբնակութիւնը այնտեղ խիս է, Ամեն տեղ, համեմատաբար մի փոքր բարձրագիր վայրերում, ցրուած են ֆելլաների գիւղերը: Տները այդ գիւղերում շինած են լինում իրար շատ մօտ, այնպէս որ հարթ կտուրները յաճախ իրար են կպչում:

Տները շինում են Նեղոսի տղմից, ծեծած յարդով խառը: Այդ աները համարեա պատուհան չեն ունենում: Կահ-կարասիք էլ չի լինում այնտեղ: Ֆելլաները քնում են գետնին, որ գարձեալ նոյն տղմից է շինած լինում: Ֆելլաները ընդհանրապէս շատ աղքատ կեանք են տառածացըրել էին Նեղոս, գետը և նրանք աղօթելիս դիմում էին օրինակ այս խօսքերով: «Փառք քեզ, Նեղոս, փառք քեզ, որ կեանք ես տառիս Եղիպտոսին»:

անց կացնում, որովհետև բազմատեսակ հարկեր են վճարում եղիպտական կառավարութեան:


Բացի ֆելլաներից Եղիպտոսում ապրում են նաև զըպիներ (կոպտեր) և արաբներ: Ղպտիներն ևս իրենց ծագումով հին Եղիպտացիների սերունդ են, բայց ֆելլաներից զանազանում են նրանով, որ քրիստոնեայ են, պարապում են արհեստներով և առեւրով ու ապրում են գլխաւորապէս քաղաքներում: Ղպտիների թիւն է մօտ 700,000: Արաբների մի մասը ապրում է քաղաքներում և առեւրով է պարապում, իսկ մեծամասնութիւնը, այսպէս կոչուած բերդուիները, թափառաշրջիկ կեանք է վարում: Վերջապէս, Եղիպտոսի քաղաքներում ապրում են նաև յոյներ, հայեր, թուրքեր և եւրոպացիներ:

Եղիպտոսի առեւրական նշանակութիւնը շատ մեծ է: Այնտեղից Եւրոպա արտահանում է շատ ցորեն և բամբակ: Բացի դրանից՝ Եղիպտոսի վրայով է կատարուում առեւրուը ներքին Աֆրիկայի հետ՝ Նեղոսով, երկաթուղով կամ կարաւաններով: Յատկապէս մեծ նշանակութիւն ստացաւ Եղիպտոսը, երբ 1869 թուականին փորուեց Սուէզի ջրանցքը: Այս ջրանցքը, որի երկայնութիւնն է 110 վերստ, միացնում է Միջերկրականը Կարմիր ծովի հետ: Այդ ջրանցքով են անցնում այն նաւերը, որոնք Եւրոպայից Ասիա, Եւստրալիա, արևելեան Աֆրիկա են գնում: Սուէզի ջրանցքը փորելով 7000 վերստ կարձացաւ Եւրոպայից Հնդկաստան տանող ճանապարհը Եղիպտոսը կառավարում է խեղիւրը: Բայց անկախ չէ, հարկ է վճարում Թիւրքիայի սուլթանին: Սակայն իրապէս Եղիպտոսը ան գլիացիների ձեռքին է: Եղիպտական բոլոր պաշտօնեաները, զօրապեաները և բարձր զինուորականները անգլիացիներ են:

Եղիպտոսի մայրաքաղաքն է՝ Կահիրէ, որ շինուած է Նեղոսի գետայի սկզբում: Կահիրէն ամենամեծ քաղաքն է ոչ միայն Եղիպտոսում, այլ նաև ամբողջ Աֆրիկայում (ունի մօտ 600,000 բնակիչ):

Կահիրէից ոչ հեռու գտնուում են հին փարաւունների դամբարանները, — և կայական պիրամիդները (բուրգեր): Թէպէտ նրանք շինուած են:

Նած են Քրիստոսից մի քանի հազար տարի առաջ, բայց և այնպէս մինչև օրս էլ լաւ են պահուել, որովհետեւ պինդ քարից են: Բուրգերի



Նկ. 57. Կահիրէ:

Ներսում գտնուել են փարաւոնների զմբսած մարմինները, որ մումիան կոչում: Բուրգերից շատերի վրայ էլ մնացել են հին եղիպտացիների նշանագրերը, որ հիերօգլիֆ են կոչում: Բացի այդ՝ ներկայումս Եգիպտոսում մնացել են նաև հնագիտական շատ ուրիշ մնացորդներ, տաճարների աւերակներ, սփինքսներ, օբելիսկներ—ամբողջ քարից կտրած:

Եգիպտոսի ամենանշանաւոր նաւահանգիստն է՝ Ալեքսանդրիան: Նա միացած է Նեղոսի հետ նաւատար ջրանցքով՝ իսկ Կահիրէի հետ՝ երկաթուղով: Թէ Կահիրէում և թէ Ալեքսանդրիայում ապրում են բաւականաչափ հայեր, գլխաւորապէս թիւրքիայից:

Սուէզի ջրանցքի հիւսիսային ծայրում գտնում է Պորտ-Սայիդ մեծ քաղաքը, իսկ հարաւորմ Սուէզ:



Նկ. 58. Պիրամիդներ և սփինքս:

10. ԱՏԼԱՍԻ ԵՐԿՐՈՒԵՐ

(Մարոկո, Ալժիր եւ Թունիս, Տրիպոլի եւ Բարեկա)

Ատլասը բաղկացած է մի քանի լեռնաշղթաներից, որոնք լինեած են Ատլանտեան ովկիանոսի և Միջերկրական ծովի ափերի երկայնութեամբ: Ատլասի ծովափնեալ լանջերը շատ տեղերում ծածկուած են մերձարևադարձային անտառներով, որոնցում աճում են մշտագալար ծառեր (օրինակ՝ ձիթենի, դափնի) և փշակաղնի: Զմեռային յորդ անձրևների շնորհիւ ծովափնեայ մասը յարմար է երկրագործութեան և այգեգործութեան համար: Ատլասի շղթաների մէջ ընկած բարձր հովիտները տափառուաններ են, խոտով ծածկուած: Այդ տափառանները յարմար են անասնապահութեան համար: Ատլասի հարաւորմ ստորոտներից սկսում է անապատը, որի ովագիսներում միայն ապրել կարելի է:

Ատլասի ազգաբնակութեան մեծ մասը և բնիկները սպիտակ ցեղի քամիտ ճիւղին պատկանող բերքերներն են, որ ամենահին ժամանակներից սկսած սպրում են այդտեղ: (Աշխրում նրանք բարիլ են կոչւում): Ասիայից Ատլաս են եկել յետոյ սեմիտ արաքները: Նրանք հպատակեցրել են բերքերներին և երկար ժամանակ իշխել նրանց վրայ, իսկ արևմտեան Ատլասում մինչև օրս էլ նրանք իշխում են:

Քաղանքերում, յիշած երկու ժողովուրդները խառնուել են և այդ խառնուրդ ժողովուրդը կոչւում է մաւրեր:

Արաքները հովիւներ են և պարապում են գլխաւորապէս անասնապահութեամբ: Նրանք սիրում են թափառել և բնակում են վրաններում: Թափառելիս նրանք կողոպտում են նստակեաց բերքերներին:

Բերքերները նստակեաց կեանք են վարում: Նրանց գլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և այդ գործութիւնը: Նրանք արտերը ցանում են աշնանը, որ ձմեռուայ անձրևները ջրեն այդ արտերը: Հունձը լինում է գարնան սկզբին: Հացահատիկների (ցորեն, գարի) հունձը սովորաբար լաւ է լինում, միայն թէ մորեխը երբեմն փչացնում է ցանքսը:

Այն միջոցին, երբ տղամարդիկ աշխատում են արտերում կանայք զբաղում են խաղողի և այլ պատուղների (ապելսին, դեղձ, ձիթենի) այգիների մշակութեամբ:

Ատլասի երկրների համարեա բոլոր բնակիչների կը օ՞նը մահմեղականութիւնն է, լեզուն՝ արաքերէնն է:

Կառավարութեան նայելով՝ այդ երկրները բաժանում են մի քանի մասի:

Արևմուտքում գտնում է ՄԱՐՈԿՈ պետութիւնը: Պետութեան գլուխն է սուլթանը:

Գաւառները կառավարում են շէյխերը, որոնք, թէպէտ ընդունում են սուլթանի իշխանութիւնը, սակայն միշտ չեն հնազանդում սուլթանին: Բոլոր իշխանաւորների օրինազանցութիւնը և թափառաշրջիկների կողոպտումները խանգարում են երկրի արդիւնագործութիւնը և առետուրը:

Մարոկկօի գլխաւոր քաղաքներն են՝ Ֆէս և Մարոկկօ

ֆէսում է ապրում սուլթանը: Մարոկկօի գլխաւոր նաւահանգիստն է՝ Տանժեր, այդտեղով է կատարուում առևտուրը Եւրոպայի հետ:

Ալժիր և Թունիս երկրները կազմում են Ատլասի արեւմբեան մասը. նրանք պատկանում են ֆրանսիացիներին՝ սրանց գաղութներն են: Ֆրանսիացիները շատ օգտակար գործեր են կատարել այդ գաղութներում: Այնտեղ հաստատել են նրանք կարգ ու կանոն, անց են կացրել շատ երկաթուղիներ, ուռոգել այնտեղ խոր ջրհորներ (արտէզեան): Այնտեղ, ուր առաջ անապատ էր, այժմ ծաղկում են փիւնիկեան արմաւենու շատ անտառակներ: Արդիւնագործութիւնը և առետուրը, գարձեալ ֆրանսիացիների շնորհիւ, զարգանում են այնտեղ: Եւրոպա են արտահանուում շատ գինի, միրգ, փշակաղնու կեղև և այլն: Ընդհանրապէս ֆրանսիացիները դնում են այնտեղ հում նիւթեր, իսկ ծախում են՝ իրենց գործարաններում պատրաստած ապրանքներ: Գլխաւոր քաղաքները և նաւահանգիստներն են՝ Ալժիր և Թունիս:



Նկ. 59. Հրապարակ Թունիսում:

ՏՐԻՊՈԼԻ և ԲԱՐԿԱ երկրները իրենց կլիմայով նման են Թունիսին և Սլժբին. միայն թէ անձրեւ այստեղ աւելի պակաս է գալիս. այդ պատճառով էլ նրանց բնակիչները (նոյն արաբները և բերբերները) աւելի աղքատ կեանք են անցկացնում: Այդ երկրները պատկանում են Թիւրքիային և կառավարում են թիւրք պաշտօնեաներով: Բայց մի քանի արաբական շէյխեր աւելի մեծ նշանակութիւն ունեն, քան ինքը թիւրքական ընդհանուր նահանգապետը:

11. Ս Ա Հ Ա Ր Ա

Սահարան աշխարհիս ամենամեծ անապատն է. նա տարածւում է Աֆրիկայի ամբողջ մայր ցամաքի լայնութեամբ՝ Աստվածաշնչում ովկիանոսից մինչև կարմիր ծովի ափերը, և Ասրաի սարերից ու Միջերկրական ծովից մինչև Սուդան: Սահարան մեծ է եւրոպական Ռուսաստանից և հաւասար է Եւրոպայի ^{2/3}-ին: Ամբողջ անապատը ծածկուած է լեռկ ժայռերի շերտերով կամ աւազաթմբերով: Սահարայում փշում են աւազաբեր փոթորիկներ, որ սամում են կոչում: Այդ փոթորիկը թէկ կարճ է տեսում, բայց և այնպէս չորացնում է



Նկ. 60. Սամում փոթորիկ.

ջուրը, ջրհորները աւազով է լցնում և ճանապարհորդներ ոչնչացնում: Տարիներ շարունակ անձրեւ չի գալիս Սահարայում: Շոգը ստուերի տակ համառ է 30—40 աստիճանի, երեմն 50-ի:

Մարդկացին կեանքը Սահարայում հնարաւոր է միայն լեռոտ տեղերում, որտեղ անձրեներ են գալիս և խոտ է բննում, նաև ովազիսներում, որտեղ գետնի տակից ջուր է դուրս գալիս և աճում են փիւնիկեան արմաւենիներ:

Լեռոտ տեղերում ապրում են թափառաշրջիկներ, օրինակ Սահարայի արևմտեան կիսում՝ տուարէ գները, որոնք բերբերական ցեղին են պատկանում: Սարալանջերի աղքատ արօտատեղիներում պահում են նրանք այծ, ոչխար և սուզ:



Նկ. 61. Տուարէդ:

Տուարէդները ապրում են վրաններում, որ իրենք են գործում ոչխարի բրդից և ուղտի մազից: Նրանք ապրում են շատ աղքատ: Յաճախ, երբ արմաւ (խուրմայ) չի լինում, նրանք կերակրում են մորեխով և մողէսներով: Պատահում է, որ նրանք յարձակումներ են գործում կարաւանների վրայ և կողոպուտներ անում: Երբեմն յարձակում են մինչև իսկ Աստված և Սուդան:

Ովազիսներում ապրում են նաև բերբերներ, որ սաստիկ խառնուել են արաբների և մասամբ նեղբերի հետ: Նրանց ամբողջ կեանքը կախուած է փիւնիկեան արմաւենուց: ¹⁾ Սրա պտուղը, արմաւը, ովազիսների բնակիչների սննդեան գլխաւոր առարկան է:

Տարէն մի քանի անգամ Սուդանից գէպի Տրիպոլի են գնում

¹⁾ Անապատի բնակիչները արմաւի համար ասում են՝ «Միակ միեթարութիւնը աղքատների, օգնողը և փրկիչը ամենքի»:

Սահարայով մեծ կարաւաններ՝ ջայլամի փետուրներով և փղոսկրով։ Վերադարձին նրանք Սուդան են բերում եւրոպական ապրանքներ, իսկ ճանապարհին վերցնում են նաև աղ, որ ստացւում է Սահարայի մի քանի աղի լճերից։

Սահարայի մեծ մասը պատկանում է Քրանչիային, բայց ֆրանսիացիների իշխանութիւնը ճանաչում են միայն Սահարայի՝ Ալժիրի սահմանին մօտ գտնուող բնակիչները։

Սահարայի և Սուդանի սահմանի մօտ է գտնուում Տիմբուկտու քաղաքը՝ Նիգեր գետի վրայ։

12. ՀԱԲԵՇՍՏԱՆ

Հարէշստանը ներկայացնում է մի բարձր սարահարթ (բարձրաւանդակ), որ ամբողջապէս կարտուած է կիրճերով և ունի բազմաթիւ լեռներ՝ սովորաբար հարթ գագաթներով։ այդ գագաթները ծածկուած են լինում աւագի շերտերով կամ հանգած լաւայով։ Կան նաև շատ հանգած հրաբուխային սարեր՝ մինչև 4 վերստ բարձրութեամբ։

Մարդկային բնակութեան համար ունեցած յարմարութեանը նայելով՝ հարէշստանը կարելի է բաժանել երեք մաս—շող (ներքեւ մասում), զով (վերին մասում) և տաք (նրանց մէջ տեղում)։ Շոգ մասը տարածւում է հովիտներում և լեռների ամենացածր լանջերում։ Այս մասը ամբողջապէս ծածկուած է արևադարձային անտառներով։ Այդտեղ գտնուում են բազմաթիւ կապիկներ և յովազներ (լէօպարդ)։ պատահում են նաև առիւճներ, ընձուղտներ, փղեր և ոնզեղջիւրներ։ Գետերում ապրում են կոկորդիլոսներ և բազմաթիւ ձիագետիներ (բեղեմոտ)։ Սակայն մարդկային բնակութեան համար անյարմար է այս մասը.—ամառը, անձրևների ժամանակ, հովիտներով հոսում են արագավագ հեղեղներ, որոնք ափերից դուրս են գալիս և ողողում շրջակայը։ Շատ յարմար չէ բնակութեան համար նաև վերին, զով մասը, որ տարածւում է 2^{1/2}—4 վերստ բարձրութիւն ունեցող բարձրաւանդակների վրայ։ Սարերի գագաթները այս մասում երկար ժամանակ

ծածկուած են մնում ձիւնով։ Անձրևային եղանակներին յաձախ որոտներ են լինում և շատ կարկուտ է գալիս։ Թէպէտ և սարալանջերը ամեն տեղ ծածկուած են լինում հիւթալից կանաչ խոտով, բայց երկրագործութեամբ պարապել այնտեղ համարեա անհնար է,—միայն գարի է համում այնտեղ։

Բնակութեան համար ամենից յարմար է միջին բարձրութիւն ունեցող՝ տաք մասը։ Այստեղ լաւ աճում է խաղողի որթը. այստեղ է սուրճի ծառի հայրենիքը, իսկ որ ամենագլխաւորն է՝ այս բարձրաւանդակների վրայ շատ լաւ աճում են՝ ցորեն, գարի, կորեկ. իսկ ծաղկաւէտ արօտատեղիներն էլ կերակրում են կովերի, ոչխարների և այծերի բազմաթիւ հօտեր։

Հարէշները խառնուրդ ժողովուրդ են։ Նբանք սեմիտցեղին են պատկանում, այս երկիրն են գաղթել Արաբիայից և խառնուել են քամիտների ու նեղերի հետ։ Շատ վաղուց արդէն նրանք ընդունել են քրիստոնէութիւնը, որը սակայն շատ կռապաշտական և մահմեդական հետքեր ունի իր մէջ։

Նրանց գլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և անասնապահութիւնը։ Որովհետեւ ամառ ժամանակ՝ հարէշստանում շատ անձրեւ է գալիս, այդ պատճառով էլ հունձը այնտեղ միշտ էլ լաւ է լինում։

Հարէշստանի առանձին մասերը կառավարում են իրենց իշխաններով, որոնք յարձակումներ են գործում իրար վրայ և աւերում երկիրը։ Այդ իշխանները կոչւում են Նեգուս։ Ամբողջ Հարէշստանի կառավարողն է «Նեգուս—Նեգեստի»—թագաւորների թագաւորը, —որին հարկ են տալիս միւս իշխանները։ Նա անսահման իշխանութիւն ունի իր հպատակների կեանքի և մահուան վրայ։


Հարէշստանի գլխաւոր քաղաքն է՝ Ալդիս-Ալիքա։ Թէպէտ նա ունի մօտ 100 հազար բնակիչ, բայց նման է ոչ թէքաղաքի, այլ մի մեծ գիւղի։

13. ՍԱՀԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՐԵՒՄԱՐԶԱՅԻՆ ԱՆՏՍՐԱՆԵՐԻ ՇՐՋԱՆ ԱՓրիկայի այս մասը տարածւում է Սահարայի հարաւա-

յին ծայրից մինչև կալահարի, և Ասուանտեան ովկիանոսի ափերից մինչև Հնդկական ովկիանոսի ափերը:

Աֆրիկայի սաւանների շրջանի բնութիւնը շատ փարթամ է: Տարուայ ամառային ամիսներին, երբ արեգակը բարձր է կանգնած լինում, տեղում են առատ, յորդ անձրևներ: Սաւանները ծածկում են խիտ և բարձր խոտով: Սաւանների մէջ ցրուած ծառերը ծաղկում են և արևադարձային արգաւանդ հողը (սևահող) երկրագործ մարդկանց առատ բերք է տալիս: Զմեռուայ ամիսներին եղանակը չոր է լինում և այնպէս տաք, ինչպէս ամառը մեր երկրում. երկինքը պարզ է լինում, արեր էլի այրում է. այդ միջոցին սաւանների խոտը գեղնում և չորանում է. ծառերը չորութիւնից թափում են իրենց տերևները:

Զմեռուայ ամիսներին անձրև գալիս է միայն Գվինէի ծոցի ափերին և Կոնգօ գետի աւագանում, այդ պատճառով էլ այնտեղ աճում են արևադարձային անտառներ: Այդ անտառներում վայրի գրութեան մէջ պատահում են ձիթենու և խաղողի արմաւենիներ: Սակայն մարդկային բնակութեան համար այդ անտառները անյարմաք են. շատ քիչ տեղ կայ այնտեղ երկրագործութեան համար, անտառներն էլ մաքրելլ հեշտ բան չէ:



Նկ. 62. Նկոր:

սում բարձր է, իսկ կենդրոնում ցածրանում է: Գլխաւոր գետն է՝ Նիղեր:

Սուդանի նեղրելը բանտու նեղրելից տարբերում են միայն իրենց լեզուով: Նեղրերի գլխաւոր զբաղմունքն է՝ Երկրագործութիւնը: Նրանք չգիտեն թէ ինչ բան է գութան կամ արօր. հողը փորում են բրիչներով կամ հասարակ, ծայրը սրած փայտերով: Ամենից շատ ցանում են նրանք ափը կական կորեկ (գուրբու): Յաջողութեամբ մշակում են նաև բանան, շաբարեղէգ և շատ ուրիշ բոյսեր:

Գիւղերում նեղրելը մշակում են միայն արմաւենիներ:

Անասնական ութիւնը սաւաններում ամեն տեղ գարգացած չէ: Իսկ բուն Սուդանում և Նուբիայում (Նեղոսի միջին հոսանքի երկրամասում) անտառապահութիւնը ծաղկած վիճակի մէջ է և աւելի մեծ նշանակութիւն ունի, քան երկրագործութիւնը:



Նկ. 63. Բևանակիրների կարաւանը անցնում է սաւաննով:

Արևադարձային անտառներում ապրում են թղուկների ցեր, որոնք զբաղւում են միայն որսորդութեամբ և որսի ման գալով անդադար մի տեղից ուրիշ տեղ են թափառում:

Նեղրելը հաստակեց կեանք են վարում: Ապրում են գիւղերում: Քաղաքներ շատ քիչ կան նրանցում, որովհետեւ

առևտուրը զարգացած չէ։ Մեծ քաղաքներ կան միայն Առ-
դանում, օրինակ՝ Կուկա, Կանի, Տիմբուկտու։



Նկ. 64. Բանուած թղուկ (աղեղով և թունաւորած նետերով)։ Եշխանաւորները յարձակումներ են գործում հարեան երկրների վրայ և յաջողութիւն ունեցած դէպքում թալանում են նրանց կարո-
ղութիւնը, իսկ յաղթուած և կենդանի մնացած մարդկանց էլ ստրուկ են դարձնում ու ծախում։

Ոչ մի տեղ ստրկութիւնը այն չափերի չէ հասած, որչափ Աֆրիկայում, մանաւանդ այն ժամանակ, երբ ստրուկ-նեգրերը նաւե-
րով տարւում էին Ամերիկա ու ծախում այնտեղ։ Այժմ էլ, երբ Ամե-
րիկայում ոչնչացել է ստրկութիւնը, Աֆրիկայի շուկաներում ստրուկ-
ները առևտրի ամենասովորական առարկայ են։ Կենդրոնական Աֆրի-
կայում յաղթուած թշնամիներին յաճախ ուտում են։ Սրանով յայտ-
նի են առանձնապէս նեամ-նեամն երը (որ նշանակում է «լափող-
ներ»)։ Նրանք ուտում են ոչ միայն ընկած թշնամիներին և գերիներին,
այլ նաև իրենց ցեղակիցներին, օրինակ՝ որբերին և անօդնական
մարդկանց։ Նրանց գիւղերում ամեն տեղ թափթափ կարելի է տես-
նել մարդկային ոսկրներ, իսկ լափած թշնամիների գանգերը նրանք
կախ են տալիս ծառերի ճղներից՝ իրը զարդարանք։

Նեգրական ամենանշանաւոր պետութիւնն է՝ Լիբերիան հասարակապետութիւնը՝ Մոնրովիա գլխաւոր քաղաքով։ Այդ հասարակապետութիւնը հիմնել են այն նեգրերը, որոնք Ամե-
րիկայում ստրկութիւնից ազատուեցին։

Նեգրերի ընդունակութիւնը, ընաւորութիւնը և կրօնը՝ Նեգրերի երեխա-
ները հեշտութեամբ են սովորում կարդալ-գրել և շուտ են իւրաց-

նում օտար լեզուներ։ Սակայն նրանց զարգացումը շուտ էլ կանգ է առնում, և նրանք ամբողջ կեանքի ընթացքում երեխայի պէս են մնում—չեն մտածում բնաւ էգուցուայ մասին, սիրում են խաղեր, շա-
տախօսութիւն և զուարձութիւն։

Նեգրերը չեն սիրում կարգին աշխատանք, թէպէտ նրանց ոյժը
մեծ է, բայց աշխատանքի մէջ ամենակին չեն կարող համեմատուել
եւրոպացիների հետ և իրենց ընդունակութեամբ յետ են նոյն իսկ
հնդիկներից։

Նեգրերի կրօնը ֆեաիշիզմն է։ Ֆետիշ կոչում են այն հա-
սարակ առարկաները, որոնց պաշտում են նեգրերը։ Սրանք հաւատում
են, իբր թէ այդ առարկաների մէջ կամ նրանց մօտ գտնուում են բարի
կամ չար ոգիներ, որոնք կարող են օգնել կամ վասել մարդու։ Մարդ-
կանց և ոգիների մէջ եղած միջնորդներն են՝ քը մերը։ Նրանք ոգի-
ների սիրտը առնում են ազօթքներով, պարերով և զոհերով (յաճախ
մարդկային զոհերով)։ Նրանք են բժշկում նաև հիւանդներին, միայն
ոչ թէ գեղերով, այլ կախարդութեամբ։

Վերջին զարերի ընթացքում նեգրերի մէջ ֆետիշիզմը սկսեց տե-
ղի տալ մահմէդականութեան, գլխաւորապէս շնորհիւ արար վա-
ճառականների և որսորդների։ Իսկ քրիստոնէական քարոզը նեգրերի
մէջ սակաւ յաջողութիւն է գտնում։

14. ԵկրողԱՅԻՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՍԱՀԻԱՆՆԵՐԻ ԵԽ ԱՆՑԱԽ- ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Շնորհիւ նեգրական պետութիւնների թուլութեան եւ-
րոպացիները կարողացան տիրել կամ առանց որևէ պատե-
րազմի բաժանել իրար մէջ Աֆրիկայի բոլոր սաւանները և
անտառապատ մասերը (չհաշուելով Լիբերիա հասարակապե-
տութիւնը)։ Այսպէտ ամբողջ Սուլանը այժմ բաժանուած է
ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի մէջ։ Կենդրոնական
Աֆրիկան ևս բաժանուած է եւրոպացիների մէջ։ Արևմտեան
ծովափում գտնուում են՝ գերմանական կալուածքները (Կամե-
րուն գաղութը), ֆրանսիական (Ֆրանսիական Կոնգո) և պոր-
տուգալական (Պ.նգոլա) կալուածքները, իսկ արևելքում՝ անգ-
լիական, գերմանական և պորտուգալական կալուածքները;
Կենդրոնական Աֆրիկայի մէջտեղիում ընկած է Կոնգո պետու-
թիւնը, որ ենթակայ է Բելգիային։

Եւրոպական այս գաղութների կլիման շատ վատառողջ է (ամեն տեղ մեծ զոհեր է տանում մալիարիան)։ այդ պատճառով էլ նրանք անյարմար են եւրոպացիների բնակութեան համար և միայն առեւտրական տեսակէտից նշանակութիւն ունեն։ Եւրոպացիները այդտեղ բերում են հրազն, ձոթեղէն, ապարանջան (բրասլէտ) և ուրիշ զարդարանքներ, որ շատ են սիրում նեզրերը։ Իսկ նեզրերից նրանք գնում են՝ արմափի իւղ, կառչուկ, փղի և ձիագետի ժանիք, զազաների մորթի։

Առեւտրի յարմարութեան համար եւրոպացիները մայր ցամաքի ներսը անց են կացրել մի քանի երկաթուղային գծեր, իսկ մեծ գետերի և լճերի վրայ սարքել են նաւագութիւն։

Մի քանի տեղերում եւրոպացիները մշակել են շաքարեղէզնի, սուրճի և կակօի տնկարաններ (պլանտացիաներ)։ Բայց այդ տնկարանները չեն ծաղկում, որովհետեւ նեղքերը չեն սիրում տեսական աշխատանք, իսկ եւրոպացիները հիւանդանում են ջերմից։ Եւրոպացիները սովորաբար ապրում են ֆակտորեաներում, այսինքն առետրական կոյարաններում, շինուած այս ու այն տեղ՝ ովկիանոսի կամ մեծ գետերի ափերին։ Իւրաքանչիւր ֆակտորիա ամրացրած է պինդ ցանկապատով և պահպանում է սկամորթ զինուորների վաշտով՝ սպիտակամորթ սպայի զեկավարութեամբ։

15. ՀԱՐԱԿԻԱՅԻՆ ԱԳՐԻԿԱ.

Կլիմային նայելով Հարաւային Աֆրիկան կարելի է բաժանել երեք մասի՝ Հնդկական ովկիանոսի խոնաւ ծովափ, Օրանժ գետի չոր աւազան և կալահարի ջրագուրկ անապատ։

Հնդկական ովկիանոսից փչող խոնաւաբեր քամիները ծովափերում մթնոլորտային շատ աեզտմներ են թափում։ Սյդ պատճառով այդտեղ պատահում են մերձարևագարձային անտառներ և լաւ աճում են՝ խաղող, նարինջ և ուրիշ պտղատու ծառեր։ Դրակոնի սարերից արևմուտք աւելի քիչ մթնոլորտային տեղումներ են թափում և այդտեղ սկսւում են տափաստաններ, միայն անաօնապահութեան համար յար-

մար։ Իսկ կալահարի անապատում աճում են միայն կարծր խոտ և վշտու թփեր։

Կալահարիի չորութեան պատճառներից մէկն այն է, որ Հարակայի արևմտեան ծովափի երկայնութեամբ անցնում է ցուրտ հոսանք, որ շատ քիչ գոլորշիներ է տալիս։ Հար. Աֆրիկայի բնիկ ազգաբնակութիւնը կազմում են արևելեան մասում զուլուսները կամ քաֆրերը (որ բանտու նեզրերից են), իսկ արևմտեան մասում՝ հոտտենտոտները։ Սյդ ցեղերի գլխաւոր զբաղմունքն է անասնապահութիւնը։

Հարաւային Աֆրիկայի առողջ կլիման և գեղեցիկ արօտատեղիները վաղուց արգեն սկսեցին դէպի այդ կողմերը գրաւել եւրոպացիներին։ Առաջին անգամ հոլլանդացին գիւղացիները (բուրեր) եկան այդ կողմերը՝ 17-րդ դարում; իսկ 19-րդ դարի սկզբից՝ նաև անգլիացիները, որոնց ձեռքին և գտնում է այժմ համարեա ամբողջ Հարաւային Աֆրիկան։

Բուրերը սկզբում հաստատուեցին Բարեյուսոյ հրուանդանի մօտ, որտեղ նրանք հիմնեցին կապշտադաքաղաքը։ Յետոյ հետզհետէ նրանք երկրի ներսերը մտան և սկսեցին պարապել անաօնապահութեամբ և մշակել երկիրը, հոտտենտոտներին և բուշմէններին նրանք դէպի հիւսիս քշեցին։ Վերջում անգլիացիները տիրեցին կապշտադաքին, հիմնեցին կապի գաղութը և իրենց հպատակեցրին բուրերին, թէպէս ոչ բոլորին։ Զհպատակուողները իրենց կարողութեամբ շարժուեցին Օրանժի գետից դէպի հիւսիս նոր եր-

Կըներ որոնելու։ Այդ միջոցին նրանք ստիպուած հղան կռուի բռնուել պատերազմասէր քաֆր ցեղերի հետ։ Բուրերը նուածեցին մի քանի քաֆր ցեղերի և հիմնեցին երկու հասարակածութիւն — Օրանժի և Տրանսվալի։ Իսկ երբ իմացուեց, որ այդ երկուները հարուստ են ոսկու և ալմաստի հանքերով, այն ժամանակ ամսվիացիները երկար և յամառ պատերազմից յետոյ տիրապետեցին նաև այդ հասարակապետութիւնները ու իրենց գաղութները դարձրին (1902թ.)։


Թէ զաղթածների և թէ չար. Աֆրիկայի բնիկների գլխաւոր զբաղմունքն է՝ անասնապահութիւնը։ Համբող տարին այնտեղ արածում են ոչխարների և եղջիւրաւոր խոշոր կենդանիների հօտեր։

Երկրագործութեան համար չար. Աֆրիկայի տափաստանների կիման շատ է չոր. ցորենի և ուրիշ հացահատիկների դաշտերը լաւ հունձ են տալիս միայն արուեստական կերպով ջրուելուց յետոյ։

Սակայն չար. Աֆրիկայի գլխաւոր հարստութիւնները հողի ծոցում են թագնուած — ոտքին և ալմաստը։

Անցեալ գարի վերջում Տրանսվալում գտնուեցին ամենահարուստ ոսկու հանքերը։ Հազարաւոր մարդիկ դիմեցին դէպի այդ երկիրը և շուտով հիմնուեց Յովիանինէրուցք քաղաքը։ Նա հիմնուել է մեզնից ընդամենը 20 տարի առաջ և այժմ դարձել է ամենամեծ քաղաքը ամբողջ չար. Աֆրիկայում (ունի համարեա 200,000 բնակիչ)։

Ոսկու հետ միաժամանակ չար. Աֆրիկայում գտնուեց նաև ալմաստ, — մանաւանդ Վաալ գետի հօվտում՝ աւազի և քարերի մէջ։ Իսկ ամենից շատ ալմաստ գտան մի քանի համաձայն հրաբուղիների բերաններում։ Հանքահորերում (շախտաներում) եւրոպացիների հսկողութեան տակ աշխատում են քաֆրերը և ալմաստ որոնում։ Ամենահարուստ հանքերի մօտ



Նկ. 67. Բուր.

կարճ ժամանակուայ ընթացքում բարձրացաւ Կիմբերլէջ քաղաքը։

Ոսկու և արծաթի հանքերի շահագործումը գտնուում է անգլիացիների ձեռքին։ Բուրերը առաջուայ նման անասնապահութեամբ են պարապում և ապրում են տափաստաններում՝ իրենց պարզ, բայց յարմար ազարակներում (ֆերմա)։ Քաֆրերը և հոտտենտոտները նմանապէս պահում են անասուններ և ապրում են իրենց գիւղերում (կրապ)։ Բուշմէնները համարեա բոլորովին ոչչացրուած են։ մնացածները քշուել են կալահարի անապատը և այնտեղ թափառացնիկ որսորդների կեանք են անց կացնում։ Հանքերում աշխատում են միայն ամենապահատ քաֆրերը, այն էլ՝ ոչ-սիրով։ այս պատճառով վերջին ժամանակներս անգլիացիները սկսել են չար. Աֆրիկա բերել չինացի կուլիներ (բանուորներ)։

Ոսկին, արծաթը, բուրդը և չար. Աֆր. ուրիշ արտահանում են դէպի եւրոպա հետեւեալ նաւահանգստների վրայով — կապչակի, Պորտ-Եղիսաբէր և Պորտ-Նաբալ։ Այդ նաւահանգստներից դէպի երկրի խորքերը անց և կացրած երկաթուղային գծեր։

Ամբողջ բրիտանական հարաւային Աֆրիկայի գլխաւոր քաղաքն է Կապչակի, այնտեղ է ապրում անգլիական ընդհանուր նախագահը և ապրում արևելյան գաղետը, որի իշխանութիւնը սահմանափակուած է ժողովրդից ընտրուած ներկայացուցիչներով։

16. ԱֆրիկաՅի կղջիները

Աֆրիկային պատկանում է միայն մէկ հատ մեծ կղզի — Պաղագասկարը։ սա հողակոշաերից բաղկացած հարթ կղզի է, որ ծածկուած է սաւաններով և արևադարձային անտառներով։ ունի տաք, վատառողջ կլիմայ։ Կղզու բնակիչներն են՝ մադագասարները, որ պատկանում են մալայեան ցեղին։ Վերջինս կղզու արևմուտքում խառնուել է բանտու նեղբերի հետ և սրանց նման էլ կեանք է վարում։ Աֆրիկայի մնացած կղզիները չինինց իրենց մեծու-


թեամբ։ Նրանց մեծ մասը հրաբուխային ծագում ունի, օր Մադեյրա, Կանարեան, Համբարձման, Ս. Հեղինելի, Մասկարենեան կղզիները։ Ուրիշ կղզիներ, օր. Զանգիբար, կորալ լական են։

Աֆրիկայի համարեա բոլոր կղզիներն էլ փարթամ բուսականութիւն ունին։ Մասկարենեան կղզիների վրայ մեծ չափերով մշակում է շաքարեղեղ, Մադեյրայի վրայ՝ խաղողորից այնտեղ լաւ գինի են պատրաստում։

Աֆրիկայի բոլոր կղզիներն էլ պատկանում են Եւրոպացիներին։ Մադագասկարը պատկանում է Փրանսիացիներին, Զանգիբարը, և. Հեղինելի և Համբարձման կղզիները՝ անգլիացիներին, Մադեյրան—պորտուգալացիներին։ Եւրոպական նաւերի համար կղզիներից շատերը ծառայում են իբրև լաւ կայաններ, որտեղ միշտ կարելի է գտնել պաշտր և ածուխ։

Այսուհետ ափառույթ

Վերջ



ԱՄԵՐԻԿԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԾԳՐՈՒԹԻՒՆ

1. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՐՔԸ, ՄԵԾԱԻԹԻՆԸ ԵՒ Ա.ՖԵՐԻ ԳԾԱ-ԳՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկան գտնուում է արևմտեան կիսագնդում։ Երբ այնտեղ ցերեկ է մեզնում գիշեր է լինում, և ընդհակառակը բոլոր աշխարհամասերից Ամերիկան բաժանուած է ովկիանոսներով։—Եւրոպայից և Աֆրիկայից նաև բաժանուած է Ալյանտեան ովկիանոսով, Ասիայից և Աւստրալիայից։ Մեծ ովկիանոսով։ Միայն ամենահեռաւոր հիւսիս-արևեմուտքում, Բերինգեան նեղուցի մօտ, Ամերիկան բաւականին մօտենում է Ասիային։

Իր մեծութեամբ Ամերիկան մի քիչ փոքր է Ասիայից, իսկ երկայնութեամբ առաջին տեղն է բռնում բուլոր աշխարհամասերի մէջ—հիւսիսից հարաւնա 15,000 վերստ տարածութիւն ունի (արևմուտքից արևելք, ամենալայն մասում՝ $5 \frac{1}{2}$ հազար վերստ)։

Ամերիկան բաղկացած է երկու՝ Հիւսիսային և Հարաւային մասերից, որոնք իրար հետ միանում են ցամաքի մի երկայն ու նեղ շերտով, որ կոչւում է Կենդրոնական Ամերիկա, և Անտիլեան կղզիների արշիպելագով (Վենս-Ինդիա)։ Կենդրոնական Ամերիկայի ամենանեղ մասը կոչւում է Պանամայի պարանոց։

Հնումը Ամերիկայի երկու մասերը առանձին-առանձին ցայլ ցամաքներ են եղել, իրարից բաժանուած։ այդ է պատճառը, որ այդ երկու մասերի բնութիւնը, յատկապէս բուսա-

կանութիւնը և կենդանական աշխարհը, բաւականաչափ տարբերում են իրարից: Ընդհակառակը՝ լեռների (հիւսիսից հարաւ) և գաշտավայրերի դիրքին նայելով՝ նրանք շատ նման են իրար. երկու մասերից իւրաքանչիւրն էլ հիւսիս գնալով լայնանում է, իսկ հարաւ գնալով՝ նեղանում:

Հիւսիսային Ամերիկայի ափերը շատ են կտրտուած. այստեղ կան շատ թերակղղիներ, որոնցից ամենամեծերն են — Լարբադոր, Ֆլորիդա, Կալիֆորնիա և Ալեխակա:

Մոցերից նշանաւոր են.—Հուդզոնի, Ս. Էաւրենիսիոսի, Մեքսիկայի և Կալիֆորնիայի ծոցերը:

Ամերիկայի ափերին ընկած են շատ կղղիներ, որոնցից նշանաւոր են.—Նիւժառունդինդ, Գրենլանդիա, Բաժմինի երկիր:

Հարաւային Ամերիկայի ափերը ամենին կտրտուած չեն,—այստեղ չկան մեծ թերակղղիներ և ծոցեր. Նրա ափին ընկած է միայն մէկ նշանաւոր կղղի—Հրոյ Երկիրը, որ մայր ցամաքից բաժանում է Մագելլանի նեղուցով:

2. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒՏԸ ԵՒ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Ամերիկան երկու անգամ է գտնուել եւրոպացիների ձեռքով: Առաջին անգամ գտան Ամերիկան 10-րդ դարում նոր մանները—համարձակ ծովագնացներ, որ ապրում էին Սկանդինավիա թերակղղու վրայ: Նոր երկիրներ որոնելու հպատակով նրանք յաճախ էին ձեռնարկում ծովային հեռաւոր ճանապարհորդութիւնների, և այդպիսով նրանք գտան սկզբում Գրենլանդիան, իսկ յետոյ՝ Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափը, որ և նրանք «խաղողի երկիր» կոչեցին (որովհետեւ այստեղ մեծ քանակութեամբ վայրի խաղող էր աճում): Նոր մանները մեծ նշանակութիւն չտուին իրենց գիւտին և շուտով մոռացուեց այդ բանը. իսկ մնացած եւրոպացիները այդ գիւտի մասին մի բան էլ չիմացան:

Երկրորդ անգամ, նորմաններից միանգամայն անկախ կերպով, Ամերիկան գտաւ Քրիստովոր Կոլումբոսը: Սա իտալացի էր, ձեռնովաքարից, միայն թէ իսպանիայի թագաւորի մօտ էր ծառայում: Իր ժամանակի ուրիշ ծովագնացների նման Կոլումբոսը նպատակազրել էր գտնել ամենակարձ ճանապարհը դէպի Հնդկաստան. նա մտածում էր, որ այդ նպատակին նամնել կարող է եւրոպայից ուղիղ դէպի

արևմուտք դիմելով: 1492 թուականի օգոստոսի 3-ին Կոլումբոսը ճանապարհ ընկաւ Ատլանտեան ովկիանոսով. նոյն տարուայ հոկտեմբերի 31-ին նա հասաւ Բահամեան կղղիներից մէկին: Կուբա և Հայթի կըդիներն էլ գտնելով՝ վերադարձաւ իսպանիա և բերաւ ուրախ լուրը—վերջապէս գտնուել է ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան (Կուսումբոսը կարծում էր, որ իր գտած կղղիները Հնդկաստանի մօտ են զանում, իսկ Կուբա կղղին նա Եապոնիայի տեղ էր ընդունում):

Յետոյ Կոլումբոսը երեք անգամ ևս ծովային ճանապարհորդութիւն կատարեց և գտաւ շատ նոր կղղիներ, նաև բուն Ամերիկա մայր ցամաքը, բայց միշտ էլ նա այն կարծիքին էր, թէ իր գտած երկիրները Հարաւ-Արևելեան Ասիայի մասերն են: Այդ համոզման մէջ էլ նա մեռաւ: Եւրոպացիները երկար ժամանակ նոր գտնուած երկրները կոչում էին Հնդկաստան, իսկ յետոյ՝ Վեստ-Ինդիա, այսինքն Արևմտեան Հնդկաստան:

Գտնուած երկրները յայտարարուեցին իբրև իսպանական կալուածներ. այնուհետև նորանոր ճանապարհորդներ սկսեցին յաճախել այդ կողմերը: Շատ ճանապարհորդութիւններից յետոյ միայն եւրոպացիները համոզուեցին, որ Կոլումբոսը նոր աշխարհամաս է գտել: Այդ նոր աշխարհամասը «Ամերիկա» կոչուեց մի երկրորդական ճանապարհորդի՝ Ամերիկո Վեստ-Ինդիա անունով, որ կազմել է գտնուած երկրների նկարագրութիւնը և քարտէսը:

Կոլումբոսից յետոյ՝ Ամերիկայի հետագօտման համար ամենամեծ ծառայութիւնը արել է իսպանացի ծովագնաց Մագելլան: Նա աշխարհի շուրջը ձեռնարկած իր ճանապարհորդութեան (1520 թ.) միջոցին Ատլանտեան ովկիանոսից մտաւ իր անունով (Մագելլանի) կոչուած նեղուցը, Կորեց անցաւ Հարաւային Ամերիկան և առաջինը եղաւ, որ համոզուեց, թէ Ամերիկայի և Ասիայի մէջ գտնուած է մի հսկայական ովկիանոս (որ և նա Խաղաղ ովկիանոս կոչեց):

Այնուհետև եւրոպացի ճանապարհորդները մանրամասն հետագօտեցին Ամերիկայի զանազան մասերը. շատ եւրոպացիներ հիմնեցին այնտեղ իրենց գաղութները:



Նկ. 68. Մագելլան:

Ճ. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի արևմտեան ափի երկայնութեամբ—Ամերիկայից մինչև Հրոյ երկիր—տարածւում են աշխարհի ամենաերկայն՝ Կորդիլլեր լեռները, որոնք հարաւային Ամերիկայում նաև Անդ են կոչում։ Եյդ լեռները կտրում են միայն մէկ տեղ—Պանամայի պարանոցում։

Կորդիլլերները իրենց համարեա ամբողջ տարածութեան վրայ բաղկացած են մի քանի զուգահեռական լեռնաշղթաներից։ Հիւսիս-Ամերիկեան Կորդիլլերներում այդպիսի լեռնաշղթաներ շատ կան, որոնք և իրենց առանձին անուններն ունեն—Փայոնս, Կասկադեան, Սրերա-Նեւադա և այլն։ Եյդ լեռնաշղթաների մէջ ընկած են ընդարձակ բարձրաւանդակներ, օրինակ՝ Մեխիկայի բարձրաւանդակը։

Հարաւ-Ամերիկեան Կորդիլլերները կամ Անդերը շատ աւելի նեղ են և մեծ մասով բաղկացած են երկու զուգահեռական լեռնաշղթաներից։ Նրանց մէջ ընկած են երկայն, բայց նեղ բարձրաւանդակներ, օրինակ՝ Պերու և Բոլիվիա։ Վերջինս 4 վերստ բարձրութիւն ունի, այսինքն համարեա Տիբետի չափ։

Բարձրութեան կողմից Կորդիլլերները յետ են ֆուում միայն Հիմալայեան և Կաբակլորում լեռներից։ առանձնապէս բարձր են Հար։ Ամերիկայի Կորդիլլերները։ Նոյն իսկ հասարակածի մօտ, որտեղ ձեան սահմանը 5 վերստ բարձրութեան վրայ է գտնւում, այդ լեռների գագաթներից շատերը ծածկուած են յաւիտենական ձիւնով։

Կորդիլլերների ամենաբարձր գագաթն է Ակրոնկարտա, մօտ 7 վերստ բարձրութեամբ։ նա հանգած հրաբուղի է։ Բնդ հանրապէս այդ լեռների գագաթների մեծ մասը հրաբուղի է—կամ գործող և կամ հանգած։

Կորդիլլերների արևելեան ստորոտներից սկսած—թէ Հիւսային և թէ Հարաւային Ամերիկայում—տարածւում են ընդարձակ հարթութիւններ, որոնք կամ բլրաշտ բարձրութիւններ են և կամ դաշտավայրեր։ օրինակ՝ Միսիսիպի, Ամազոնի, Լապլատեան դաշտավայրերը։ Բնդարձակ հար-

թութիւններից դէպի արևելք—թէ Հիւսիսային և թէ Հարաւային Ամերիկայում—նորից բարձրանում են լեռներ, Հիւսիս Ամերիկայում՝ Ալեգանի, իսկ Հարաւայինում՝ Բրազիլիայի լեռները։ Իրենց բարձրութեամբ այդ լեռները համեմատուել շեն կարող Կորդիլլերների հետ։ մինչև գագաթը նրանք ծածկուած են անտառներով և խոտով։


Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ Հիւսիսային և Հարաւային Ամերիկաները մակերեսով կազմութեամբ իրար շատ են նման։

Վ 4. Կ Լ Ի Մ Ա Ն

Հիւսիսից հարաւ Ամերիկան չափազանց մեծ երկայնութիւն ունի—նրա հիւսիսային ծայրն ընկնում է հիւսիսային բեւեռային շրջանակից այն կողմը, իսկ հարաւային ծայրը՝ հարաւային արեադարձից այն կողմը։

Բեւեռային կղզիների և Սառուցեալ Ովկիանոսի ափերի կղիման շատ ցուրտ է, ինչպէս հիւսիսային Սիբիրում։ Գրենլանդիան և մի քանի ուրիշ կղզիներ ծածկուած են յաւիտենական ձիւնով և սառցարաններով, որոնք ուղղակի ովկիանոս են լողում և կտորկուր լինելով՝ գոյացնում են սառցասարեր (ովկիանոսում)։ Լաբրադորի ցուրտ հոսանքը քշում տանում է այդ սարերը դէպի հարաւ և այդ սարերը դէպի հարաւ և ցրտութիւն բերում մայլ ցամաքի հիւս։ արևելեան ափերին։

Չհաշուած Սառուցեալ ովկիանոսի ցուրտ ափերը և կիանոսի ցուրտ ափերը



Ֆ. 69. Մթնոլորտային տեղումների բաշխումը Հիւս, Ամերիկայում։

Հաբրագոր թերակղզին՝ մնացած Հիւսիսային Ամերիկան ունի բաւականին տաք, բայց խիստ ցամաքային կլիմայի Ամառը ցամաքը խիստ տաքանում է և շոգերը հասնում են մինչև 40° և 50° , իսկ ձմեռը այնչափ ցրտում է, որ 30° և մինչև իսկ 40° սառնամանիքներ են լինում:

Միայն Մեքսիկայի տաք ծոցի ափերին սակաւ են լինում սառնամանիքներ. թէպէտ երբեմն ձմեռը այնտեղ ձիւն գալիս է, բայց խկոյն ևեթ ճաշում է հէնց որ ծոցից քամի է փչում:

Մեքսիկայի ծոցը մեծ ազդեցութիւն ունի Հիւս. Ամերիկայի կլիմայի վրայ. այսինքն՝ գարնանը և ամառը, երբ ցամաքը աւելի է տաքացած լինում քան ծովը, այդ ծոցից փչում են խոնաւաբեր քամիներ, որոնք մթնոլորտային տռատ տեղումներ են թափում Հիւս. Ամերիկայի ամբողջ տրեկելեան կիսում:


Մեքսիկայի ծոցից է սկսում երկրագնդի ամենառուժեղ տաք հոսանքը, որ Գոլֆշտրոմ է կոչում. նա տաքացնում է Ֆլորիդան և տաքութիւն է տանում դէպի բաց ովկիանոսը—մինչև հեռու Եւրոպայի ափերը. երկրագնդի այս մասի համար նա շատ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան Ամերիկայի համար:

Ոչ մի աշխարհամասում բևեռային և արևագարձային ծովերը այնքան մօտ չեն իրար, ինչպէս Հիւս. Ամերիկայում: Տարուայ մեծ մասը սառոցով ծածկուած Հուդզոնի ծոցից մինչև Մեքսիկայի տաք ծոցը՝ $3,000$ վերսից էլ պակաս է: Հիւսիսից կամ հարաւից փչող քամիները արագօրէն տարածում են տաքութիւն կամ ցրտութիւն, ձանապարհն արգելքի հանդիպելով: Այս պատճառով էլ Հիւս. Ամերիկայի եղանակը այնպէս ու փոփոխական է, ինչպէս և ոչ մի շեղու և գարնանը այնտեղ մէկ օրուայ մէջ եղանակը 20° -ով բարձրանում կամ ցածրանում է. այսօր, օրինակ, 10° սառնամանիք է, վաղը՝ 10° տաք, և կամ ընդհակառակը:¹⁾

Կենդրոնական Ամերիկայի և Հար. Ամերիկայի մեծ մասի կլիման արևագարձային է: Ամբողջ տարին այնտեղ շատ տաք է լինում. յունուարը համարեա ոչնչով չէ զանագանւում յուլիսից: Անձրկ շատ է գալիս, որ բերում են գլխաւորապէս հիւսիս-արեկելեան պասսատները: Այս քամիները փչում

¹⁾ Կորդիլերների արևելեան ստորոտներում մի անգամ 5 ըռողէն ընթացքում եղանակը իջաւ 20° , իսկ մէկ օր յետոյ՝ 40° :

են ամբողջ տարին անընդհատ: Անցնելով Ատլանտեան ովկիանոսի ամենատաք մասով, նրանք խիստ լցում են խոնաւութեամբ և բերում թափում են կենդրոնական և հար. Ամերիկայի կղզիների և մայր ցամաքի վրայ: Յատկապէս շատ անձրեներ են գալիս Ամազոն գետի ջրաբաշխում:



Նկ. 70. Մթնոլորտավին տեղումների բաշխումը Հիւս. և թէ հար. Ամերիկայում:

Ամբողջ Ամերիկայի (թէ Հիւս. և թէ հար.) ոռոգման գլխաւոր աղբեւը ծառայում է Ատլանտեան ովկիանոսութ: Մեծ ովկիանոսից Ամերիկան կարուած է կորդիլերներով, բացի գլանից՝ նրա արևմտեան ափերի երկայնութեամբ անցնում են ցուրտ հոսանքներ, որոնք քիչ գոլորշիներ են տալիս:

45. ԳԵԾԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ

Ամերիկայի գետերը աչքի են ընկնում իրենց ջրառատութեամբ: Նրանք մեծ մասով հոսում են դէպի հիւսիսային Սառուցեալ և Ատլանտեան ովկիանոսները, Հիւս. Ամերիկայի ամենամեծ գետն է՝ Միասիսիլի,

Միստորի, Օհայօ և ուրիշ վտակներով։ Եթէ Միսսուրին հետը հաշուենք՝ Միսսիսիպին կլինի ամենաերկայն գետը երկրագնդի վրայ (մօտ 7,000 վերստ)։ Ջրառատ է նաև Ս. Լաւրենցիոսի գետը, որ հոսում է Ամերիկայի հետեւեալ նշանաւոր լճերով—Վերին, Հուրոն, Միչիգան, Էրի և Օնտարիօ։ Երկրագնդի վրայ ոչ մի վայր չկայ, ուր այնչափ շատ համով ջուր ունեցող լճեր լինեն, որչափ այստեղ։ Դրանց մէջ ամենամեծն է Վերին լիճը, որ 600 վերստ երկայնութիւն ունի։ Կրի և Օնտարիօ լճերի մէջ է ընկնում Նիազարա հոչակաւոր ջրվէժը։

Հիւսիսային թեքուածքով հոսող գետերից ամենանշանաւորներն են։—Նեխոն (որ հոսում է Վինիպեգ լճի միջով) և Մեկենզի (որ հոսում է Սարակաս և Արջի լճերի միջով։ Այս գետերը, չնայելով որ ջրառատ են, առանձին նշանակութիւն չունեն նաւագնացութեան համար, որովհետեւ թափուում են այնպիսի ծովեր, որ լիքն են սառոյցով և հէնց իրենք էլ երկար ժամանակ սառած են լինում։

Դէպի արևմուտք, Մեծ կամ Խաղաղ ովկիանոս են հոսում Իւկոն, Կորումբիա, և Կորուադո գետերը։

Հիւսիսային Ամերիկայում կան նաև սակաւաթիւ աղի լճեր, որոնք գտնուում են միայն բարձրաւանդակների վրայ, ամենանշանաւորն է՝ Մեծ Աղի լիճը։

Հարաւային Ամերիկայի ամենամեծ գետն է՝ Ամազոն։ Իր երկայնութեանը նայելով ($5\frac{1}{2}$ հազ. վ.) նա յետ է մուտք Միսսիսիպի և Նեղոս գետերից, իսկ ջրառատութեամբ առաջին գետն է երկրագնդի վրայ։ Նա ունի 15 այնպիսի մեծ վտակներ, ինչպէս են Վոլգա, Դոն, Դնէպր գետերը։ Այդ վտակներից նշանաւոր են՝ Մադեյրա, Ռիո-Նեգրո և ուրիշները, — որոնք նաւագնաց են համարեա մինչև իրենց ակունքները, ինքը Ամազոնը նաւագնաց է մինչև Կորդիլլերների ստորոտները։ Իր ստորին հոսանքում Ամազոնը այնչափ խոր է և լայն, որ ծովային մակընթացութիւնը հասնում է մինչև 1,000 վերստ վեր նրա հոսանքով։

Հարաւային Ամերիկայի երկրորդ ամենաերկայն գետն է՝

Պարանա, որ սկսւում է Բրազիլիայի լեռների հարաւարիեւան ստորոտներից։ Նրա գետաբերանը կոչւում է Լա-Պատամ, որ ներկայացնում է ծովային ծոց։ Նրա նշանաւոր վտակներն են՝ Պարագվայ և Ուրուգվայ։

Հարաւային Ամերիկայի երրորդ մեծ գետն է՝ Օրինոկօ (հիւսիսում), որ ծովը թափուելիս դելտայ է կազմում։ Բոլոր այս գետերը նաւագնաց են իրենց հոսանքի մեծ մասում, որովհետեւ հարթութիւններով են հոսում։

† 6. ԲՈՒՍԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Բուսական աշխարհը Ամերիկայում աւելի փարթամ է, քան որևէ ուրիշ աշխարհասում։ Անապատներ այնտեղ համարեա թէ չկան։ Նրա տափաստաններն էլ այնչափ ընդարձակ և չոր չեն, ինչպէս Ասիայում։ Ամերիկայի կէսից աւելին ծածկուած է խիտ անտառներով։ Կան նաև տունդրաներ։




Նկ. 71. Բուսականութեան տարածումը Հիւս. Ամերիկայում։

մայրի ծառի 40 զանագան տեսակներ, կաղնու 80 տեսակ, և

Տունդրաները տարածում են բենական կղզիների վրայ և Սառուցեալ ովկիանոսի ափերքում։ տունդրաների բուսականութիւնն էլ բազկացած է մամուռներից, հատապտուղ բոյսերից, և այլն։ Տունդրաներից հարաւարեան (նկարը) Հիւս. Ամերիկայում տարածում են խիտ և ընդարձակ անտառներ, նման Սիբիրի տայգային, միայն թէ աւելի բազմազան։ Այդտեղ աճում են բազմաթիւ ծառեր, որ չկան չին Աշխարհում (այնտեղ հաշում են օրինակ մայրի ծառի 40 զանագան տեսակներ, կաղնու 80 տեսակ, և

ալն): Շատ ծառեր ահագին բարձրութիւն ունեն. Մեծ ովկիանոսի ափերին աճում են բուսական թագաւորութեան այնպիսի հսկայ ծառեր, ինչպէս են օրինակ մամոնտի ծառը,



Նկ. 72. Մամոնտի ծառ:

են արևադաշին խիտ անտառներով: Ամազոնի ամբողջ դաշտավայրի վրայ աճում են արևադաշային անտառներ, որ սերվասներ են կոչում. Կրանք բոլորը միասին կուղմում են մի հսկայական (Եւրոպական Ռուսաստանի մեծութեամբ), շատ խիտ անտառ, որ ամենափարթամն է ամ-

որ 60 սաժէն բարձրութեան է հասնում: Մեքսիկայի ծոցի ափերին աճում են մշտադալար ծառեր և արմաւենիներ:

Հիւս. Ամերիկայի չորս մասերում (տես նկարը) գտնվում են բաւական ընդարձակ տափաստաններ, որոնք կոչում են այստեղ պը երներ: Գարնանը և ամառը պրերները ծածկուած են լինում հիւթառատ կանաչ խոտով. չորրանում են նրանք միայն ամառուայ վերջը և աշնանը, և այն ժամանակ պրերները կանաչ գոյնը փոխելով դառնում են ուկեզոյն-դեղին: Քիչ տեղերում միայն պրերները անապատի կերպարանք ունեն:

Ամբողջ կենդրոնական Ամերիկան և Հար. Ամերիկայի կէսը ծածկուած մի քայլ բոյս եր է աճում են առաջանական անապատի կերպարանք ունեն:

բողջ երկրագնդի վրայ: Այդաեղի ծառերը շատ բարձր են, աճում են այնչափ խիտ և այնպէս խճճուած են լիանուներով, որ ճանապարհորդութիւնը այդ անտառներում հնարաւոր է միայն գետափերով: Սելվաներում ծառերի բազմազանութիւնը շատ մեծ է. այնտեղ աճում են այնպիսի արժեքաւոր ծառեր, ինչպէս են՝ կակա, քինա, կարմիր ծառ և այլն.



Նկ. 73. Բուսականութեան տարածումը Հար. Ամերիկայում:

բանում, այրւում են:

~~Այծեղջեր արևադարձից հարաւ սաւանները աստիճանաբար բարեխառն գոտու տափաստանների են փոխում, որոնք Հար. Ամերիկայում պամպանեն կոչում:~~

Ամերիկայից են ծագում մարդու համար օգտակար մի քանի բոյս եր: Անդերի լանջերում է գտնվում կարտոֆիլի հայրենիքը, որը Ամերիկայի գիւտից յետոյ փոխադրուեց նաև միւս աշխարհամասերը, որ և այժմ մշակում է երկրագնդի համարեա բոլոր կողմերում. համարեա նոյնչափ տարածուել է նաև եղիպտացորենի գործածութիւնը, որ ծագել է կենդրոնական Ամերիկայից: Ամերիկայից են ծագում նաև քինայի ծառը, կակաօն, ծխախոտը և ուրիշ բոյսեր:

Եւրոպացիներն էլ Ամերիկա են փոխադրել Հին Աշխարհի բոլոր նշանաւոր մշակովի բոյսերը—ցորեն, բրինձ, շաքարեղեգ, սուրճի ծառ և այլն, որոնք բոլորն էլ Ամերիկայի հոգում աւելի լաւ են աճում, քան Հին աշխարհում:

7. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՍՇԽԱԲՀՀԸ

Ամերիկայի կենդանական աշխարհը այնչափ հարուստ չէ, ինչպէս բուսականը: Նրա հիւսիսում ապրում են սոյն այն կենդանիները, որ կան Ասիայի և Եւրոպայի հիւսիսում. բայց քանի գէպի հարաւէ գնում, այնչափ էլ Ամերիկայի կենդանիները տարբերում են չին Աշխարհի կենդանիներից: Ամերիկայի տունդրաներում ապրում են—հիւսիսային եղջերու, բեւռային աղուէս, սպիտակ կաքաւ: Սնտառներում ապրում են—սկիւռ, աղուէս, գայլ, արջ և ուրիշ առուամազ գաղաններ:

Մեծ լճերից հարաւ, որտեղ ազգաբնակութիւնը բաւական խիտ է և անտառները աւելի սակաւ, այստեղ վայրենի դագանները համարեա ոչնչացրուած են:

Պրերներում մինչեւ վերջերը թափառում էին վայրի եզների՝ բիսոնների ահագին հօտեր. 50 տարի սրանից առաջ հաշւում էին այստեղ մի քանի միլիոն բիսոն, իսկ այժմ նրանք համարեա ոչնչացրուած են և դեռ մնում են միայն մի քանի տեղերում, որտեղ արգելուած է նրանց որսալը:

Հարաւային Ամերիկայում բազմաթիւ են այնպիսի կեն-



Նկ. 74. Հիւռ. Ամերիկայի շրջանի կենդանիներ:

տարի սրանից առաջ հաշւում էին այստեղ մի քանի միլիոն բիսոն, իսկ այժմ նրանք համարեա ոչնչացրուած են և դեռ մնում են միայն մի քանի տեղերում, որտեղ արգելուած է նրանց որսալը:

Հարաւային Ամերիկայում բազմաթիւ են այնպիսի կեն-

դանիներ, որոնք իրենց տեսքով շատ են ջոկում մնացած աշխարհամասերի կենդանիներից. այդպէս են օրինակ՝ յամ-



Նկ. 75. Հար. Ամերիկայի շրջանի կենդանիներ:

ու կները, մը չնաշկերները և գրահակիրները: Ամերիկայի գիշատիչ կենդանիները (օր. եագուար) շաա աւելի քիչ են և թոյլ, քան չին Աշխարհի գիշատիչները—առիւծը և վագրը:

Ամբողջ Ամերիկայում ամենից հարուստ է սելվասների կենդանական աշխարհը: Այստեղ կան այնչափ շատ կապիկ-



ներ, որչափ և ոչ մի տեղ: Աշխարհիս վրայ ոչ մի տեղ այնչափ թռչուններ (թռոթակ, կոնդոր, կոլիբրի) չկան որչափ սելվասներում: Ամեն

քայլափոխում հանդիպում են օձեր—թէ ջրում, թէ ցամաքում և թէ ծառերի ճղների վրայ:

Բարձրաւանդակներում և կորդիլլերների լանջերում արածում են լամաներ: Պամպասներում պատահում են ջայլամների երամներ:

Բնուանի կենդանիներ Ամերիկայում, մինչև եւրոպացիների այնտեղ հաստատուելը, համարեալ թէ ամենենին չկային. միայն տունդրաներում մարդուն ծառայում էր շունը, իսկ Հար. Ամերիկայի բարձրաւանդակներում՝ լաման:

Կար անասուններ և ուրիշ նշանաւոր ընտանի կենդանիներ, որոնցից այժմ Ամերիկայում հարիւրաւոր միլիոններ կան:

8. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի բնակիչների թիւն է մօտ 150 միլիոն. ամեն մի քառակուսի գերատի վրայ այնտեղ գալիս է միջին հաշուով ընդամենը 4 հոգի (քանի անդամ աւելի պակաս, քան Ասիայում):

Ամենից աւելի պակաս բնակուած են բևեռային կղզիները և Սառուցեալ ովկիանոսի ափերը. Այստեղ պալրում են սակաւաթիւ էսկիմոսներ—իրենց խղճուկ խրճիթներում և պարապում են որսորդութեամբ և ձկնորսութեամբ:

Սակաւ են բնակուած նաև խիտ անտառներ, — արածուած չուղղոնի ծոցի, Մեկենզի և Խվոն գետերի ափերում: Երկրագործութիւնը այնտեղ ցրտութեան պատճառով անհնար է, իսկ անտառներում թափառում են միայն վայրենի որսորդ-հնդիկները:

Միսսիսիպի գետի աւազանը, Մեծ լճերի և Ատլանտեան ովկիանոսի ափերը բնակուած են խիտ, որովհետեւ այնտեղ կլիման տաք է և խոնաւ, իսկ հողը՝ արդաւանիք: Այդտեղ է ապրում Ամերիկայի ամբողջ ազգաբնակութեան համարեա կէսը:

Բաւական խիտ է բնակուած նաև Կենդրոնական Ամերիկան, մանաւանդ Վեստ-Ինդիան, որտեղ արևադարձային անտառները արդէն շատ են մաքրուել և մշակովի, պտղաբեր խաշտեր գարձրուել:

Հարավային Ամերիկայի ընդարձակ տարածութիւնները ունուած են դարեւը, հին անտառներով, որոնց մարդու ձեռք ամարեա չէ կպած. այդ պատճառով էլ Հար. Ամերիկան բական նօսը է բնակուած:

Ամերիկայի ամբողջ ազգաբնակութեան երկուերը որպա պատկանում է սպիտակ ցեղին, որ Եւրոպացի գաղականների սերունդներից է բաղկացած: Հիւս. Ամերիկա աղթել են գլխաւորապէս անգլիացիներ, իրանդացիներ,

ներ, գերմանացիներ. իսկ Կենդրոնական և Հայ. Ամերիկա՝ իսպանացիներ և պորտուգալացիներ:

Ամերիկայի ազգաբնակութեան մնացած ^{1/3-ը} բաղկացած է նեգրերից (սև ցեղ), հնդիկներից (դեղին ցեղ) և խառնուրդ ժողովուրդներից — մուլատներ (ապիտակների և նեղըների սերունդ) և մետիսներ (ապիտակների և հնդիկների սերունդ): Նրանք ապրում են գլխաւորապէս այն վայրերում, որոնք անյարմար և վատառողջ են եղել եւլուսացիների բնակութեան համար:

Ամերիկայում տիրապետող տարր են, ի հարկի սպիտակ ցեղի ժողովուրդները: Նոր Աշխարհ գաղթելով եւրոպացիները սկզբում հիմնեցին գաղութներ, որոնք կախում ունեին եւրոպական պետութիւններից. վերջը համարեա բոլոր գաղթականութիւններն էլ ձեռք բերին անկախութիւն և գարձան հասարակապետութիւններ: Ամենամեծ և ամենախիտ բնակուած հասարակապետութիւնն է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Խահանգիները: Իր մեծութեամբ և բնակիչների թուով երկրորդ տեղը բռնում է Բրազիլիան գաղութներից ամենանշանաւորն է Կանադան, որ պատկանում է անգլիացիներին:

Ամերիկայի բնիկներն են՝ դեղին ցեղին պատկանող ժողովուրդներ — էսկիմոսներ և հնդիկներ: Հնդիկների մեծագոյն մասը վայրեն ի որսորդներից էր բաղկացած, որոնք թափառաշրջիկ կեանք էին վարում. Նրանք ապրում էին մանը ցեղերով և անընդհատ կռիւ ներ էին մղում իրար դէմ: Միայն մի քանի ցեղեր, օր. Մեքսիկայի և Պերու բարձրաւանդակներում ապրողները, զբաղւում էին երկրագործութեամբ և նստակեաց կեանք էին վարում. Նրանք հիմնել էին նշանաւոր պետութիւններ և հասել էին այնպիսի զարգացման, որ անկախ եւրոպացիներից՝ նրանք գտել էին նշանագրեր:

Եւրոպացիները Ամերիկա գաղթելով՝ երկար ժամանակ շարունակ կռիւներ մղեցին հնդիկների գէմ, հետզհետէ գրաւեցին ամբողջ Ամերիկան, շատ հնդիկ ցեղեր բոլորովին ոչնչացրին, իսկ մնացածները թուլացան և նուաճուեցին:

Նեղըները ակամայ են գաղթել Ամերիկա: Երկար ժամանակ եւրոպացիները Աֆրիկայից Ամերիկա էին բերում նեղըներուն իրենց անկարաններում նրանց բանացնելու նպատակով: Ըստա-

մենը մի քանի միլիոն նեզր են բերուել Ամերիկա, իսկ այժմ նրանք կազմում են ամբողջ ազգաբնակութեան արդէն ^{1/8} մասը: Ստրկութիւնը անցեալ դարում ոչնչացրուեց և նեզրերը ազատ են այժմ:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

9. ԳՐԵՆԼԱՆԴԻԱՆ ՀԻԱՆ ԵՒ ՀԻՒՍԻՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՐՇԻՊԵԼԱԳ

Գրենլանդիան երկրագնդի ամենամեծ կղզին է, համարեա հաւասար է Եվրոպական Ռուսաստանի կէսին, բայց մարդկային բնակութեան համար նա շատ անյարմար է, որովհետեւ ներկայացնում է յաւիտենական ձիւնով և սառոյցով ծածկուած մի բարձրաւանդակ:

Ամեն տարի շատ ձիւն գալով ծածկում է Գրենլանդիայի ամերիկեոյիթը. ձիւնը այնչափ շատ է գալիս, որ ամառը բուրը չէ հալչում վերջանում: Դարերի ընթացքում ձիւնից գոյացել է ցամաքային սառոյց, այսինքն ընդարձակ սառցէ ծածկոց, որի տակ թաղուած են Գրենլանդիայի բոլոր սարերը և հովիտները, բացառութեամբ ծովափնեայ ժայռերի:

Ցամաքային սառոյցը անշարժ չէ մնում. նա գանդաղօրէն շարժւում է երկու ուղղութեամբ — դէպի արևելք և դէպի արևելք: Գրենլանդիայի ափերը կտրտուած են խոր, պատանման և նեղ ծոցերով, որոնք միօրդ են կոչւում. Նրանցով է սառոյցը ցամաքից թափւում ովկիանոս ահազին սառցարանների ձիւվ, որոնք մանրում են ջրում և կազմում սառոցասար եր:

Գրենլանդիայի միայն հարաւային մասում ցամաքային սառոյցը հալչում է, չհասած ովկիանոսին և թողնում է ծովափնեայ նեղ շերտ, ծածկուած տունդրաներով:

Բաֆֆինի երկիրը և մնացած հիւսիս-ամերիկեան կըզիները տարուայ կէսից աւելին ծածկուած են ձիւնով. Իսկ յաւիտենական ձիւն և սառցարաններ այնտեղ պատահում են միայն մի քանի, համեմատաբար բարձր տեղերում. մնացած տարածութեան վրայ ընկնում են տունդրաներ:

Այս կղզիների վրայ և Գրենլանդիայի ծայրերում ապրում են էսկիմոսները, որոնց միակ լնտանի կենդանին լծկան շունն է։ Նրանց գլխաւոր զբաղմունքն է որսորդութիւնը և ձկնորսութիւնը։ Որսում են՝ հիւսիսային եղջերուներ, սպիտակ արջեր, փոկեր, ծովացուլեր, և այլն։ Ուրիշ խոշոր ծովային կենդանիներ, ինչպէս օր. կետը, չկան այնտեղ, որովհետեւ արդէն ոչնչացրուած են եւրոպացիների ձեռքով։

Էսկիմոսները ապրում են խրճիթներում, ծառ չլինելու պատճառով, շինում են քարից և հողից, իսկ երեքն նոյն իսկ սառցակոշտերից։ Էսկիմոսների թիւը քոտ 10,000 է։

Թէպէտ Գրենլանդիան և հիւսիս-ամերիկեան կղզիները պատկանում են եւրոպացիներին, բայց շատ քիչ եւրոպացի է գնում այնտեղ։ Գրենլանդիան պատկանում է դաշնիացիներին, որոնց թիւը այնտեղ հազիւ 300 է։ Հիւսիսամերիկեան կղզիները պատկանում են անգլիացիներին։

Գրենլանդիայի ափերն են գալիս ամեն ամառ մի քանի շորենաւեր (Եւրոպայից) բերում են պոստ և բերնած են լինում ցորենով, շաքարով և ուրիշ ապրանքներով, որ եւրոպացիները ծախում են էսկիմոսներին և առնում նրանցից մորթի, ձուկ և այլն։

Գրենլանդիայի էսկիմոսները եւրոպացիներից ընդունել են քրիստոն էութիւնը և նրանցից են սովորել գրագիտութիւն։ Նրանց մի գիւղում (Ուլպերնիլիկ) կայ նոյն իսկ տպարան, որտեղ տպագրում են էսկիմոսների լրագրները և հանդէսները։

10. ԿԱՆԱԴԻԱ ԵՒ ԱԼԵՍՍԿԱ

Կանադան և Ալեասկան բոնում են Ամերիկայի ամբողջ հիւսիսային, ցուրտ մասը։ Սառուցեալ ովկիանոսի և նոյն իսկ լաբրադորի ափերում գանւում են տունդրաներ։ իսկ մնացած կանադան համարեա ամբողջովին ծածկուած է վշշատերն և տերեւոտ ծառերի անտառներով, որոնք հարուստ են աղուամազ գաղաններով։ Այդ անտառները անյարմար են մարդկային բնակութեան համար։ Կլիման այնտեղ շատ խիստ է (նման Սիբիրի կլիմային), այնպէս որ երկրագործութիւնը

հարաւոր է կանադայի միայն հարաւային մասում—սկսած Ս. Լաւենսիոսի ծոցից՝ արևելքում, մինչև Վանկուվեր կղզին՝ արևմուտքում։ Բայց նոյն իսկ այս շերտում հողը մեծ մասով քարքարոտ է և մշակութեան համար անյարմար։ Ալեասկայում երկրագործութիւնը միանգամայն անհնար է։ Կանադայի և Պլեասկայի սարերը հարուստ են արծաթով և ոսկով, բայց ձեռք բերելը դժուար է—դարձեալ կլիմայի խստութեան պատճառով։

Կանադայի բնակիչների թիւն է ընդամենը 6 միլիոն։

Տունդրան երում ապրում են որսորդութեամբ և ձըկնորսութեամբ պարապող էսկիմոսները (ինչպէս բևեռային կղզիների վրայ)։ Մեկենզի և Նելսոն գետերի աւազանում տարածուած խիտ անտառներում թափառում են վայրենի հնդիկները, որոնք աղուամազ գաղաններ որսալով են պարապում։

Հնդիկների վիճակը կանադայում այնչափ վատ չէ, ինչպէս Ամերիկայի ուրիշ շատ վայրերում, որտեղ նրանց մեծ մասը ոչնչացրուած է։ Կանադայում բնակութիւն են հաստատել եւրոպացիները կանդաղօրէն, իսկ հնդիկներն էլ հետզհետէ դիմել են դէպի անտառների խորքերը, աւելի լաւ տարածութիւնները սպիտակներին թողնելով. շատ հնդիկներ նոյն իսկ մնացել են իրենց տեղերում և այժմ վարում են նստակեաց կեանք, զբաղւում են երկրագործութեամբ և նոյն իսկ իրենց երեխաններին ուսումնարան են ուղարկում։

Կանադայի հարաւային մասում, առանձնապէս Մեծ լճերի և Ս. Լաւենսիոս գետի ափերում, ապրում են Եւրոպայից գաղթածները, որոնք և կազմում են կանադայի պղպարնակութեան գլխաւոր տարրը։

Ամենից շատ գաղթել են կանադա անգլիացիները, այդ պատճառով էլ անգլիերէնը կանադայում տիրապետող լեզու է դարձել։ Սակայն ամենից վաղ այնտեղ գաղթել սկսեցին ֆրանսիացիները, որոնք կազմում են կանադայի աղքարնակութեան $\frac{1}{3}$ մասը և պահպանել են իրենց լեզուն։

Կանադացիների գլխաւոր զբաղմունքներն են՝ երկրաշունդութիւնը և անառնապահութիւնը։ Իրենց գաղթերում նրանք ցանում են գլխաւորապէս ցորեն, գարի և յաճար։ Մեծ լճերի ափերին կանադացիները մշակում են նաև

պտղատու ծառերի այգիներ: Հուրոն, էրի և Օնտարիօ լճերի մէջ ընկած թերակղին ներկայացնում է մի խսկական այդի հանագայում: այնտեղ հասնում է նոյն իսկ խաղող. բայց առանձնապէս լաւ աճում է ինձորենին:

Անառուններից պահում են զլխաւորապէս կաթնատուները, որոնց կաթից պատրաստում են շատ իւղ ու պահիք: Կանագիների համար մեծ նշանակութիւն ունի նույն առառարկութունը: Զմեռը կտրում են անտառը, իսկ գարնանը փոխադրում գետերով կամ երկաթուղիներով: Կանագիները նաև որսում են շատ ձուկ, մանաւանդ նիւժառունողինում:

Կանագիները շատ զարգացած և ձեռնարկող ժողովուրդ են: Նրանք հիմնել են բազմաթիւ գլուխներ—ստորին, միջնակարդ և բարձրագոյն տիպերի¹⁾. անզլապէտ մարդ նրանց մէջ շատ քիչ կայ: Նրանք շինել են նաև շատ երկաթուղիներ: Նշանաւոր է «Խաղաղովկիանոսեան» երկաթուղին, որ տարածւում է Հալիթակս նաւահանգստից (Արլանտեան ովկիանոսի ափին) մինչև Վանիքուլեր նաւահանգիստը (գտնուում է մայր ցամաքի վրայ, Վանկուվեր կղզու դիմաց):


Մեծ նշանակութիւն ունեն նաև ջրային ճանապարհներ—Մեծ լճերի և Ս. Լաւրենտիոս գետերով: Ջրային ճանապարհը մի քանի տեղ կտրում է. օրինակ՝ էրի և Օնտարիօ լճերի մէջ, Կանագայի և Միացեալ Նահանգների սահմանում, գտնուում է Նիազարայի հսկայական ջրվէժը մօտ 25 սաժէն բարձրութեամբ:

Կանագայի ամենամեծ քաղաքն է Մոնրեալ (250 հազ. բն.), Ս. Լաւրենտիոս գետի ափին. Նշանաւոր է իր տունով եւբուպայի հետ: Կանագայի արտահանութեան զլխաւոր առարկաներն են՝ փայտ, անասուններ, իւղ, պանիր և հաց. քիչ չեն արտահանում նաև աղուամազ գագանների մորթիներ:

Կանագան Անգլիայի գաղութ է. նրա կառավարութեան գլուխ կանգնած է անզլիական ընդհանուր նահա-

¹⁾ Կանագան ունի 16 համարաբան:

դա պետը, որ հշահակուում է Անզլիայի թագաւորի կողմից: Եսկ կանագայի օրէնքները հրատարակուում են երկրի պար-



Նկ. 77. Նիազարայի ջրվէժը:

և մենատի կողմից, որ բաղկացած է ժողովրդական ընտրեալներից և գտնուում է 0ssiaia քաղաքում:

Ալեակա մեծ թերակղին, նրանից հարաւ ընկած չուփափնեայ նեղ շերտով միասին, պատկանում է Միացեալ Նահանգներին: Առաջ Ալեասկան պատկանում էր ոռուսներին, որ յետոյ ծախեցին ամերիկացիներին: Ալեասկան երեք անգամ մեծ է Կովկասից, բայց համարեա թէ անմարդաբնակ է: Վերջին տարիները Ալեասկայում գտնուել են ոսկու հարուստ հոնքեր, այդ պատճառով էլ այնտեղ սկսեցին դիմել շատերը, որոնք շուտ հարստանալ էին ցանկանում:

11. ՄիԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ


Միացեալ Նահանգները ամենամեծ պետութիւնն է Ամերիկայում և չորրորդը երկրագնդի վրայ: Իր տարածութեամբ (Ալեասկայի հետ) այդ երկիրը երկու անգամ մեծ է Եւրոպական Ռուսաստանից և համարեա հաւասար է Եւրոպային: Թէ.

պէտ նա (չհաշուած Ալեասկան) փոքր է . Կանադայից, բայց
բնակիչների թուով 14 անգամ աւելի է սրանից— այնտեղ ապ-
րում են աւելի քան 80 միլիոն հոգի: Այդ տարբերու-
թիւնը առաջ է գալիս նրանից, որ Մ.-Նահանգների բնու-
թիւնը շատ հարուստ է և յարմար՝ գաղթողների համար: Մ.-Ն.-ի հողը ամեն տեղ (բացառութեամբ կորդիլլըերների
շրջանի) փիրուն է, յարմար մշակութեան համար և արգա-
ւանդ: Երկրի մեծ մասը հարթութիւն է. միայն արևմտեան
մասում կան բարձր սարեր և բարձրաւանդակներ, արևելքից
արևմուտք Մ.-Ն. տարածւում է 4,600 վերստ, իսկ հիւսիսից
հարաւ՝ 1,300 վերստ:

կ լի ման տաք է, համարեա ամեն տեղ խոնաւ և այս-
պէս առողջարար, ինչպէս Եւրոպայի կլիման: Մ.-Ն.-ի արե-
ւելեան կեսում գարնանը և ամառը տեղում են առատ անձ-
րեներ, որոնց շնորհիւ այստեղ շատ լաւ են աճում զանա-
զան հացահատիկներ, բամբակ և ուրիշ կարևոր բույսեր:

Հսկայական հարստութիւններ կան թաղուած նաև երկրի ծոցում։ Միսամիպի գետի և նրա վտակների աւազանում շատ տեղ ընկած են քարածուխի հանքեր։ Ալեքանները հարուստ են երկաթով և նաւթով, իսկ ժայռոտ լեռները՝ Սիերա-Նեադան և Կասկադեան լեռները՝ ոսկով, արծաթով՝ պղնձով և ուրիշ մետաղներով։

Այս բոլոր հարստութիւնները մշակւում են Մ.-Նահանգ՝
ներում առանց դժուարութեան, շնորհիւ հաղորդակցութեան
բնական ընտիր ձանապարհների, մանաւանդ արևելքում;
Միսիսիպի գետը և նրա բազմաթիւ վտակները—Օհայօ, Միչ-
սիրի և ուրիշները—նաւազնաց են համարեա իրենց ամբողջ
ընթացքում։ Նաւազնաց են, նաև Ատլանտեան ովկիանոս
հոսող գետերը, որոնք թէպէտ երկայն չեն. օրինակ՝ Հուդզոն
գետը։ Հաղորդակցութեան առաջնակարգ ձանապարհներ են
նաև Մեծ լիերը, որոնք այժմ ջրանցքներով միացած են
չուղզոն գետի և Միսիսիպիի վտակների հետ։ Վերջապէս՝
Մ.-Նահանգները թէ արևելքից և թէ արևմուտքից ողող-
ւում են չսառչող ովկիանոսներով և ունեն բազմաթիւ



l. 78. *bañalp*:

ընտիր նաւահանգիստներ, որոնք ամբողջ տարին բաց են՝ Եւ-
րոպայի, Ասիայի և ուրիշ աշխարհամասերի հետ ունեցող հա-
ղորդակցութեան համար:

Բնական հարստութիւնները, լաւ կլիման, հաղորդակցութեան ընտիր ճանապարհները,—այս բոլորը վաղուց արդէն պրաւել սկսեցին Եւրոպացի գաղթականներին դէպի Մ.-Նահանգներ։ Ամենից շատ գաղթեցին անգլիացինները, ուստի և անգլիական լեզուն այնտեղ տիրապետող դարձաւ։ Մնացած բոլոր Եւրոպացինները—իրանց գացինները, գերմանացինները, իտալացինները, ֆրանսիացինները և այլն, խառնուեցին անգլիացինների հետ և ընդունեցին ոչ միայն նրանց լեզուն, այլ նաև կենցաղավարութեան եղանակն ու սովորութիւնները։ Այսպէս ահա Ամերիկայում առաջ եկաւ մի նոր ժողովուրդ, որ իրեն ամերիկացի է կոչում (իսկ Եւրոպայում՝ նրանց երբեմն «եանկի» էին կոչում)։ գաղթական—անգլիացինների անունով։ Այս ժողովուրդը աչքի է ընկնում իր ձեռնարկութեամբ և սիրով դէպի անընդհատ, տեսնոտ աշխատանքը։ Այս նկ. 78. եանկի։ բոլորի շնորհիւ է, որ Մ.-Նահանգները կարծ ժամանակում զօրաւոր պետութիւն դարձաւ և այդ պետութիւնը իր ոյժով և զօրութեամբ յետ չէ մնում երկրագնդի և ոչ մի պետութիւնից։

Բացի սպիտակ ցեղին պատկանողներից՝ Մ.-Նահանգներում ապրում են նաև հնդիկներ և նեղուեր։ Հնդիկների թիւը առաջ շատ էր, իսկ այժմ նրանց մեծ մասը ոչչաց-ուած է. ներկայումս այնտեղ մնացել է ընդամենը 200 հա-լար հնդիկ։ Իսկ նեղուեր Մ.-Նահանգներում բաւական շատ ան, — մօտ 9 միլիոն։ Նրանք ապրում են Մ.-Ն.-ի բոլոր մասե-րում, իսկ իսիտ ապրում են միայն հարաւում և հարաւ-արևել-յում, որտեղ են հաճախ առ ենի տար է և խոնաւ։

Թ, սրանց վկանակ աւելի առք չ-է

քացիական բոլոր իրաւունքները, բայց և այսպէս սպիտակները ար-
համարհանքով են վերաբերում նրանց: Տնտեսական կեանքում նեղիլիլը
բոլորովին ենթարկուած են սպիտակներին—համարեա բոլոր նեղիլիլն
էլ աշխատում են սպիտակներին պատկանող աբտերում, գործարանե-
րում, հանքերում և այն, և կամ երկաթուղիներում ստորին ծառայու-
թիւններ ունեն: Սակաւ կպատահի, որ մի նեղը իր սեփական տընտե-
սութիւնը ունենայ:

Միացեալ նահանգների ամբողջ արդիւնաբերութիւնը գըտ-
նըւում է ամերիկացիների ձեռքում և նրանց շնորհիս միայն
հասել է բարձրագոյն զարգացման: Առաջին տեղը բռնում են եր-
կրագործութիւնը և անասնապահութիւնը: Այնտեղուր
դեռ ոչ շատ առաջ տարածւում էին խիտ անտառներ և
վայրի պլերներ, ուր արածում էին միայն բիսոնների հօտեր
թափառում վայրենի հսդիկներ,—այնտեղ այժմ ամենուրեք
ընկնում են անվերջ գաշաեր կամ արածում են ընտանի կեն-
դանիների մեծամեծ հօտեր: Դաշտային աշխատանքները ամե-
րիկացիները կատարում են զանազանատեսակ մեքենաների
օգնութեամբ, այդ պատճառով էլ կարձ միջոցում կարողանում
են մշակել ընդարձակ տարածութիւններ և հաւաքել առատ
հունձ: Միայն եդիպտացորեն ստացւում է Մ.—Նահանգնե-
րում այնչափ, որչափ Ռուսաստանում բոլոր հացահատիկները
միասին առած: Մշակում է մեծ քանակութեամբ ցորեն, որ
բաւականանում է Մ.—Նահանգների բոլոր բնակիչներին, և
բացի դրանից ամեն տարի մի քանի հարիւր միլիոն փութ-
ուղարկուում է Արևմտեան Եւրոպա:

Բամբակ Մ.—Նահանգներում ստացւում է աւելի, քան
աշխարհի միացած բոլոր երկրներում և մեծ քանակութեամբ
ուղարկուում է արևմտեան Եւրոպա ու մասսամբ Ռուսաստան:

Շատ է զարգացել Մ.—Նահանգներում նաև անապա-
նապահութիւնը, մանաւանդ պլերներում, որոնք ամբող-
ջապէս գեռ չեն մշակուած: Ամենից շատ պահում են խոշոր
եղջերաւոր կենդանիներ, նաև ոչխար և խոզ: Այնչափ
շատ միս է ստացւում Մ.—Նահանգներում, որ միլիոնաւ որ
փթերով ստացրած Արևմ. Եւրոպա է ուղարկուում ովկիանոսով:
Կորդիլլերներում ամերիկացիները զբաղւում են ոսկու

և արծաթի հանքերի մշակութեամբ: Ոսկու առաստութեամբ
Մ.—Նահանգների հետ մըցում են Աւստրալիան և հար. Աֆ-
րիկան, իսկ արծաթով՝ միայն Մեքսիկան: Բայց թանկագին
մետաղներից աւելի արժէքաւոր են Մ.—Նահանգների համար—
երկաթը և բարածութիւնը: Երկաթը նրա համար, որ գործա-
դրում է ամեն տեսակ մեքենաներ, երկաթուղիներ և շոգե-
մեքենաներ շինելու: իսկ քարածութիւնը նրա համար, որ գործադր-
ում է իրեկ վառելանիւթիւնը գործարանների շոգեկառքերի համար և
այլն: Քարածութիւնը և երկաթի բանակով Մ.—Նահանգները ներ-
կայումս գերազանցում են բոլոր պետութիւններից, մինչեւ ան-
գամ Անգլիայից: Վերջապէս՝ ստացուող նաւթի (Ալեգաննե-
րում) քսնակով Մ.—Նահանգները յետ են մնում միայն Ռու-
սաստանից:

Մ.—Նահանգներում շատ կանամեն տեսակ գործարան-
ներ:


Երկաթուղիներ այնտեղ աւելի կան, քան ամբողջ Եւ-
րոպայում և Ասիայում՝ միասին վերցրած: Մի քանի երկա-
րուղային գծեր կտրում անցնում են Կորդիլլերներով ու միաց-
նում Ասլանտեան ովկիանոսի նաւահանգստները Խաղաղ ով-
կիանոսի նաւահանգստների հետ (այդ գծերը կոչւում են «խա-
ղաղովկիանոսեան» երկաթուղիներ): Մ.—Նահանգների գետե-
րով, լճերով և ծովերով ամեն տեղ լողում են շոգենա-
ւեր: Շնորհիւ արուեստական չը անցքների՝ ծովային շոգե-
նաւերը կարողանում են անցնել Ասլանտեան ովկիանոսից մին-
չև Մեծ լճերը և ապա վերադառնում այնտեղից: Ընդհանրա-
պէս՝ ճանապարհների հաղորդակցութիւնը Մ.—Նահանգներում
գերազանց է:

Թէպէտ Մ.—Նահանգները բաղկացած են 45 հասա-
րակապետութիւններից (շտատներից կամ նահանգներից)՝
և 5 տէրըի տորիաներից (երկրամասերից)¹⁾, բայց նրանք
բոլորն էլ կապուած են իրար հետ իրը մի ամբողջութիւն՝

1) «Տէրըի տորիա» կոչւում են այն շրջանները, որոնք շատ սակաւ
ազգաբնակութիւն (100 հազ. պակաս) ունեն սեփական կառավարու-
թիւնից գուրեկ են. նրանց գործերը վարում են նախագահի կողմից նը-
շանակուած պաշտօնեաները:

շնորհիւ ճանապարհների հաղորդակցութեան, ընդհանուր լեզուի և ընդհանուր կառավարութեան։ Մ.-Ն.-ի շտատները մեծութեամբ հաւասար չեն իրար։ Հիւս.-արհելեան՝ հին շտատները շատ աւելի փոքր են, քան հիւս.-արևմտեան և հարարկամ։ շտատները։ Բոլոր շտատները բաժանում են 4 խըմբերի։ —արևելեան, հարաւային, կենդրոնական և արհմտեան։

Բոլոր նահանգների (շտատների) գլուխ կանգնած է հասարակապետութեան նախադանը (որ ընտրում է 4 տարով) և կոնգրեսը (որ բաղկացած է ժողովրդական ընտրեալներից)։



Կ. 79. Կոնգրեսի չենքը Վաշինգտոնում։

Կոնգրեսսը հրատարակում է օրէնքներ, իսկ նախագահը հոգում է նրանց գործադրութեան վրայ։

Ամեն մի նահանգ կամ պետութիւն (շտատ) ունի իր յատուկ կառավարութիւնը։ Ամեն մի նահանգի գլխաւորն էլ ընտրովի նահանգապետ է, որը կառավարում է իր նահանգի ժողովրդական ներկայացուցիչների ձեռքով հրատարակող օրէնքներով։ Այդ բոլոր շտատներն էլ դաշնակցելով միացել և կազմել են Մ.-Նահանգների դաշնակցական (ֆեդերատիվ) հասարակապետութիւնը։

Միացեալ-նահանգների բոլոր քաղաքացիները ունեն մի ևնոյն իրաւունքները և օրէնքի առաջ բոլորովին հաւասար են։ Նոյն իսկ

հասարակապետութեան նախագահը, ծառայութիւնը վերջացնելուց յետոյ, ոչնչով չէ զանազանուում մնացած քաղաքացիներից։

Ժողովրդական կրթութեան համար Մ.-Նահանգներում հոգում են ամենքը—կոնգրեսը, նախագահը, նահանգապետները, զանազան ընկերութիւններ, մասնաւոր անձեր—որոնք ահազին զումարներ են նուիրում այդ նպատակով։ Համալսարանների մեծ մասը (որոնց թիւը Մ.-Նահանգներում մօտ 500 է) պահուում է ամերիկացի միլիոնատէրերի նուիրաբերութիւններով։ Գրքեր, լրագիրներ, ամսագրներ Մ.-Նահանգներում հրատարակուում են անսահման քանակութեամբ։

Մ.-Նահանգների մայրաքաղաքն է՝ Վաշինգտոն, որ գտնուում է Կոլումբիա շրջանում¹⁾ և միջին մեծութիւն ունեցող մի քաղաք է։ Այստեղ է գտնուում ժողովրդական ներկայացուցութիւնը (կոնգրեսը) և ապրում նախագահը։

Մ.-Նահանգների ամենամեծ քաղաքն է՝ Նիւ-Եորկ (արհելքում), որ մօտ 4 միլիոն բնակիչ ունի և իր բնակիչների թուով յետ է մնում երկրագնդի միայն մէկ քաղաքից—Լուսագործոց (Անգլիայի մայրաքաղաքից)։ Նիւ-Եորկը գտնուում է Հուղղոնի գետաբերանում և շատ յարմար նաւահանգիստ է։ Նիւ-Եորկի վրայով է կատարուում Մ.-Նահանգների ամբողջ արտաքին առևտրի կէսը։ Այստեղ են ցամաք իջնում ամենատարի մի քանի հարիւր հազար զաղթականներ՝ Եւրոպայից²⁾։

Նիւ-Եորկի շէնքերը աշքի են ընկնում իրենց հսկայական մեծութիւնը։ Այստեղ շատ կան 20 և 30 յարկանի տներ։ Փողոցներում նըկատելի է ահազին հաղորդակցութիւն՝ էլեկտրաքարշերով, կառքերով և ստքով։ Փողոցների վերև սիւների վրայ, շինած է երկաթուղի, որ օրական մօտ 1 միլիոն մարդ է փոխադրում։ Հուղղոն գետի և նեղուցների վրայ զգած են հսկայական կամուրջներ և անց են կացրած ստորցեայ տուննելներ (ուղիներ)։

¹⁾ Այս շրջանը բաժանուած է միւս շտատներից նրա համար, որպէսզի ոչ մի շտատ առիթ չունենայ գերագաւ համարելու իրեն, թէ իր սահմաններում է գտնուում պետական մայրաքաղաքը։

²⁾ 1903 թուականին Եւրոպայից Մ.-Ն. զաղթեցին 857,000 հոգի որոնք համարեա բոլորն էլ Նիւ-Եորկում ցամաք իջան։ Գաղթականներին դէպի այդ երկիրը գրաւողը բարձր աշխատավարձն է ու ազակառավարութիւնը։

Մ.-Նահանգների միւս նշանաւոր նաւահանգիստներն են.—Ստլանտեան ովկիանոսի ափին (արևելքում) Ֆիլադելֆիա, Բայթիմոր և Բուստոն: Մերօիկայի ծոցի վրայ, Միսսիսիպիի գետաբերանում (հարաւայ), Նոր-Օրլեան (երկրագնդի ամենանշանաւորնաւահանգիստն է՝ բամբակի արտահանութեամբ). Մեծ ովկիանոսի վրայ, արեմուքումնը շանաւոր է Սան-Ֆրանցիսկօ նաւահանգիստը:

Երկրի ներսում եղած բաղադրական ամենանշանաւորներն են.՝ Զիկագօ (Միչիգան լճի ափին), Սիե-Լուի (Միսսիսիպիի և Միսսուրիի խոռնարանից ոչ հեռու) և Պիսորոգ (արևելքում, Օհայօ գետի ափին, ամենահարուստ նաւթահանըրի մօտ): Զիկագօն գտնում է 35 երկաթուղային գծերի հանգույցում: Նա երկարագնդի առաջին քաղաքն է՝ հացաատիկների և մասի առեւտրով:



Նկ. 80. Բազմայակ տուն Նիւ-Յորկում:

Ներն են.՝ Զիկագօ (Միչիգան լճի ափին), Սիե-Լուի (Միսսիսիպիի և Միսսուրիի խոռնարանից ոչ հեռու) և Պիսորոգ (արևելքում, Օհայօ գետի ափին, ամենահարուստ նաւթահանըրի մօտ): Զիկագօն գտնում է 35 երկաթուղային գծերի հանգույցում: Նա երկարագնդի առաջին քաղաքն է՝ հացաատիկների և մասի առեւտրով:

100 տարի սրանից առաջ Զիկագօի տեղում գտնուում էր հնդիկների մի փոքրիկ գիւղ, իսկ այժմ Զիկագօն ունի 2 միլիոն բնակիչ:

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Մայր ցամաքի նեղ մասը, որ տարածւում է Մ.-Նահանգներից հարաւ, նաև նրա արևելեան կողմը ընկած կղղիները, միասին կոչում են կենդրոնական կամ Միջին Ամերիկա: Նրա մեծ մասը գտնուում է արեւադարձային գօտում:

Կենդրոնական Ամերիկան աւելի շուտ գտնուեց, քան Ամերիկայի միւս մասերը. գտնողներն էին խապանացիները. սրանք չկարողացան բնիկներին հնդիկներին բնաջինջ անհել կամ երկրի խորքերը քշել: Հնդիկների մեծ մասն այժմ նստակեաց է. նրանք կտղմում են տեղական ազգաբնակութեան գլխաւոր տարրը. նրանցից շատերն էլ խառնուեցին սպիտակների հետ: 19-րդ դարի սկզբում խապանական գաղութեների մեծ մասը բաժանուեց խապանիայից և կազմեց անկախ հասարակապետութիւններ:

12. ՄԵՔՍԻԿԱ. ԵՒ ՎԵՍՏ-ԻՆԴԻԱ

Կենդրոնական Ամերիկայի մեծ մասը բռնում է Մեքսիկան: Մեքսիկան հինգ անգամ փոքր է Միացեալ-Նահանգներից, բայց իր մեծութեամբ գերազանցում է բոլոր եւրոպական պետութիւններին, բացի Ռուսաստանից:

Մեքսիկայի բնութիւնը այնպէս յարմար չէ մարդկային բնակութեան համար, ինչպէս Մ.-Նահանգների բնութիւնը: Մեքսիկայի մեծ մասը բարձրաւանդակ է, որ թէ արևելքից և թէ արևմուտքից շրջապատուած է կորդիլլերների եռաշղթաներով: Նրա կլիման չոր է (ինչու), բուսականութիւնն էլ բաւական աղքատ: Այդ բարձրաւանդակը ներկայացնում է անապատ հարթութիւններ—քարքարոտ կամ աւազուկալիթիթիթիթիթիթ, թերակղին ևս բաւական չոր է և անապատային, որովհետև նրա մօտով ցուրտ հոսանք է անցնում: Միայն Մեքսիկայի ծոցի ափերին և իւկատան թերակղզու վրայ շատ անձրի է գալիս և այստեղ աճում են արևագարձային անտառներ, որոնք սակայն տուղջաբար չեն, այլ անյարմար մարդկային կեանքի համար:

Կորդիլլերները Մեքսիկայում հարուստ են ոսկով և մանաւանդ արձաթով: Այս թանկագին մետաղները գլխաւորութէս գրաւեցին գաղթականներին եւրոպայից դէպի Մեքսիկա—

ամենից շատ՝ իսպանացիներին: Սրանց յետնորդները (որ Ամերիկայում կը էօլ են կոչւում) կազմում են ներկայումս Մեքսիկայի ազգաբնակութեան $\frac{1}{5}$ մասը: Նրանց է պատկանում հանքերի մեծ մասը և հողի ամենալաւ բաժինները: Իսկ Մեքսիկայի ըլնակիչների մեծ մասը կազմում են հնդիկները և մետիները: Նրանք ըղբաղում են երկրագործութեամբ, — ցանում են եղիպատացորեն, ցորեն. մեծ քանակութեամբ նրանք մըշակում են ագաւա կոչուած բոյսը: Նրա հիւթից պատրաստում են շատ գործածական մի խմիչք, իսկ տերեններից հանած թելերից պարան և խոզանակ են պատրաստում: Մեքսիկայի ծոցի ափերին մշակում են սուրճի և կակաօի ծառեր:



Նկ. 81. Արքայական արմաւենիները.

Մեքսիկայի մետիսները և հնդիկները իրենց կենցաղավարութեամբ քիչ են տարբերւում կրէօլներից: Նրանք համարեա բոլորն էլ քրիստոնեայ են և խօսում են իսպաներէն: Բնակիչների ընդհանուր թիւն է $13\frac{1}{2}$ միլիոն:


Կառավարութեան տեսակին նայելով՝ Մեքսիկան հասարակական ետութիւնն է, Մ.-Նահանգների կազմութեան նման: Մայրաքաղաքն է՝ Մեխիկո, որ գտնւում է բարձրաւանդակի վրայ, ձիւնով ծածկուած մի քանի հրաբուղիների ստորոտում:

Կենդրոնական Ամերիկայի հարաւային մասում, մայր ցամաքի վրայ, գտնւում են ինքնուրոյն վեց հաստքակապեառութիւններ. Նրանց մէջ ամենանշանաւորն է՝ ՊԱՆԴՄԱՆ համանուն պարանոցի վրայ: Այդ պարանոցի վրայ այժմ փորում են մի ջրանցք, որ պիտի միացնէ իրար հետ Ատլանտեան և Խաղաղ օվկիանոսները:

ՎԵՍՏ-ԻՆԴԻԱՆ բաղկացած է՝ Մեծ Անտիկան (Կուբա, Եամայկա, Հայիրի և Պորտուգալիա), Փոքր Անտիկան և Բահամեան կղզիներից:

Մեծ-Անտիկան կղզիները ցամաքային ծագում ունեն. Փոքր Անտիկան կղզիները մեծ մասով հրաբղխային են, Բահամեան կղզիները՝ Կորալլական:

Վեստ-Ինդիայի բնութիւնը փարթամ է: Շնորհիւ մըշտական տաքութեան և խոնաւութեան այնտեղ աճում են տրեադարձային անտառներ: Բայց կլիման առողջարածութիւններ է, — ամենատեղ տարածուած են մալիարիա և դեղին տեսդիմութիւնները, Վեստ-Ինդիայի բնակիչներն են (մօտ 5 միլ.): Ներեր և մուլատներ, որոնք բոլորն էլ կաթոլիկ քրիստոնեաներ են, բնակիչների գլխաւոր զբաղմունքն է երկրագործութիւնը: Յանձնուած է առաջնահանուր առողջապահութեան համար և առաջնահանուր առողջապահութեան համար:



Նկ. 82. Հնդիկ կուլիները չաքաբեղետ են քաղում Եամայկա կղզու վրայ:

էլ մեծ քանակութեամբ արտահանւում է դէպի Միացեալ-Նահանգներ և Եւրոպա:

Յիշած կղզիներից կուրան և Պորտորիկօն պատկանում էն-Մ.-Նահանգներին, Եամայկան՝ Անգլիային, իսկ Հայիթի վրայ պանւում են նեղբերի Երկու անկախ հասարակապետութիւններ: Ամենաշատ բնակիչներ ունի Կուրան (մօտ 2 միլ.). Նրա գլխաւոր քաղաքն է Հաւանին, մօտ 250 հազար բնակչով: Փոքր Անտիլեան կղզիները պատկանում են Եւրոպական զանազան պետութիւնների:



Նկ. 83. Երազուարի անկարուն կուրանում:

ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱ

13. ՎԵՆԵՑՈՒԵԼԱ ԵՒ ԳՐԻՍՆԱ.

Վենեցուելան և Գվիանան բնութեամբ հարուստ, բայց սա-

կաւ բնակուած Երկրներ են: Նրանց բոլոր ծովագիերը ծածկուած են արևագարձային խիտ անտառներով, իսկ հարթ վայրերը՝ սաւաններով, որոնք այստեղ լիանոս են կոչւած, լիանոսները չատ յարմար են անտառապահութեան համար:

Եւրոպացին եր Վենեցուէլայում և Գվիանայում աւելի քիչ կան, քան Վեստ-Ինդիայում: Բնակիչներն են գլխաւորապէս՝ մուլատներ և մետիսներ: Լիանոսներում նրանք պահում են եղջիւրաւոր խոշոր կենդանիների մեծ հօտեր, ձի, խոզ և ուրիշ ընտանի կենդանիներ: Պարապում են նսե երկրագործութեամբ. Նրանց գիւղերը ըլջապատուած են լինում բնանի և եղիպացորենի անկարաններով: Ծովագիերում մուլտաները և մետիսները մշակում են սուրճ, կակաօ և շաքարեղիզ: Իսկ ծովից աւելի հեռու ընկնող տեղերը համարեալ են է. Նրանց սուրճին անբնակ են: Գվիանայի սարերը հարուստ են սովոր, բայց ճանապարհները շատ գժուարանցանելի են—արեւոդարձային խիտ անտառների միջով:

Պետական կազմին նայելով՝ Վենեցուէլան հասարակութիւն է առաջնային կարակաս: Գվիանան բաժանուած է Երեք գաղաթների, որոնք պատկանում են Եւրոպացիներին (անգլիացիներին, ֆրանսիացիներին և հոլլանդացիներին):

14. ԲՐԱԶԻԼԻԱ

Բրազիլիան բոնում է ամբողջ Հար. Ամերիկայի համարեալ կէսը. իր մեծութեամբ նա մի քիչ փոքր է Միացեալ Նահանգներից, բայց ունի 20 միլիոնից պակաս աղդաբնակութիւն: Բրազիլիայի մեծ մասը,—Ամազոն գետի ամբողջ աւազանը, ծածկուած է արևադարձային վատառողջ անտառներով—սելչուառ և աներով: Այդ անտառները այնչափ խիտ են և ձահճոտ, որ համարեա անհնար է մաքրել և յարմարացնել երկրագործութեան համար. այդ պատճառով էլ նրանք ուշոքական չեն մարդկային կեանքի համար:

Սելվասների մէջ ապրում են ընդամենը հազիւ 600 հազար հոգի. նրանք բոլորն էլ վայրենի-հնդիկներ են, որոնք զբաղում են որ սորդութեամբ և ձկնորսութեամբ:

Սկսած այս ժամանակից, երբ Ամազոն գետով եւրոպական շոգենաւեր են երթևեկում, այդ գետի ափերին տեղտեղ հիմնուել են մուլատների և մետիսների բնակավայրեր, որոնց գլխաւոր զբաղմունքն է՝ Կառչուկի (այսինքն ռետին) արդիւնաբերութիւնը: Վերջին ժամանակներս այս արդիւնաբերութեամբ զբաղուել ոկսեցին նաև հնդիկները:

Մետին ստացւում է կառչուկի ծառի կաթնանման նպիտակ հրթից: Այդ հիւթը ստանալու համար արդիւնաբերողը ծառի մէջ փորուածք է անում և այդ տեղում ամրացնում է մի աման, որի մէջ էլ կամաց-կամաց հոսում է հիւթը: Հաւաքած հիւթը արդիւնաբերողը կաթսայի մէջ է հաւաքում և ապա եփ տալիս՝ փայտով խառնելով, որի (փայտի) շուրջն էլ հետղօնտէ ուետին է գոյանում:

Ծովային շոգենաւերը Ամազոն գետով վերին մասերն են հասնում,—մինչև Մադէյրայի սկիզբը, բեռնում են ուետին, նաև թանկագին ծառեր. այդ բոլորը նրանք արտահանում են գէպի եւրոպա և Մ.-Նահանգներ: Երկրագնդի վրայ արտահանուող սետինի մեծ մասը ստացւում է Ամազոնի սելվասներից:

Մարդկային բնակութեան համար աւելի յարմար է Բրազիլիայի հարաւարեւելեան, լեռնուա մասը: Այստեղ այնչափ խոնաւ և այնչափ շոգ չէ, որչափ սելվասներում: Այստեղ էլ կենդրոնացած է Բրազիլիայի ազգաբնակութեան մեծ մասը, որտեղ և ապրում են ոչ միայն հնդիկներ և մետիսներ, այլ նաև եւրոպացի գաղթականներ, գլխաւորապէս պորտուգալացիներ և իտալացիներ:

Սլզում սպիտակներին այդ տեղ գրաւողը գոյնոգոյն ալմաստներն էին, որոնցով հարուստ են Բրազիլիայի սարերը, մասամբ նաև ոսկին: Իսկ ներկայումս հարարելեան Բրազիլիայի թէ սպիտակ և թէ գունամորթ բնակիչների գլխաւոր զբաղմունքն է սուրճի, մասամբ նաև շաքարեղէգի, բրնձի, կարտոֆիլի արդիւնաբերութիւնը:

Սուրճի ծառը Բրազիլիա (նաև կենդրոնական Ամերիկա) բերուեց

եւրոպացիների ձեռքով: Ներկայումս հարաւարեկելեան Բրազիլիայի արերի լանջերը ծածկուած են սուրճի ծառի ընդարձակ տնկարաններով: Երկրագնդի վրայ արդիւնաբերութեամբ է Բրազիլիայում:



Նկ. 84. Սուրճի հաւաք հրթիւն:—Սուրճի ծառերը աճում են ուրիշ տեկիք բարձր ծառերի հովանու տակ: Նկարի ձախ կաղմում, վերև ուրիշի ծառի ձաղիկներով և պտուղներով:

Պետական կազմին նայելով Բրազիլիան, ինչպէս նաև Ամերիկայի մնացած բոլոր երկրները, հասարակապէտութիւն է: Նրա մայրաքաղաքն է Միհօ-դի-ժանիլյո, որ միևնույն ամանակ նշանաւոր նաւահանգիստ է: Բրազիլիայի ամենաշահաւոր նաւահանգիստը, որտեղից շատ սուրճ է արտահանում, կոչւում է Սանտո:

15. ԼԱՊԼԱՏԵԱՆ ԵՐԿՐՆԵՐ (ԱՐԳԵՆՏԻՆԱ, ՈՒՐՈՒԳՎԱՅՈՒԹ եհ ՊԱՐԱԳՎԱՅՅՈՒՄ):

Լապլատեան երկրները աւելի չոր և զով կիմայ ունեն, ան Բրազիլիան: Նրանց հիւսիսում տարածւում են սաւաներ, — նաև արմաւենիներ ու մշտագալար ծառեր: Հարաւային սուռմ սաւանները աստիճանաբար փոխւում են բարեխառն

գօտու տափաստանների — պլ ամպասների. նրանք ծածկուած են ցածր խոտով, բայց շատ արդաւանդ են և յարմար՝ երկրագործութեան ու անասնապահութեան համար:

Աւելի հարաւում պամպասները փոխուամ են ՊԱՏԱԳՈՆԻԱՅԻ չոր և անպտուղ տափաստանների, որոնք ծածկուած են



Նկ. 85. Պատագոնիայի հոգիներ՝ որոնք գնալիս:

միայն շատ սակաւ խոտով և թփերով: Այդ տափաստաններ յարմար չեն նոյն իսկ անասնապահութեան համար:

Լապլատեան երկրների առողջարար կլիմա պտղաբեր հողը, մանաւանդ պամպասներում, գրաւել շատ գաղթականների Եւրոպայից (գլխաւորապէս իսպանացիներ և իտալացիներ): Ներկայումս ազգաբնակութեան գլխաւոր տարրը բաղկացած է գաղթականներից և մետիսներից Զուտարիւն կիսավայրենի հոգիները, որոնք որսորդութեան և անասնապահութեամբ են պարապում, ապրում են միանիւսում սաւաններում և հարաւում: Պատագոնիայում:

Գաղթականների և մետիսների գլխաւոր գրազմունքն

անանապահութիւնը և երկրագործութիւնը, որ ամենից լաւ ծաղկած են պամպասներում: Այնտեղ, ուր դեռ ոչ շատ առաջ թափառում էին վայրենի որսորդ-հոգիկներ, այժմ շատերածնում են ահագին հօտերով ոչխարներ, եղջիւրաւոր խոշոր կենդանիներ և ձիեր: Ընդարձակ տարածութիւններ մշակած են այնտեղ և տալիս են ցորենի և եղիպտացորենի առատ հունձ:

Ամեն տեղ երկաթուղային գծեր են անցկացրած և դիւզեր գցած, որոնք թաղուած են մրգատուայգիների կամաչի մէջ:

Կորդիլլերների ստորոտներում, սարերից վար հոսող գետերի հովիտներում, մշակում են խաղողի լնդարձակ այգիներ և շաքարեղեգի տնկարաններ:

Պարագվայ գետի աւազանում ապիտակների և հոգիկների գլխաւոր գրազմունքը կազմում է տեղական թէյի ծառի տերեներ հաւաքելը: Թէյի ծառը այդ եղիլը ուներ ամեն տեղ, աճում է գայրի դրութեան մէջ: Այդ տերեններից պատրաստած թէյը կազմում է մետիսների սիրած խմելիքը:

Պետական կազմին նայելով՝ Լապլատեան երկրները բաժանում են երեք հասարակապետութիւնների՝ Արգենտինա, Ուրուգվայ և Պարագվա:

Արգենտինայի մայրաքաղաքն է՝ Բուենոս-Այրես (մէկ միլ մակիչ): Ուրուգվայի մայրաքաղաքն է՝ Մոնտեվիդեօ: Այս երկու քաղաքներն էլ գտնում են Լապլատի գետաբերանում և մեծ նաւահանգիստներ են: Այդ քաղաքներից Եւրոպա է արտահանում շատ մեծ քանակութեամբ ցորեն, բուրդ, միս (սառցրած և աղած), ճարպ, մորթի և այլն:

16. ԿՈՐԴԻԼԼԵՐԵԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Կորդիլլերեան երկրները տարածւում են Պանամայի պարանոցից մինչև հորն հրուանդանը և բանում են Հար, Ամերիկայի համարեա ամբողջ Կորդիլլերները կամ Անդերը: Թէպէտայդ երկրները ահագին տարածութիւն ունեն, բայց մարդկանին կեանքի պայմանները այս երկրներում համարեա ամեն տեղ նոյնն են — ամեն այտը մարդկան տեղերը ընկած են բարձր հովիտներում և բարձրագույն գագաթներում:

լեռնաշղթաների մէջ։ Այնտեղ կլիման առողջարար է, հողը՝ յարմար երկրագործութեան համար և կան բաւական լաւ արօտատեղիներ անսանապահութեան համար։

Այդ հովիտներից և բարձրաւանդակներից վեր բարձրացող լեռնաշղթաների ծայրերը ծածկուած են ձիւնով, որոնց մէջ կան հանգած և գործող հրաբուղիներ։ Այդ լեռնազագաթները, իհարկէ, անյարմար են մարդկային բնակութեան համար։

Անյարմար են նմանապէս ծովափերը, կորդիլլերները չար. լայնութեան 2-րդ և 32-րդ աստիճանների մէջ համարեա դուրկ են բուսականութիւնից. լերկ ժայռերի մէջ մէկ-մէկ պատահում են միայն թփեր։ Ովկիանոսի ափում գտնւում է նոյն խակ մի անապատ—Ասակամա, որտեղ ամբողջ տասնեակ վերստերի վրայ չի կարելի տեսնել ոչ խոտ և ոչ էլ թռուփ։

Սրա գլխաւոր պատճառը օդի չափազացն չոր լինելն է. այդ էլ առաջ է գալիս նրանից, որ այդ կողմերում ծովափի մօտով անցնում է ցուը հոսանք, որ ոտկաւ գոլորշիներ է տալիս։

Հարաւային լայնութեան 2-րդ աստիճանից հիւսիս ծովափինեայ կորդիլլերները ոռոգւում են լաւ և ծածկուած են արեւադարձին անտառներով։ Բայց այդ անտառները առողջարար չեն, ուստի և անյարմար են մարդկային բնակութեան համար։ 32-րդ աստիճանից հարաւ ևս ծովափերը լաւ ոռոգւում են և ծածկուած են անտառներով և կանաչ մարդկետիներով։ Այստեղ հնարաւոր է թէ երկրագործութիւնը և թէ անասնապահութիւնը. բայց ծովափի շերտը այստեղ շատ նեղ է։

Զնայած այս բոլոր անյարմարութիւններին՝ կորդիլլերեան երկրներն են գաղթել բաւական շատ եւրոպացիներ (գըլիաւորապէս իսպանացիներ)։ Նրանց այնտեղ գրաւողը եղել են թանկագին մետաղները, որոնցով շատ հարուստ են կորդիլլերները։ Նրանք նուածեցին այնտեղ ապրող հնդիկներին, խառնուեցին սրանց հետ և այժմ ագրարնակութիւնը բաղկացած է գլխաւորապէս մետիսներից և մասամբ միայն սպիտակներից, հնդիկներից (հեռաւոր լեռնոտ մասերում և

չըոյ երկրում), նեղերից և մուլատներից (խոնաւ ծովափերում, հասարակածից հիւսիս)։



Նկ. 86. Փշատերի ծառերի անտառ Զիլիում։

կորդիլլերեան երկրներում ապրող մետիսների և սպիտակների գլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը։ Ամենաբարձր վայրերում նրանք ցանում են գարի, ցածր տեղերում կարտոֆիլ (որի հայրենիքն այնտեղ է) և ցորեն։ աւելի ցածրերում՝ եղիպտացորեն։ Ամենացած և տաք տեղերում, լեռնային գետակների ափերում, մշակում են շաքարեղէզ, բրինձ և բազմազան մրգատու ծառեր։ Հասարակածից հիւսիս ընկնող ծովափերում, բացի գրանից, պատահում են յաճախ նաև կակաօի ընդարձակ տնկարաններ։

Կակաօի ծառը այստեղ անտառներում աճում է նոյն խակ գայրի գըլիութեան մէջ, այն էլ այնչափ առատութեամբ, որ եթէ անտառի բոլոր ծառերը, բացի կակաօից, կտրատեն, մի քանի տարուայ ընթացքում այնտեղ կգոյանայ կակաօի տնկարան։

Առաջները այդ անտառներում պատահում էր մեծ բանակութեամբ

նաև քինայի ծառ, բայց այժմ համարեա բոլորովին ոչնչացրած է և միայն շատ փոքր քանակութեամբ է մշակւում¹⁾

Մեծ նշանակութիւն ունի Կորդիլլերեան երկրներում նաև հանքագործութիւնը—արծաթի, ոսկու և մանաւանդ սելիտրայի արդիւնագործութիւնը, որի ամենահարուստ հանքերը գտնուում են Կորդիլլերների ամենաչոր տեղերում,—ամենից շատ՝ Աստակամայում։ Մելիտրան այդտեղից արտահանուում է գէպի երկրագնդի բոլոր կողմերը։

Կառավարութեան նայելով՝ Կորդիլլերեան երկրները բաժանուում են հինգ հասարակապետութիւնների—Կոլումբիա, Էկվատոր, Պերո՛, Բոլիվիա և Չիլի։ Ամենանշանաւոր քաղաքը այդ երկրում Չիլիի մայրաքաղաք Սանտ-Եազօն է։ Նա միացած է երկաթուղով իր նաւահանգիստ Վալպարայուի և Արգենտինայի մայրաքաղաք Բուէնոս-Այրեսի հետ։

Մնացած քաղաքներից նշանաւոր են. — Բօօօտա՞ Կոլումբիայի մայրաքաղաքը, Կիտո՞ էկվատորի մայրաքաղաքը (Գվանակիլ նաւահանգստով), Լիմա՞ Պերուի մայրաքաղաքը (Կալիխո նաւահանգստով)։ Այս բոլոր քաղաքները գտնուում են Կորդիլլերների բարձր տեղերում, որտեղ օդը աւելի առողջարար է, քան ծովափերում։

¹⁾ Երկրագնդի վրայ ստացուող քինան համարեա ամբողջապէս պատրաստում է Եաւա կղզում։

ԱԻՍՏՐԱԼԻԱ

ԱԻՍՏՐԱԼԻԱ ՄԵՑՐ ՑԱՄԱՔԸ

1. Դիրքը, ՄԵԾՐԻԹԻՒՆԸ, ԱՓերի ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ
եհ ՀԵՑԱԶՕՏՈՒՄԸ

Աւստրալիան հինգ աշխարհամասերի թւում ամենափոքրն է—6 անգամ փոքր է Ասիայից։ Բոլոր աշխարհամասերի մէջ միայն Աւստրալիան է, որ ամբողջապէս հարաւային կիսագընդում է գտնուում։ Արևմուտքից արևելք Աւստրալիան տարածում է 4,000 վերստ, իսկ հիւսիսից հարաւ՝ ամենալայն մասում՝ 3,000 վերստից մի փոքր աւելի։

Աւստրալիան շրջապատուած է ովկիանոսներով. — արևելքից՝ Մեծ կամ Խաղաղ, իսկ հարաւից և արևմուտքից՝ Հնդկական ովկիանոսով։ Աւստրալիայի հիւսիս-արևելմտեան կողմում ընկած է Մալյեան աշխալեազը, որ կարծես մի կամուրջ լինի՝ ձգուած Աւստրալիայի և Ասիայի մէջ։ Իսկ մնացած աշխարհամասերից Աւստրալիան շատ հեռու է գտնուում։

Աւստրալիայի ամենահեռաւոր ծայրերն են. հիւսիսում՝ Եորկ հրուանդանը, հարաւում՝ Ուիլսոն, արևմուտքում՝ Սիփ, իսկ արևելքում՝ Բայրոն հրուանդանը։

Աւստրալիայի ափերը շատ քիչ են կարտուած, ուստի և շատ քիչ ծոցեր և թերակղզիներ կան այնտեղ. միակ նշանաւոր թերակղզին է՝ Եորկ, — հիւսիսում. այնտեղ է գտնուում նաև Աւստրալիայի նշանաւոր երկու ծոցերից մէկը—Կարպենսարիա. միւս նշանաւոր՝ Աւստրալիական ծոցը գտնուում է հարաւում։

Աւստրալիայի շուրջը գտնուում են բազմաթիւ կղզիներ, որոնք ցրուած են մեծ մասով Մեծ ովկիանոսի մէջ—մայր

ցամաքից հեռու։ Միայն երկու մեծ կղզիներ գտնվում են մայր ցամաքին մօտ—Նոր-Գլինէա, որ նրանից բաժանվում է Տորեսի նեղուցով, և Տամանիա կղզին, որ բաժանվում է մայր ցամաքից Բասի նեղուցով։

Աւստրալիան գտնուել է երոպացիների ձեռքով մնացած բոլոր աշխարհամասերից յետոյ։ Առաջին անգամ Մագելլանը (1521 թ.), աշխարհի շուրջը կատարած ճանապարհորդութեան միջոցին, հանդիպեց Աւստրալիային պատկանող Մարիանեան կղզիներին։ Ապա երոպացի ծովագնացները գտան Նոր-Գլինէան, բայց երկար ժամանակ նրանք չէին իմանում՝ արդեօք նա մայր ցամաք է թէ կղզի։ Այս հարցը լուծեց 17-րդ դարի սկզբում հսպանացի Տորեսը, որն առաջին անգամ անցաւ այժմ իր անունով կոչուող նեղուցը։

Բուն Աւստրալիական մայր ցամարն էլ գտնուեց 17-րդ դարի սկզբում (Տորեսից 1 տարի առաջ) Հուլիսնդացիների ձեռքով, որոնք և նոր մայր ցամաքը «Նոր Հոլլանդիա» կոչեցին։ Հոլլանդացի Տասմանը անցան Աւստրալիայի շուրջը հարաւից և հանդիպեց ճանապարհին մի կղզու, որ իր անունով Տասմանիա կոչուեց։ Ընդունելով այդ կղզին իրեւ հարաւային ծայրը մայր ցամաքի՝ Տասմանը աւելի առաջ անցաւ ծովով դէպի արևելք ու գտաւ նոր Զելանդիան և ուրիշ շատ կղզիներ Մեծ ովկիանոսում։

Սակայն այս բոլոր գիւտերը երկար ժամանակ երոպայում մնում էին անյայտ և 18-րդ դարի վերջում անգլիացի ծովագնաց Կուկը երկրորդ անգամ գտաւ Աւստրալիան։ Անցնելով Խաղաղ ովկիանոսը, նա գտաւ մայր ցամաքի արևելեան ափը։ Վերջում նա երկու անգամ ևս ճանապարհորդեց Մեծ ովկիանոսով ու գտաւ Նոր-կալիդոնիա և ուրիշ շատ կղզիներ։ Այսուհետեւ անգլիացիները գաղթել սկսեցին դէպի Աւստրալիա և ուսումնասիրեցին նրա բոլոր ափերը։ Միայն ներքին, անապատ տեղերը երկար ժամանակ մնում էին անյայտ։ Նրանք ուսումնասիրեցին միայն 19-րդ դարում, բայց շատ ճանապարհորդներ ոչընչացան այնտեղ քաղցից։

2. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐ, ԿԼԻՄԱՆ, ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ

Մեծ ովկիանոսի ափերի երկայնութեամբ Աւստրալիայում ընկած են լեռնաշղթաներ։ Այդ լեռները բարձր չեն։ Նրանց գագաթներից և ոչ մէկը ծածկուած չէ մշտական ձիւնով։ Այդ լեռները ամենից շատ բարձր են հարաւում, որտեղ նը-

րանք կոչւում են Կապոյ լեռներ և Աւստրալիական Ալպեր¹⁾։ Վերջիններիս գագաթը՝ Տառնսկնդ՝ ընդամենը մօտ 2 վերստ բարձրութիւն ունի։

Աւստրալիայի արևմտեան մասը ներկայացնում է բարձրաւանդակի վրայ քիչ վայրերում միայն բարձրանում են ցածրիկ լեռներ։

Այդ բարձրաւանդակի և Աւստրալիական Ալպերի միջի տարածութիւնը կաթսայան ման է, որի ամենացածր մասում գտնվում է Էյր լիճը։ սրա մակերեսոյթը և սաժէն ցածր է ովկիանոսի մակերեսոյթից։

Աւստրալիայի կլիման տաք է, համարեա կէսը գտնվում է արեաղարձային գօտում, իսկ մնացած մասը—բարեխառն գօտում։ Եւ որովհետեւ Աւստրալիան գտնվում է հարաւային կիսագնդում (իսկ մեր երկիրը՝ հիւսիսային կլսագնդում), ուստի տարուայ եղանակները այնտեղ մերինին հակառակ ժամանակ են ընկնում։ Ամենատաք ամիսներն են Աւստրալիայում գեկտեմբեր, յունուար և փետրուար, ամենացուրտ ամիսները՝ յունիս, յուլիս և օգոստոս։ Ամառ ժամանակ Աւստրալիայում շատ շոգ է լինում, մանաւանդ շատ տաք է լինում բայց ցամաքի միջին մասում, որտեղ համարեա այնպիսի շոգեր են լինում, ինչպէս Սահարայում։ Չմեռը Աւստրալիայում զով է լինում։ Սառնամանիքը այնտեղ շատ հազուագէպ բան է, այն էլ արեաղարձից հարաւ։ ձիւն գալիս է միայն Կապոյ լեռների և Աւստրալիական Ալպերի գագաթներում։


Տամանիա կղզին մի փոքր աւելի ցուրտ է մայր ցամաքից, բայց այնտեղ էլ ամենացուրտ ամսուայ (յուլիս) եղանակի տաքութեան միջին աստիճանն 8 է։

Մթնոլորտային տեղումներ Աւստրալիայում ընդհանրապէս քիչ են թափւում։ Լաւ ուղղվում են նրա ափերը միայն, այն էլ ոչ բոլորը, այլ միայն այն ափերը, որոնք ողողուում են տաք հոսանքներով։ Անձրևներ՝ բերում են այն քա-

¹⁾ Աւստրալիական Ալպերի գագաթները ծածկուած են խոտով։ բոլոր գաթաթներն էլ կարելի է բարձրանալ ձիով։ դրանից հէնց երևում է, որ նրանք շատ էլ նման չեն իսկական, այսինք երոպական Ալպերին, որոնք ծածկուած են մշտական ձիւնով և սառցարաններով։

միները, որոնք փչում են ծովից ամառ ժամանակ, երբ մայր ցամաքը աւելի է տաքացած լինում, քան նրան շըզապատող ծովը:

Ամենից շատ անձրև բերում են արեւելեան քամիները: Այդ պատճառով էլ Աւստրալիայի արեւելեան ծովափում ամառ այնպիսի առատ անձրևներ են գալիս, որ յաճախ հեղեղներ են գոյանում: Բայց սարերն անցնելով՝ այդ քամիները աւելի չորանում են և սրեմութք գնալով՝ անձրևներ քիչ են գալիս:



Նկ. 87. Մթնոլորտային տեղումները բարձրումը Աւստրալիայում: Սլաքները ցոյց են տալիս այն քամիները, որոնք ամենից շատ մթնորտ, տեղումներ են բերում:

Աեր քիչ կան, եղածներն էլ սակաւաջուր են: Պատճառը իհարկէ այն է, որ Աւստրալիայի կլիման չոր է: Ամենամշանաւոր գետն է՝ Մուրրէյ: Չոր ժամանակ նա ովկիանոս հազիւ է հասնում, այն էլ իբրև փոքրիկ և նեղ գետակ: Մուրրէյը շատ վտակներ ունի, որոնցից մէկը՝ Դարլինգ՝ համարեա երկու անգամ աւելի երկայն է, քան ինքը Մուրրէյը, բայց չոր ժամանակ փոխում է չհոսող բազմաթիւ լճերի:


Աւելի սակաւ ջուր ունեն ներքին Աւստրալիայի գետերը, որոնք «կրիկ» են կոչում: Նրանց հունը տարուայ մեծ մասում մնում է չոր, միայն կարճ ժամանակով, անձրևների միջոցին, նրանցով ջուր է հոսում, այդ ջուրն էլ կորչում է կամ

աւագուսներում և կամ աղի լճերում: Ամենաերկայն կրիկն է՝ կուպեր, որ թափուում է էյր լիճը:

Լճեր ևս քիչ կան Աւստրալիայում: Նրանք համարեա բոլորն էլ աղի են, նրանցում ջուր լինում է միայն այն ժամանակ, երբ կրիկները բերում են. իսկ սովորաբար այդ լճերի յատակը ծածկուած է լինում կամ տիղմով և կամ չոր աղի շերտով:

3. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՐՀԸ


Աւստրալիայի այն մասերում, ուր շատ անձրև է գալիս, աճում են անտառներ. իսկ ուր սակաւ անձրև է զալիս՝ այնտեղ տարածւում են տափաստաններ և անապատներ:



Նկ. 88. Բուսականութեան տարածումը Աւստրալիայում:


Խիտ չեն, ոչ էլ խճճուած լիանոսներով և բաղկացած են զլխաւորապէս էւկալիպտներից: Այս ծառերի տեսակներից մի քանիսը տհագին բարձրութեան են հասնում (մինչև 70 սաժ.): Բայց ընդհանրապէս՝ էւկալիպտների անտառները աւելի բարձր չեն, քան մայրի և կաղնի անտառները մեզնում:

Այս անտառներում սակաւ ստուեր է լինում, որովհետեւ էւկալիպտներնօսը են և նրանց տերենները խիտ չեն, տերեններ լինում են ծառի միայն վերին ձղների վրայ, այն էլ յաճախ դէպի վերև ուղղուած: Արեգակի ճառագայթները թափանցում են մինչև գետին, որ խոտով է ծածկուած: Այդ անտառները նման են պարկերի կամ ծառուամարգագետինների: Այդ անտառներով, ուր կամենաք, կարիի է կառքով երթալ:



Նկ. 89. Եւկալիպտների:

են անապատներ, —քարքարոտ կամ աւազոտ: Մշակովի բոյսեր Աւստրալիայում —շատ քիչ կան, իսկ մինչև եւրոպացիների այնտեղ կամ գաղթելը ամենեն չկային:




Նկ. 90. Աւստրալիական շրջանի կենդանիներ:

Գետակների ափերին, էւկալիպտների անտառների մէջ, պատահում են ծառանման ձարխութերի թփուտներ:

Մեծ ովկիանոսից աւելի ու աւելի հեռանալով էւկալիպտների անտառները սակաւանում են հ, վերջաղէս փոխում են խոտով ծածկուած տափաստանների: Աւելի հեռու արևմուտքում, կուպերկրիկից այն կողմը, Աւստրալիայի ընդարձակ տարածութիւններ ծածկուած են խոտով և թփերով:

Աւստրալիայի ամենաչոր տեղերում գտնում են անապատներ, —քարքարոտ կամ աւազոտ: Մշակովի բոյսեր Աւստրալիայում —շատ քիչ կան, իսկ մինչև եւրոպացիների այնտեղ գաղթելը ամենեն չկային:

Կենդանական աշխարհը Աւստրալիայում բոլոր ովկին այլ է, քան միւս աշխարհամասերում: Սմբակաւոր կենդանիներ, մինչև եւրոպացիների գաղթելը, այնտեղ ամենեն չկային, Միանգամայն բացակայում էին նաև կապիկներ: Գիշակերներից կար միւսոց զինգո շունը: Ընդհանրապէս Աւստրալիայում բացակայում էին այն կենդանիներից շատերը, որոնք կան ամեն տեղ՝ միւս աշխարհամասերում: Բայց զրա փոխարկն Աւստրալիայում շատեն տարածուած պարկաւոր կենդանիները՝ այսպէս կոչում են նըրանք այն պատճառով, որովհետեւ փորի տակ պարկ ունեն, որի մէջ իրենց ձագերին են պահում: Ամենատարածուած պարկաւոր կենդանին է՝ կենդութերու, որմիքանիտանեակտեակների է բաժանում:



Նկ. 91. Աւստրալիական շրջանի կենդանիներ:

Աւստրալիայի անտառներում և անփաստաններում այրում են շատ թռչուններ, մանաւոնդ թռոթակներ, որոնք մի քանի հազարից բարկացած երամներով են թռչում: Արևադար-

ձային անտառներում յաճախ պատահում է զեղեցիկ քնարահանութեալ, տափաստաններում՝ իմու-Ձայլամը։ Ընտանի կենդանիներ մինչև եւրոպացիների գաղթելը չկային Աւստրալիայում։ Իսկ եւրոպացիները բերին այնտեղ իրենց բոլոր ընտանի կենդանիները, որոնցից ներկայումս Աւստրալիայում շատ կան, — մասնաւոր ոչխար, եղջիւրաւոր խոշոր կենդանիներ և ձի։

4. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒԽԻՆԸ

Աւստրալիան ունի ընդամենը 5 միլիոն բնակիչ։
Համեմատաբար խիտ բնակութեած է նրա միայն արևելեան ծայրը, որ յարմար է երկրագործութեան և անտառապահութեան համար։ Այստեղ է ապրում Աւստրալիայի ամբողջ ազգաբնակութեան $\frac{4}{5}$ մասը.

Նկ. 92. ԿԵՆԴԱՆԻ



Չոր տափաստանները անմարդաբնակ են համարեա այնպէս, ինչպէս անապաները։


Ազգաբնակութեան ամենամեծ մասը պատկանում է սպիտակ ցեղին և բաղկացած է եւրոպայի գաղթականներից (գլխաւորապէս անգլիացիներ)։ Նրանք տիրապետել են ամբողջ Աւստրալիան և ապրում են գլխաւորապէս նրա ամենաարերը՝ մասերում։

Իսկ Աւստրալիայի ընիկները — սև ցեղին պատկանող վայրենիներ — կամ ոչնչացրուած են և կամ քշուած են զէպի ամենաարերը՝ վայրերը։ Ներկայումս ու աւստրալիացիների թիւը հաշւում են մօտ 200 հազար։

5. ԱԻՍՏՐԱԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻՆԵՐԸ




Նկ. 93. ՔԱԿՈՒԹԻՒԽԻՆԸ



Նկ. 94. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ

Աւստրալիայի մայր ցամաքի վրայ գտնւում են անգլիական 5 գաղութներ։ — Վիկտորիա, Նոր-Հարաւային Ռուսա, Քվինսլենդ, Հարաւային Աւստրալիա (հիւսիսային երկրամասը հետք) և Արեւմտեան Աւստրալիա։ Տամանիայի հետ միասին՝ այս գաղութները կազմում են մի և Աւստրալիական դաշնակցութեան գլուխ կանգնած է անգլիական ընդհանուր նահանգապետը, բայց իրօք գաշնակցութիւնը համարեա անկախ է և կառավարում է իր երկրի ժողովրդական ներկայացուցիչների (ընդհանուր պարլամենտ) միջոցով հրատարակուող օրէնքներով։ Դրա հետ միաժամանակ՝ ամեն մի գաղութ ունի — ինչպէս Հիւսա, Ամերիկանագներում — իր առանձին կառավարութիւնը, իր օրէնքները և նահանգապետը, որ նշանակւում է Անգլիայի թագաւորի կողմից։ Ամենից շատ բնակչիներ ունի ամենաափոքը գաղութը — Վիկտորիան,

ապա՝ նոր հար. Ուէլսը և Քվինսլենդը, Այդ գաղութներում ամենից շատ զարգացած են երկրագործութիւնը, անասնապահութիւնը և հանքագործութիւնը:



Ակ. 95. Աւստ. և Անգլ. համեմատական մեծութիւնը: Պարճներով անասուններ: Այդպիսի անասնապահների ազարակները կարծէր ամբողջ գիւղեր լինեն, որոնցում բացի բընակութեան համար յատկացրուած աներից կանակներ մեծ շէնքեր՝ բուրդ, կաշի և նման բաներ պահելու համար: Շատ ագարակների մօտ փորուած են արտէզին ջր հորներ: Իբրև հովիւ ծառայում են սովորաբար կիսավայրենի աւստրալիացիները:

Աւստրալիայի սարերը հարուստ են ու սկզբ, որի արդիւնաբերութեամբ աւստրալիական գաղութները մրցում են նոյն խոկ



Ակ. 96. Արտէզեան ջրերը:

Միացեալ-Նահանգների հետ: Բացի ոսկուց այնտեղ գտնիւթում են նաև շատ արծաթ և քարածուխ:

Գործարաններ Աւստրալիայում քիչ կան և գործարանային արտադրութիւնների մեծ մասը բերուում է այնտեղ եւրոպայից ու Ամերիկայից: Բայց գրա փոխարէն այնտեղ առևտուրը մեծ է: Արտահանուում են՝ ոսկի, բուրդ, մորթիներ, ցորեն, միս, իւղ, նաև ձիեր և այլ անասուններ:

Աւստրալիայի գաղթականները ձեռնարկող ոգի ունեն և կրթուած ժողովուրդ են: Նրանք անց են կացրել Աւստրալիայի արևելեան մասում բազմաթիւ երկաթուղային գըծեր չոր վայրերում շինել են ջրամբարներ, արտէզեան ջրհորներ և արուեստական ճանապարհով ոռոգել են երկիրը: Իրենց կրթութեամբ նրանք մի փոքր միայն յետ են մնում ամերիկացիներից, —ունեն բազմաթիւ և բազմատեսակ գպրոցներ, հրատարակում են բազմաթիւ գրքեր, լրագրներ և հանդէսներ:

Աւստրալիայի ամենամեծ քաղաքները և նշանաւոր նաւահանգիստներն են: — Մելբուրն՝ Վիկտորիայում (500,000 բնակիչ), Սիդնեյ՝ Նոր Հար. Վալենում (500,000 բնակիչ) և Պորտ-Ադելայդիա՝ Հար. Աւստրալիայում (160,000 բն.): Այդ երեք քաղաքներում, նաև Տամանիայի Հոբարտ քաղաքում



Ակ. 97. Փողոց Մելբուրն քաղաքում:

կան համալսարաններ:

Սև աւստրալիացիների մեծամասնութիւնը, մինչև օրս էլ անց է կացնում թափառաշրջիկ որսորդների կեանք, արևադայլին անտառներում կենդուրու և ուրիշ որս փնտրելով: Յաճախ որս չգտնելով նրանք ուտում են սովուններ, օձ և այլն, երբեմն ուտում են նոյն խոկ մարդու զիակ: Ապրում են քարայրերում կամ ծառի ճղներից շինած վրաններում, վայրենիների թիւը հետզհետէ պակասում է, — մա-

սամբ այն պատճառով, որ նրանց աւելի ու աւելի են ձնշում սպիտակները, մասամբ էլ նրա համար, որ նրանց մէջ գոյութիւն ունի մանկասպանութեան սովորութիւնը.—թափառաշրջիկ կեանք վարելով դժուար է նրանց համար երեխաներին հետաները տանել տեղից-տեղ ուստի և յաճախ սպանում են նրանց:

ԱԻՍՏՐԱԼԻԱՅԻ ԿՂԶԻՆԵՐԸ

6. ԲՆՈՒԹԻՒՆԸ

Աւստրալիային են պատկանում բազմաթիւ կղզիներ. նրանք բոլորը միասին առած կոչւում են Ովկիանիա:

Սյդ կղզիներից քչերը միայն գտնուում են մայր ցամաքին մօտ. մեծամասնութիւնը ցըռւած է նրանից շատ հեռու՝ Մեծ ովկիանոսի մէջ, ուստի և այդ կղզիների բնութիւնը շատ է տարբերում մայր ցամաքի բնութիւնից: Կղզիները ընկած են խումբ-խումբ: Նրանց մեծ մասը ձգուած է հիւսիս-արևեմութից հարաւ-արևելք: Նրանցից շատերի վրայ գտնուում են հանգած և գործող հրաբուղիներ: Աւստրալիայի բոլոր կղզիները բաժանուում են երեք խմբի. 1) Մելանեզիա, որ բաղկացած է ցամաքային կղզիներից և ընկնում է Աւստրալիայի հիւսիսարևելեան կողմում. այդ կղզիներն են՝ Նոր-Գվինէա, (Բիսմարկի արշիպելագ, Սողոմոնի կղզիներ, Նոր-Հերբիտեան, Նոր-Կալէդոնիա և Ֆիջի.)—2) Նոր-Զելանդիա, որ բաղկացած է երկու մեծ կղզիներից, և 3) Պոլինեզիա, —այսպէս են կոչւում մասցած բազմաթիւ կղզիները)

Ամենամեծ կղզիներն են այդ բոլորի թւում՝ Նոր-Գվինէան (իր մեծութեամբ երկրորդ կղզին երկրագնդի վրայ), Նոր-Զելանդիան և Նոր-Կալէդոնիան: Մնացած կղզիները շատ փոքր են և տասնեակներով և կամ հարիւներով միասին կղզիների մի խումբ են կազմում:

Աւստրալիայի կղզիների մեծամասնութիւնը կորալլական ծագում ունի. օրինակ՝ Կարօլինեան, Մարշալեան և այլ կղզիներ:

Հրաբուղին ծագում ունեն օր. Պոլինեզիայի հետե-

ւեալ կղզիները—հաւայի (կամ Սանդվիչեան), Ընկերութեան, Սամօա, նաև Նոր-Զելանդիայի հիւս. մեծ կղզին:)

Նոր-Զելանդիայի հարաւային կղզին, նաև Նոր-Կալէդոնիան, Նոր-Գվինէան և Մելանեզիայի շատ կղզիներ ցամաք այլին ծագում ունեն: Հնում նրանք հաւանօրէն Աւստրալիայի հետ միացած են եղել: Այդ կղզիների վրայ գտնուում են բարձր լեռն աշղթաներ: Նոր-Զելանդիայում այդ սարերը ծածկուած են մշտական ձիւնով և սառցարաններով ու կոչւում են Հարաւային Սլայր (նրանց գագաթը՝ Կուկ սարը մօտ 3^{1/2} վերստ բարձր է):

Ովկիանիայի կլիման համարեա ամեն տեղ արեագալացին է, բայց ոչ շոգ, որովհետեւ հսկայական ովկիանոսը զովացնում է օդը: Ովկիանիայի գլխաւոր բամբիներն են՝ պտուսատները, որոնք ամբողջ տարին անընդհատ վհչում են պտուսատները, որոնք ամբողջ տարին անընդհատ վհչում են (հիւս. կիսագնդում՝ հիւսիս-արևելքից, հարաւային կիսագըն-դում՝ հարաւ-արևելքից). Նրանք շատ մեծ բանակութեամբ դում՝ հարաւ-արևելքից). Նրանք շատ մեծ բանակութեամբ մթնոլորտային տեղումներ չեն բերում, բայց բերածն էլ բաւականաչափ է:

Բուսական և կենդանական աշխարհները Ովկիանիայի արևմուտքում բաւական հարուստ են, բայց բարեկելք է գնում, այնքան էլ աղքատանում է: Նոր-Գվինէայի վրայ աճում են արեալարձային անտառներ և աղբարձում են շատ կենդանիներ, մանաւանդ պարկաւորներ և բազմազան թռչուններ: Նոր-Զելանդիան ծածկուած է մերձարեաղային մշտագալար անտառներով, բայց կենդանիներ քիչ կան այնտեղ: Ովկիանոսի մէջ ցըրիւ ընկած կղզիների վրայ վայրի աճող բոյսեր համարեա չկան, կենդանական աշխարհն էլ չափազանց աղքատ է:

Մշակովի բոյսերով բաւական հարուստ է Ովկիանիան. այդտեղ է կոկոսեան արմաւենու հայրենիքը, որ մինչեւ այժմ էլ տեղ-տեղ աճում է վայրի դրութեան մէջ:

Հնատանի կենդանիներից, մինչեւ եւրոպացիների գաղթելը, Ովկիանիայի բնակիչներին ծառայում էին միմիայն հաւը, շունը և խողը, այն էլ ոչ բոլոր կղզիների վրայ: Եւրոպա-

ցիները Ովկիանիայի կղզիները փոխադրեցին իրենց ընտանիքուր կենդանիներին. տուանձնապէս շատ կան ընտանի կենդանիներ այժմ Նոր-Զելանդիայի արօտատեղիներում:

7. ԱԶԴԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Ովկիանիայի ազգաբնակութիւնը բաղկացած է երեք՝ ու կ, դեղին, և ոպիտակ ցեղերից: Սև ցեղին են պատկանում՝ աւտորալիացիներին ցեղակից պապուան երը կամ մելաներ գիտացիները. նրանք ապրում են՝ Մելանզիա ընդհ. անուամբ



Նկ. 98. Պապուան:

ները և պոլինեզիացիները համարեա ոչնչով չեն տարբերում իրարից: Նրանց գլխաւոր զբաղմունքն է՝ երկրագործութիւնը. մշակում են՝ կոկոսի արմաւենի, հացի ծառ և զանազան արմտիք: Մեծ նշանակութիւն ունի նրանց համար գեռ ևս ձկնորսութիւնը: Մեծ Ովկիանոսը հարուստ է ձկնով, ծովային խեցեատիներով, կրիայով և այլն, որոնցից կղզիների բնակիչները շատ են որսում: Նրանք շնորհալի ծովագնացներ են և իրենց նաւակներով յաճախ հեռաւոր տեղեր են դնում:

Հաւայի կղզիների վրայ, ուր շատ չինացիներ և հապոնացիներ

կան դաղթած, դաշտերը ծածկուած են բրնձի և շաքարեղէզի տնկարաններով:

Նոր Զելանդիայում եւրոպայի դաղթականների գլխաւոր զբաղմունքները նոյնն են, ինչ որ մայր ցամաքի վրայ.— անասնապահութիւն, երկրագործութիւն և հանքագործութիւն: Նոր Զելանդիայի արօտատեղիներում արածում են շատ միշտի լիոններով ոչչիւար և եղջիւրաւոր խոշոր կենդանիները: Դաշտերում շատ լաւ ածում են ցորեն և եգիպտացորեն: Սարերում գտնուում են շատ ոսկի և քարածուխ:

Ովկիանիայի բոլոր գաղութների մէջ ամենանշանաւորը նոր Զելանդիան է: 100 տարի առաջ նա ընտանուած էր մարդակերներով, իսկ այժմ նրանց տեղում ապրում են կըրթուած և աշխատասէր մարդիկ (թուով մօտ 800 հազար), որոնք շատ բանում ամերիկացիներին են նման (ծագումով նրանք ևս, գլխաւորապէս, անգլիացիներ են): Ամբողջ Նոր Զելանդիան ծածկուած է այժմ երկաթուղային ճանապարհների ցանցով և նրա ափերի երկայնութեամբ երթևեկում են բազմաթիւ շոգենաւեր: Կղզու ափերին շինուել են քաղաքներ, որոնց մէջ նշանաւոր է Ռելինգտոն, որ գտնուում է Նոր Զելանդիայի հիւս. կղզու վրայ:

Թէպէտ Նոր Զելանդիան անգլիացիներին է պատկանում, բայց նա համարեա անկախ է, և կառավարուում է իր սեփական պարլամենտով, որտեղ ժողովրդից ընտրուած ներկայացուցիչները օրէնքներ են մշակում և հրատարակում իրենց երկրի համար:

Տեղացի բնակիչները, որ մաօրի են կոչւում, այժմ քիչ են թուով — մօտ 40 հազար: Նրանք մալայեան ցեղին են պատկանում և ընդունակ ժողովուրդ են: Նրանք բոլորն էլ բողոքական-քրիստոնեաներ են և ունեն նոյն իրաւունքները, ինչ եւրոպացի գաղթականները: Նրանց կենցաղավարութիւնը համարեա նոյնն է, ինչ սպիտակներինը:

Նոր-Գվինեյա ընդգրածակ կղզին համարեա ոչ մի նշանակութիւն չունի եւրոպացիների համար: Գաղթականութիւններ հաստատելու համար նա անպէտք է, որովհետեւ անառողջ

կլիմայ ունի. առևտրի համար էլ կարեոր նշանակութիւն չունի, որովհետև այնտեղ բնակուող պապուասները աղքատ են:

Չնայելով այս բանին՝ կղզին բաժանուած է եւրոպական երեք տէրութիւնների մէջ.—Նրա արևմտեան մասը պատկանում է Հոլլանդիային, հարաւ-արևելեան մասը՝ Անգլիային, վելհելմ կայսեր երկիրը (հարեան Բիսմարկի-արշվագելագի հետ) Գերմանիային:

Նոր-Կալեդոնիան ունի աւելի զով և միանգամայն առողջարար կլիմայ. բացի գրանից՝ նա հարուստ է մետաղներով, մանաւանդ նիկլելով: Այս կղզին պատկանում է ֆրանսիացին երին և նրանց համար ծառայում է իբր աքսորավայր:

Մնացած կղզիներից աւելի նշանաւոր են՝ Հաւայի կղզիները, որոնք պատկանում են չիւս. Ամ. Միացեալ-Նահանգներին: Այդ կղզիների վրայ արդիւնաբերում է շատ շաքար, չոնօլուր գլխաւոր նաւահանգիստը ծառայում է իբր հանդստատեղի՝ չիւս. Ամերիկայից Ասիա և Աւստրալիա կամ ընդհակառակը գնացող նաւերի համար:



Դրողի կողմից	3—4
Ա.—Ընդհանուր նկարագրութիւն	5—26
Մնեան Ասիա.—Ընդհանուր ակնարկ.—Փոքր Ասիա և Հայաստան.—Միջագետք.—Արաբիա.—Ասորիք և Պաղեստին.—Իրան.—Պարսկաստան.—Աֆղանիստան—Խիվա և Ռուսարա	26—43
Ռուսկան Ասիա.—Ընդհանուր ակնարկ.—Իբեր.—Արևելեան Թուրքեստան.—Մոնղիան	43—48
Միջն Ասիա.—Ընդհանուր ակնարկ.—Հընդաստան.—Հնդկաշխն.—Մալայեան Արշիկելագ.	48—61
Ղեան Ասիա.—Զինաստան.—Մանջուրիա.—Կորէա.—Եապոնիա.	61—77
Իրկաւ.—Ընդհանուր նկարագրութիւն.	78—90
Արիկայի առանձին մասերը,—Եղիպտոս.—Ատլասի երկներ.—Սահարա.—Հաբէշստան.—Մաւանների և արեաղարձային անտառների շրջան.—Եւրոպացիների գաղութները սաւանների և անտառների շրջանում.	91—110
Հարաւային Աֆրիկա.—Աֆրիկայի կղզիները Ամերիկա.	111—127
Հիւսիսային Ամերիկա.—Գրենլանդիա և Հիւսիս-Ամերիկեան Արշիկեան.	127—138
Կենդրոնական Ամերիկա.—Մեքսիկա.	139—142
Հարաւային Ամերիկա.—Վենեցուէլա և Գվիանա.	142—150
Բրազիլիա.	151—162
Աւստրալիա.	162—166

<i>Եթես</i>	<i>տող</i>	<i>սխալ</i>	<i>ուղիղ</i>	<i>դղի-</i>
9	1	ցած.	այլենիք	հայրենիք
16	13	վեր,	այլ.	այլ
17	14	ց.	Տանգըաները	Տունգըաները
46	4	ց.	Մոնղաներ	Մոնղաներ
92	16	ց.	ամբարգակները	ամբարգակները

ԱԶԲԻ ԸՆԿՆՈՂ ՎՐԻՊԱԿՆԵՐ

շուա
հիս
պա
շտ
իին
հետ

ասոց
ներսով
սիս-
լայր
ողի-
պնե-
րար,



22